



Բացարձակ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՌՈՒԵՑՏՈՒ
ԿԵՆՏՐՈՆ

© ՏԱՐԻ 1969 ՓԵՏՐՈՒՆԻ ԹԻՒՆԻ

digitized by A.P.A.K.@

باکین
 مجلة شهرية ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارتين كارنيك قزائجيا

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
 ԿՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԾՍԵՐ

ՎԱՐԻՔ ԽՄԱԳԻՐ
 Կ. ԱՍՏՈՒՆԻ
 ԽՄԱԳԻՐ
 Գ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԳԱՄՆԵՐ
 Ե. ԳԵՂԱՐԴԻ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Ն. ՊԱՐԵՆԻԵԱՆ
 Ժ. ԱԹՔԱՐԵԱՆ

ՀՈՄԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ
 † ԵՒ. ՊՅՍԱԶԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ն. ՊԵՇԻԿՈՒՇԼԵԱՆ
 ԱՐՄԱՆՏ
 ՍՕՍԵԱՑ ՏՂԱՆ
 Ա. ԵՐԿԱԹ
 Ա. ԵԱՂՈՒՊԵԱՆ
 Ռ. ԳԱՌՕՆԷ
 Ա. ԶԱՐԵՈՒՏԵԱՆ
 Ն. ՎԻՐԱՊԵԱՆ
 Ղ. ԺԻՐԱՅԻՐ
 ՇԱՀԱՆԴՈՒՆՏ
 Ա. ՏՕՆՈՑԵԱՆ
 Ն. ՊԵՐՊԷՐԵԱՆ
 Յ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Մ. ԻՇԽԱՆ
 Բ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ
 Ա. ՕՐԱԳԵԱՆ
 ՊԷՐՆԱՐ ՓԻՎՕ
 Պ. Ս.
 Կ. Ս.
 Լ. Մ.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ը. ՅԱՐԻ, ԲԻԻ 2

ՓԵՄՐՈՒԱՐ 1969

ՊԷՐՈՒԹ

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԱՇԵԼԵԱՆ

ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՔ ԿԵՆԴԱՆԵԱՑ ԵՒ ՄԱՐԴՈՑ ՄԻՋԵՒ

Կենդանիներու ժողով կար բացատրանի մը մէջ:

Անտառանարնակներէն եկած էին մէյ մէկ ներկայացուցիչ:

Հետեւեալն էր միակ խնդիրը օրակարգի:

– Ի՞նչ տարբերութիւններ կան իւրաքանչիւր կենդանիի եւ մարդուն միջեւ:

Առիւծը իբրեւ դահակալ զվտաղես, եղած էր նախազահ: Բազմած էր մեծ քարի մը վրայ:

Ամէն մէկ կենդանի՝ պարտաւոր էր ըսել, թէ ի՞նչ էր, ըստ իրեն, մարդուն եւ իր միջեւ զոյութիւն ունեցող տարբերութիւնը:

Նախազահին արտոնութեամբ, ներկաները նստած էին գետինը, իսկ թըռչունները թռած էին ծառերուն ստորին ճիւղերուն վրայ:

Պատգը պարտաւոր էր ելլել սուգի: Ապա, վերստին նստիլ, խոնարհելէ ետքը:

Առաջին անգամ խօսեցաւ նախազահը ու ըստւ.

Առիւծը – Մենք առիւծ ենք: Ամէն առիւծ առիւծ է: Մարդոց մէջ ալ կան առիւծներ, ըսել կ'ուզեմ պետեր, քաղեր, շերտներ, բայց, զժբախտաբար, անոնց մէջ կեղծերը չափազանց շատ են:

Օճը – Սատանան մէկ անգամ երեւցաւ կերպարանքով օճի: Բայց անկէ ի վեր, սատանան ամէն օր կ'երեւի կերպարանքով մարդու: Ատառած ստեղծեց մարդը, մարդն ալ ստեղծեց սատանան: Եւ մարդն ու սատանան նոյնացան: Մարդը եղաւ սատանային պէտ խորագէտ, ու սատանան եղաւ մարդուն պէտ անխելք: Մարդուն խորագիտութեան արդիւնքներն են իր դիւտերը: Իսկ իր

անխելք ըլլալուն պատճառով են իր ողբերգութիւնները, ինչպէս վէճեր, ատեւլութիւններ, թշնամութիւններ, դաւեր, պատերազմներ: Զգուշացէ՛ք մարդէն: անոր դաւերէն, թակարդներէն ու թոյներէն: Մարդն ալ ինծի պէս թունաւոր է: Բայց կան տարբերութիւններ: Իմ թոյնս մէկը կը մահացնէ քիչ մը շարժաբերով, մինչդեռ մարդուն թոյնը կը մնայ միշտ տանջող եւ անբուժելի: Ատեւէ զատ, իմ թոյնս կը ճառագէ իրրեւզեց, բայց մարդուն թոյնը օդուտ չունի ո՛չ մէկ բանի: Մարդուն արտադրած թոյններով թունաւորուած է սչխար՛ը: Մարդը ինձմէ կը վախնայ, բայց ես շատ աւելի կը վախնամ մարդէն: Մեծ Վարդապետը իժերուն իժ չըսաւ, բայց մարդոց «իժ» ըսաւ: Ես վերջնացուցի:

Փիլիք - Մարդը դետնաբարձ գտնած մըն է: Որպէսզի մարդը մեծութեան շուրթ մը ունենայ, պէտք է պետնէն վեր բարձրանայ: Անուազն պէտք է ելլէ քամակիս վրայ: Տարբերութի՛ւնը: Փիլիքը մեծ է, մարդը՝ փոքր: Երանի միայն փոքր ըլլար. է նաև փոքրոզի:

Ազուէսը - Ի՞նչ է տարբերութիւնը ազուէսին ու մարդուն միջեւ: Ես ալ, ան ալ հաւաստէր ենք, հաւամու ենք, խենթ ենք հաւու: Ողբերգական տարբերութիւնը ա՛յն է, որ մարդը հաւեր ունի, մինչդեռ ես մեացած եմ անհաւ: Անշուտ կան մարդիկ ալ, որոնք ազուէսիս պէս հաւազուրկ են, բայց հաւաստէր մարդիկն ալ ունին հաւերու հաւաքածոյ: Մարդը երջանիկ արարած մըն է, քանի որ ունի հաւոց, ու կրնայ տմէն օր ճաշակել հաւ: Ես պրծայ:

Գալլը - Անշուտ տարբերութիւն մը կայ գայլին ու մարդուն միջեւ, բայց այդ տարբերութիւնը ի նպաստ մարդուն չէ: Մարդիկն ալ, մենք ալ կը սիրենք ուտել ոչխարները: Տարբերութիւնը սա է, որ մենք դայիերս յարձակելով կ'ուտենք, իսկ մարդիկ ոչխարները պաշտպանելով կ'ուտեն: Կը կարծեմ թէ սոպետութիւնը մե՛ր ըրածն է, միշդեւ մարդոց ըրածը կատարեալ կեղծաւորութիւն է:

Կոկորդիլոսը - Կոկորդիլոսիս ու մարդուն մէջ գտնուած տարբերութիւնը մեծ բան մը չէ: Ես երկակենցաղ եմ. մարդն ալ երկակենցաղ է: Ես կուլամ, մարդն ալ կուլայ: Միակ տարբերութիւնը մեր մէջ ա՛յն է, որ մարդը կը ժպտի, եւ իբր թէ ես չեմ ժպտիր: Աւելի ճիշդը, մարդուն ժպտը մակերեսային ըլլալուն՝ կ'երեւի: Մինչդեռ իմ ժպտս խորքիս մէջ ըլլալուն՝ չ'երեւիր: Իմ ժպտս կը տեսնեն այն մարդիկը միայն, որոնք կլլուած են ինձմէ: Այս բոլորէն զատ, մարդը մորթա կուլէ, իսկ ես կ'ուզեմ մարդուն մարմինը ամբողջութեամբ:

Բուձ - Ես ալ կրնամ արտայայտուիլ...

Առիւծը - Ատ ինչ դարմանալի հարցում է: Նոյնիսկ նախատակսն է հարցումդ, հանդէպ այս պատուարժան ժողովիս, ուր ազատութիւն ու հասարակութիւն կան խօսելու եւ ճառելու: Սա չէ ժողով մարդոց, ուր կան բռնութիւն, ճնշում, հայհուց ու հարուած եւ քիսախընդրութիւն: Խօսէ՛, բուձ:

Բուձ - Ես տարբերութիւն չեմ տեսներ մեր բոլորիս ու մարդոց միջեւ, քանի որ անոնք ալ մեզի պէս կ'ապրին ու կը մեռնին: Մնացեալը մանրամասնութիւն է:

Ազուսը - Մարդիկ կ'ապրին, բայց մենք կը քաշջուրինք: Մարդիկ կը մեռնին, իսկ մենք կը սատկինք: Քի՛չ է միթէ տարբերութիւնը:

Առիւծը - Ազուս, դուն ալ ալլապէս նախատեցիր պատուարժան ժողովիս՝ յարգարժան անդամները: Սա թեւաւորները ե՞րբ պիտի սորվին զենցաղագիտական կանոնները:

Էշը - Եղբարք պատուականք, ես կը խոստովանիմ խոնարհաբար իմ ինքնութիւնս՝ թէ ես է՛լ եմ: Այո՛, այո՛, էշը ե՛ս եմ, բայց իշութեան ամէնէն խոչորները մարդիկն են որ կ'ընեն ամէն մամանակ, ամէն օր, ամէն տեսակ ու ամէն տեղ: Այս է լոկ տարբերութիւնը. իշոց ու մարդոց միջեւ:

Վագրը - Իբրևան նախատինքը՝

մեր ու մարդոց մէջ նմանութեան եզրեր գտնելն է: Մենք ազնուական այսբանանք ենք, մինչդեռ մարդը բանական է, քանի որ կ'աշխատի իրբնու դերի: Մենք կ'ապրինք մեր քաղաքներում, իսկ մարդը կ'ապրի իր վատութիւնով: Ո՛չ մէկ նմանութիւն: Ես կը կրկնեմ. բուն նախատիքը նմանութիւններ ներկայացնելն է:

Յովազը - Կը ձայնակցեմ բռնիք վարդին: Ո՛չ մէկ նմանութիւն՝ մեր ու մարդոց միջև: Մարդիկ կը պարծենան որ միտք ունին: Պարծենալով կ'ըսեն նաև, թէ ունին Հոգի: Մենք դերձ ենք այդ կարգի փորձանքներէ: Մարդոց մարմինը արդէն ախտաբու է նիթուայ: Հիւանդ են Հոգիով ալ, մտքով ալ: Միթէ մենք ունինք Հոգեկան Հիւանդութիւններ: Միթէ մեր մէջ կա՞ն լսելագործներ: Տեսնուած բան է որ կենդանի մը խնթեմայ: Մենք առողջ ազնուականներ ենք. իսկ մարդիկ աւմիկներ են, երիցս ցաւազար:

Վագրը - Իշխան Յովազ, կը ծափահարեմ քեզ:

Մուկը - Մուկին ու մարդուն տարբերութիւնը ոչինչ բան է: Մուկը կ'ուտէ կրծելով, մարդը կ'ուտէ կրծով:

Կապիկը - Կապիկները մարդ չեն, բարեբախտաբար: Բայց մարդիկ կապիկ են: Կապիկին ու մարդուն մէջ եղած տարբերութիւնն ալ սա է - Կապիկին պոչը իր ետեւն է, մինչդեռ մարդուն պոչը իր առջեւն է:

Արծիւը - Օգոտափառ կայսր առիւծ, իշխաններ, բռնիներ, սեպուհներ ու կուսակալներ կայսերական, դուք կը կարծէք, թէ մեր ու մարդոց մէջ տարբերութիւնը մեծ բան մը չէ: Ձեր մէջ նոյնիսկ կարծողներ կան, թէ դուք գերընտիր էք մարդոցմէ: Մինչդեռ տարբերութիւնը անհուն է: Եւ դուք կը ժպտիք անհեթեթ յաւակնութեամբ ձեզ նմանցնել գերազանց արարածին, որ ընտրեալ տէրն է տիեզերքի: Կը ճանչնա՞ք արդեօք դուք ձեզ: Դուք թշուառական շորքոտանիներ էք, բոնատարկուած անտառի մը մէջ: Աշխարհի

սկիզբէն մինչեւ այսօր ո՛չ մէկ քայլ յառաջացած էք դէպի քաղաքակրթութիւն: Ինչ որ էիք, մնացած էք նոյնը, այսինքն վայրի: Եւ եթէ մեր մէջէն եղան ընտանեցածներ ու մարդուածներ, տնոնք ալ շնորհիւ մարդոց: Կենդանութեան պարտէզներու եւ կրկնակերպ մէջ է ու կրնաք կրթութիւն որոշ չափով, եւ այդ կը պարտիք զստագեղին ու օրհնեալ խաբարդանին:

Առիւծը - Կը բաւէ՞... Լո՛ւ, Հայհոյի... Լո՛ւ, լիբբ...

Արծիւը - Մօտ է վախճանը խօսքիս: Այստեղ մնացողները նոյն գիշատիչներն էք միշտ ու միեւնոյն բարբարոսները: Դուք մեր ծննդավայր անտառին մէջ վախով, զգուշութեամբ կը շրջիք: Կը վախնաք իրարմէ: Կը դողաք որ թակարդի մէջ կ'իջնաք: Եւ լեղապատառ կը փախչէք, երբ ձայն լսէք Հրացանի: Մինչդեռ մարդը կը տիրապետէ ի՛նչ ցամաքի վրայ, թէ՛ ծովուն, թէ՛ օդին մէջ: Ու մտադիր է երթալ մինչեւ մոլորակները: Ահա անհուն տարբերութիւնը: Ծանշե՞ք դուք ձեզ, երկիրներ, ու եղէ՞ք Համեստ, եւ Հպատակ մարդոց: Ահա վերջացուցի:

Առիւծը - Ահաւոր ու աննախընթաց նախատիք: Անբարագրելի սխալ գործեցինք՝ թեւաւորները հրախրելով մարդի, մանաւանդ իրօք տալով անոնց: Թեւաւորները չեն վախնար Հայհոյիէ, որովհետեւ օգին մէջն են ու թեւածելով կը փախչին, կը հեռանան: Բայց իրական անվախը ա՛ն է, որուն ոտքերը գետնին վրայ են: Ահա թէ ի՞նչպէս արծիւը կը Համարձակի վարկարկել ձեզ, ու նախատել թագաւորս:

Խլուրդը - Թագաւորը ա՛ն է, որ վերը թառած է: Թագաւորը թեւածողն է:

Առիւծը - Ո՞վ է խօսողը...

Ազուկը - Նլուրդը:

Առիւծը - Մէկը վերէն, միւրը վարէն կը նախատեն թագաւորս: Մէկը օդը կը բարձրանայ ու կը կորուսի, միւրը գետնին տակը անցած, կ'ապաստանի գերեզմանի մէջ: Նլուրդ տեսողը թո՛ղ

ճգմէ, մէկ հարուածով: Իսկ թեւաւոր-
ները պէտք է թեւատել: Անոնց փե-
տուրները փետրատել պէտք է: Ամէն
մէկ փետուր՝ ունի ուժը գրիչի: Յա-
ւիտեան մոռցուելու չեն այս նախա-
տինքները, արդուած առիւծիս, թագա-
ւորիս:

Գետնառիւծը - Թագաւորութիւնը
ժամանակագրէպ է, որով ծիծուղիլի:
Իսկ առիւծ ըլլալը հասարակ բան է,
բանի որ ես անգամ առիւծ եղած եմ,
կոչուելով գետնառիւծ:

Առիւծը - Բայց սա՛ մեր տանգա-
կան պատմութեան մէջ բնաւ չլիջուած
ապստամբութիւն է եւ ո՛րքան լրբանի:
Կը հրամայեմ - Ժողովականք, այսու-
հետեւ ձեր աւագադոյն գործը ըլլայ
բնաջնջել բոլոր թեւաւորները, ինչպէս
նաեւ բոլոր գետնառիւծները ու խլուրդ-
ները անխտր: Զինայել ոչ մէկուն:

Արծիւ - Ո՛վ վեհապետ առիւծ, հի-
մա յայտնեցիր որ միահեծան թագաւոր
ես անկարող: Յեղասպանութեամբ պի-
տի խարանուխ:

Առիւծը - Ես նախագահ ալ եմ, եւ
մտադիր եմ հռչակել Հանրապետու-
թիւն:

Խլարդը - Անշուշտ դիքտատորա-
կան Հանրապետութիւն:

Գետնառիւծը - Անտարակոյս միա-
պետական Հանրապետութիւն:

Արծիւը - Անկասկած բռնակալա-
կան Հանրապետութիւն:

Առիւծը - Պէտք է բնաջնջել երեք
ցեղ: Յեղասպանութիւնը անհրաժեշտ-
ութիւն է:

Ձայնիք - Այո՛, արմատէն բնաջնջե-
լի... Լակել լիբրերուն արիւնը... Լա-
փատել լիբրերուն միսերը...

Բորեմիմ - Ծո՛ւտ գործի, քանզի
քաղցած եմ յոյժ: Թէեւ այդ ցեղասպա-
նութիւնները դժուարաւ պիտի կշտոց-
են զիս:

Արծիւը - Դուք դազաններդ մէկ
բանով կրնաք պարծենալ որ տարբերու-
թիւն չունիք մարդոցմէ: Ձեր ժողո-
վով, ձեր սպանալիքներով, ձեր սուտ
ազատութեամբ, ձեր կեղծ Հաւասարու-

թիւնով, ժողովին վերջաւորութեան ալ
վերնաք զիրար հարուածել, վիրաւորել,
յոշոտել: Ժողովէ մը ետքը, արդար է
ունենալ ճոխ ճաշկերոյթ:

Բորեմիմ - Կ'ուզենք ճոխ ճաշկե-
րոյթ, քանզի քաղցած եմ յոյժ: Ընենք
նման մարդոց:

Արծիւը - Մոտք բարեաւ, կայսե-
րական անօթիներ եւ Հանրապետական
ժարախներ:

(Եւ Արծիւը քաղաւորաբար թեւա-
ծեց ու հեռացաւ: Տիրեց լալխտաւար
լուրբիւն: Գաեակալ գլխապետը ի վեր-
ջոյ խօսեց լուրբիւնը, իրրեւ եզրակա-
ցութիւն առաջարկելով հետեւեալ քա-
նաձեւը.)

- Մենք կենդանիներս շատ աւելի
մարդկային ենք, քան մարդիկ: Այս է
տարբերութիւնը կենդանեաց ու մարդոց
միջեւ:

:(Փազովը միաձայնութեամբ ընդու-
նեց քանաձեւը, ու ժողովականները յո-
տընկալս՝ երկարօրէն ծափահարեցին,
ու ցրուեցան խոնարհելով առիւծին առ-
ջիւ: Վերադարձի ցամբուն վրայ, բորե-
միմ տխրօրէն՝ վագրին ըսաւ.)

Բորեմիմ - Անօթի փորով եկանք
ժողովի, քաղցած փորով ալ կը վերա-
դառնանք ժողովէն: Մարդկային ենք ե-
ղեր...: Մարդիկ ժողովէն ստաջ կամ
ժողովէն ետքը, անպատճառ կ'ուտեն:
Ճառելէ ստաջ կամ ճառելէ ետքը, կը
ճաշակեն: Մենք աւելի քան մարդկային
ենք եղեր...: Եթէ այդպէս է, ժողովը
վերջանալու էր կռիւով եւ ութ տասը
պարարտ դազաններ տապալելու էին,
որպէսզի լեցնելով մեր փորը՝ փա-
տէինք որ աւելի քան մարդկային ենք:

Վագրը - Թէեւ քաղցած, բայց դո՛ւ
եղիք որ ողջամբ կը վերադառնաս մար-
դակերպներու ժողովէն:

(Արծիւը իցաւ վար, ու վագրիմ եւ
բորեմիմ վրայէն անցած պահուն շան-
թեց.)

- Բազմակողմանի ոճրագործները
սկսած են խօսիլ ու գործել յանուն
մարդկութեան, ըլլան երկրտանի թէ
չորքոտանի: Ն. Պ.

Ա Փ Ս Ո Ս Ո Ւ Մ Ե Մ

Ափսոսում եմ ես.
 - Բարեւի համար որ քեզ չտուի,
 Համբոյրի համար որ մեռաւ շրթիս,
 Քէնի համար որ մնաց իմ սրտում
 Ու միջեւ հիմա իմ սիրտն է ուտում:
 Պարտութեան համար որ ես կրեցի
 Միշտ ինքս իմ դէմ մզած պայքարում.
 Ձեկածի համար որ դեռ գայ պիտի,
 Բանի համար այն, որ պիտի լինէր ու չեղաւ բնաւ,
 Եւ նրա համար որ, աւա՛ղ, եզաւ ու պիտ' չլինէր.
 Անմեղ մեղքերիս համար չգործած,
 Եւ նրա համար, որ փլաւ յանկարծ,
 Ընկա՛ւ, կոտորուեց.
 - Դա՛ իմ սիրտն էր,
 Դա՛ քո սիրտն էր,
 Դա՛ մեր սիրտն էր:
 Ափսոսում եմ ես
 Իմ չափսասալու, չանսալու համար:

ԱՐՄԱՆՏ

ԹԷԿՐԱՆ

Ա Լ Ի Ք Ն Ե Ր Կ Ա Ն ...

Սոսնայ Տգան

Ալիքնե՛ր կան ծովերու մասյլ ու խռովուն եզրե-
 բուն, բարձունքներու վերեւ եւ անդունդներու խորը:
 Ալիքնե՛ր կան հեռակայ թէ մտաւոր ձայներու,
 Խեղճուող ազազակներու, ցայտուն քրքիչներու, տըր-
 տում ու ոգիւնը երգերու մէջ:
 Ալիքնե՛ր՝ շառագունեալ թէ մշուշապատ արեւծա-
 գերու եւ բռնկող մայրամուտներու խորը:
 Ալիքնե՛ր կան թանձր կամ նրբին վարագոյրներէ
 անդին: Ու ալիքնե՛ր մարդերէն ներս, եւ պայծառ թէ
 հիւանդ լոյսերու ներքեւ:
 Ալիքնե՛ր, ալիքնե՛ր ցցուն կամ նկուն կուրծքե-
 բու տակ, ժպտուն թէ արտառուող աչքերու մէջ, բռ-
 ցէ ու ժպիտ բիրերու վրայ:
 Ալիքնե՛ր ... Մի՛շտ նայն բարձրացող, կլանող ու
 փշրուող ալիքները:
 Եւ ամէն տեղ՝ բոլոր նաւարկումներուն հազիւ
 լսելի ազազուիք, - վարդերանց թէ տարածամօրէն
 տժգունեալ երազներու...:



Ա՛փը:
 Ո՞վ կրցեր է հասնիլ ասիք:

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

Փակեցի դուռս. բայց հովին
Շունչը մնաց սեմին վրայ
Ռսկիին հետ արեւին.
Անցորդի մ'ալ շուփին հետ.
Ան կը տանէր դէպի գիշեր երազի
Հունձն իր սրտին մէջ պահած:



Կը տեսնեմ որ դուն կ'իջնես
Արշալոյսին սանդուխէն
Ձեռքերդ լեցուն պտուղներով լեռնային,
Եւ խիճերով՝ որ չեմ ոտքերդ արիւնած՝
Ստուերիդ մէջ ֆազցըրացած ըլլալով:
Վերակազմել դուն գիտես
Զբոյցն՝ ուր վտռ աչքերուդ մէջ ամօթխած
Լուսաժպիտ կայ մանկութի'ւնըդ անմեղ.
Ռբովեհտեւ տիրապետել կրնաս դուն
Ուրախութեամբը նախնական աշխարհին:



Լըռութիւն, որք լըռութիւն,
Օրուան բոլոր ճայներէն ետք, կը բերեմ
Սիրտըս՝ որ դեռ կը բարախէ, մեղձօրօք
Գաշնակութիւնը տրտում
Այս յայտագած հծծիւնին
Որ հագույս մէջ կ'երկարի:
Այս տղան որ տունիս մէջն է,
Կը տեսնէ թէ կը հասուննա՞յ
Ժամանակի ծառին վըրայ

Ամէն պտուղ արեգակի :
 Բայց իրա՞ւ է որ կ'ապրի ան՝
 Որ ստուերն է երազներուս ,
 Երբ կը ժպտի հրեշտակներուն .
 Կը տեսնեմ իր շնկեշողուն
 Արտեամուսնէն բարախուն ,
 Երբ շունչս իրենց կը մտնեայ .
 Միշտ հեռաւոր , անհասելի
 Տունիս մէջն է փոքրիկ տղան :

❖

Փանի՛ աչքեր խաւարեցան
 Մուրակին այս անգիտակ
 Թէ ո՞ւր կ'երթայ : Փանի՛ արեւ
 Ուրախութեան եւ քախիծի
 Մոխիր եզան անոր վըրայ :
 Դեռ ի՞նչ մնաց մեր ժայներէն .
 Աւելի վառ նըստք վը չէ՞ .
 Լըռութիւնն՝ որ ինծի կու գայ
 Ծաղիկներէն քեզմէ քաղաւած .
 Բայց խունկն անոնց չի կորսըւի .
 Դոր առաւօտ մը գայն կ'առնէ :
 Ձեռքեր՝ որոնք քեզ օրրեցին ,
 Չեն անհետիր գերեզմանով .
 Ու կը վառեն քեզի համար
 Ամէն գիշեր ջան մ'սկիշող ,
 Եւ կը փակեն ազուար աչքերդ
 Մահածաղիկ երազի տակ :

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՔ

ԱՐՏԱԿԷՍ ԵՆՂՈՒՊԵԱՆ

ՏԷՐ - ՏԷՐ ԱՄՈՒՆ ԱՆԻԾԵՑ

Կարմրցի Սարգիս ամուսնաց տունը ծառազարդ փողոցի մը մէջ էր, բայց ծառերը տնկուած չէին Համաշխարհային թեմեր խառն ի խուռն էին, անկանոն: Այդ անկարգ յարգարումը, սակայն, փողոցին տուած էր վայրէ, բնական դրաւուրներն էր:

Ամէն տանտէր քանի մը ծառ սընկած էր իր տան դիմաց, չափի քծախընդրութենէ զուրկ. որթատունկ, փշատ ու միշտ նախապատուութիւնը թթենիին տուած: Թուփը փոք քանոց Համեղ պտուղ է:

Փողոցին մաքրութեան ու յարգարանքին տէր տիրական չկար. փոս մը հոս, ցցուած քար մը հոն, ինսամբը՝ Աստծոյ ձգուած:

Բնակիչները՝ ամառը փոխէն, ձմեռը՝ սարսափելի ցեխէն կը տառապէին: Ամառը, թութիւրը դեռ լաւ չհասած, թաղին անդուստ աղաքը ծառերը կը քրքրէին: Ո՛վ կը մտածէր ծառերը ջրեւ պատահական անձրեւ մը երբեմն չոր հողը կը թրջէր, տոթակէզ մթնոլորտը թրջուած հողին հասնելի բոյրովը լեցնելով:

Փողոցին եզերքէն Հեղգօրէն հոսող առուակը, ամառները նուազկուն ճոխկ աղբիւր մը կ'ըլլար, դժուարաւ եզերող խոտերուն չթունջները զովայնոց: Այդ խեղճուկ առուակը գիշերները միայն մաքուր ջուրի զոյն կը ստանար, երբ փողոցին ոտարուպիկ լակոտները դադարէին ջրազաց խաղալ հոն: Սակայն,

զարնանամուտին, այդ մահամերձ առուակը կ'ըլլար որոտացող սել մը, կը սրբէր-կը տանէր հոն նետուած զարչահոտ իրեր, հին կօշիկներ, քուրճի ու փատած սկոբներու կոյտեր: Ամառուան միջօրէի տօթին, երբ մամիկները դորդան ջրջնիւղով դուռնէն ներս գոյ սեղ մը կը քաշուէին, թաղին լակոտները աննշմար կը սկրթէին կարմրցած թթենիներէն վեր ու մարտի աւեր կը սըփռէին, միշտէլ յանկարծ տղաքներէն մին վար սուրբար պոռալով.

- Տօ թռէ՛ք, Սարգիս ամուսն կուգայ կուակին հետ:

Այ ո՛վ կը հաշուէր պատուիլք վարտիքը, զերթուած արունքները, թափթափ վար կ'իյնային ու կը կորսուէին փշատներու խիտ թուփերուն ետեւ:

Սարգիս ամուսն պոյրով-պոսով, տոսոյլ, յաղթանդամ դիւղացի մ'էր, դիւղէն քաղաք փոխադրուած: Փողոցի տղաքը անկէ կը քաշուէին: Ան կեանքի խորտուրբորտէն անցած, Ամերիկա տեսած, չարն ու բարին հասկցող բարի դիւղացի մ'էր:

Մոնկոլեան արիւնխախում եաթաղանը խլած էր իր միակ ու կրտսեր եղբայրը, կողոպտած էր տունն ու ախոռը եւ մղած էր զայն լեռնու իր դժոխք դարձած հայրենի օճախը:

Մութ գիշեր մը ան միացած էր խումբ մը փախստական հայրենակիցներու, դրան ետեւ ձգելով իր երիտասարդ կիներն ու զուակները:

Օրերով, գաղանի, խաւար գիշերներուն, ան մազլլած էր լեռնային արահեաներէ, կարած խորխորասունէր, թագըստոց ըրած խիտ պուրակները, անքուն, անսուաղ, ծարաւէն պապակած, սիրտը միշտ գողի մէջ, քանի մը անգամ կողոպտուած լեռնային աւազակներէ ու մազապուրծ մահուրնէ ազատած, միւշեւ բարերարիտ օր մը կրցած էր նաւ մտնել, նոր աշխարհ երթալու համար: Վտարանդի իր օրերուն, ան ըմպած էր կեանքի դառնահամ ջուրը, հարապատներու կարօտէն անքուն գիշերներ լուսոցուցած, ծով արցունք էր թափած: Հայրենիքէն ստացած նամակները կըրկնակի կարդացած ու կուրծքին վրայ մասունքի պէս պահած, եւ տակաւին ամէնէն զարհուրելին՝ Գրիտտոնիայ Ամերիկացիէն բուրբ յորջորջուած: Կը պատմէր սրտմտած, գործարանին մէջ իր գրաստային դժնդակ աշխատանքին մասին, ուր ամէն բոլոր թեւն ու մատները կարուելու մղձաւանջը իր անդորրը կը խանգարէր:

Մայրայեղ խնայողութիւնով իր սրտահատորներուն դրամ հասցնելէ ետք, մաս մալ մէկդի պէտք էր դնել, վաղը, բարեբախտ օր մը սիլիէնի ըլլալու հեռանկարով: Ու դեռ կար ազգը, ազգին դպրոցն ու եկեղեցին եւ տակաւին խել մը հոգեւանջ մտորումներ, որոնք հայ պանդուխտին ժպտը իսպառ կը խլէին: Խոր յուզումով կը պատմէր, թէ ինչ անասման, այրող կարօտ ունէր իր գիւղին, գաւտին ու դարաւանդին, գոմին ու երախաւոր եզներուն:

Ան կը պատմէր, թէ ինչպէս, օր մը, բարեկամի մը հետ, անոր ձիուն դարման տալու համար՝ միասին մտած էին ախորը:

- Քորեքին հոտը, որ զթիս գիպաւ, ուրախութենէս խելքս գլխէս թուաւ. օ՛Փ, օ՛Փ, օ՛Փ, ընէրով կուշտ մը հոտուրտացի: Գրիտոնս մկալ, լավանքայէն անուշ էր. էգ հոտը եւ շատ ու շատ էի կարօտցեր. կարօտցեր էի ախորը, կո՛վը, ձիւ, էջը, գոմէջը. եթէ բարեկամէս չամշնայի, թրե՛րը պիտի գըր-

կէի զթիս ու երեսիս քէի: Ամերիկայի պանդուխտ օրերուս ամէնէն երջանիկ օրս էր: Բարեկամ՝ որ քաղցքի էր, շուտրումով զիս՝ էջ գեղացի կը կոչէր. էն հէրիֆը խաղար լուսէր, որ ես՝ ա՛յ հոգ չէի, հոգիս հազարաւոր մղոններով հեռու մեր գեղը թռած էր: Հապա՛, ինչեր, ինչեր շտեսանք...

Սարգիս ամուն, օսմանեան սահմանադրութեան, շատերու նման Հայրենիք վերադարձած էր իր խնայած դրամով. գիւղը ձգած եւ քաղաք փոխադրուած էր ու հոն մանրամասնաբ խանութ մը բացած:

Ազնիւ հոգիով, բայց խորազէտ ու վարպետ գեղացի մըն էր: Արտաքուստ դիւղականի բռնազբօսիկ համեստութիւնով մը վարադուրուած, իր կենցաղով, սակայն, ունէր քաղցքին հեզնող նուրբ հով մը, եւ ճաղցքի, դուն քու գործիդ նայիր, ես իմ ընելիքս գիտեմ՝ ի վարքապիծ մը: Փողոցէն անցնելու պահուն, աչքին պոչովն իսկ բաց դունջ մը ներս չէր նայեր, կամ գրացի կիներուն բարեւեր. կ'անցնէր լուս ու մունջ, մէկը շտեսածի պէս, յաճախ կը խուսափէր ողորմի Աստուած մը իսկ ըսելու, եթէ դրացին չըլլար առաջին բարեւոյցը:

Գիւղացիի արտակարգ ինքնասիրութիւն մը ունէր՝ վեր մնալու ստորակայութենէ. քաղցրոց ծաղրանքէն յառեցած էր. ականջներովը լսած էր քաղցրոց կոպիտ ծաղրանքը, զըմա՛ն, էգ էջ գիւղացին ինչ գիտէ՞ս:

Ան, չափով մը գիւղը քաղաք բերած էր ու գիւղին կէս քաղցրեկի հազուստ հազցուցած, բայց գիւղականը իր հիմնական դժեքուն մէջ խիստ տիրական մնացած էր:

Քաղաքացիին համար գրիթէ անսովոր էր տան կից ախոր ունենալ կամ կով պահել, թէեւ կային ունեցողներ, որոնք դարձեալ գիւղերէն գաղթողներու շարաւիղներէն էին, որոնց քաղցրեկնիսցած ստորամաշկերէն, ինչպէս կ'ըսէին, տակաւին գեղացու հոտ կուզար:

Սարգիս ամուննց կովին կաթը ծախու էր: Քաղին մէջ հիւանդ ունեցողներ

ըը անոնց դուռը կը վազէին։
 Միջակորեայ քաղաքին ե՞րբ կաթի
 երես կը տեսնէր. նշանաւոր հարսանի-
 քի առիթով միայն անոնք կաթապուրի
 համը կ'առնէին։ Թանը գիւղացիներէն
 կը քնէին ու վարպետ գիւղացին ալ միշտ
 առատ ջուրով կը մկրտէր թանը. «չե-
 ցուր տղայ, ի՞նչ գիտէ էջ քաղաքին».
 Թանը միշտ ճերմակ էր։

Սարգիս ամուսն կուէն զատ հսկայ
 էջ մ'ալ ունէր, Յուլիլը. ջուրի չափ դո-
 րեղ, իր շահու գլխաւոր աղբիւրը։

Յուլիլ հեծնիւք էջ չէր, սերմնացու
 էր, Սարգիս ամուսին աչիցը լուր։ Կը-
 սէին՝ թէ ան դարիով ու շամիչով կը
 կերակրէր Յուլիլը։ Անոնց մէջ կար հօր
 ու որդու մտերմութիւն մը. յաճախ,
 երբ ձգուած ըլլար մերձակայ դաշտ մը՝
 թարմ խոտ ճարակելու եւ Սարգիս ա-
 մուսն հեռուէն անոր անունը պոռար, Յո-
 լիլի վռնիչով մը միշտ կը պատասխա-
 նէր։

Ան, մասնազէտ անասնապահի մը
 Հարստութեամբ սանձէն բռնած, գին-
 ւորական համաչափ քայլերով, ուս ու-
 սի, գրեթէ ամէն օր գայն կը տանէր քա-
 ղաքին ծայրը, ամայի դաշտ մը, Ժա-
 մադուութեան մը...

Յուլիլ մասնագիտօրէն վարժուած
 իր պաշտօնին, գիտէր թէ ինչո՞ւ կ'եր-
 թար ու կը թուէր, թէ արուի կրօնա տ-
 ճապարանք մը ունէր ճշգրտապէս ըլլալու։

Թաղին լակոտները՝ շարճճի, հա-
 ճոյքով ու հետաքրքիր, յամառօրէն կը
 հեռեւէին անոնց՝ Հակառակ Սարգիս ա-
 մուսին սաստերուն։ Յուլիլ, հմուտ ու
 շահարէր վաստակաւոր մը, անբաւ եր-
 ջանկութիւն կը պարզելէր Սարգիս ա-
 մուսին։ Կարմրցուն էջը Հոշակ Հանած
 էր։ Վերադարձի ճամբան, ան՝ Յուլիլին
 վիզն ու ճակատը կը փայտայտէր երախ-
 տագէտ գործով մը, «հա՛ եաւրուս, հա
 առլանս, կերած շամիչդ հալալ ըլլա՞յ»,
 ու դեռ փաղաքական տաղաւորուած
 ի՞նչ դովեաններ իր աչքի լոյս Յուլիլին։

Սարգիս ամուսն այրող փառասիրու-
 թիւն մը ունէր Ժամուսն մէջ երգելու.
 երգելու բարձր, որոտալ նուազային

աշուորումով, Եթէ միայն թոյլ տրուէր
 անոր շապիկ հագնել ու դասը, «Արի
 Տէրքը երգել։

Եւղճ մարդը կը ստիպուէր երեկո-
 ները իր տան մէջ որոտալ մեղեդիները։

Կրեթէ ամէն իրիկուն, գինուորա-
 կոն մազաւախէն առաջ, մարդիկ հազիւ
 անկողին մտած, թաղեցիք դատապար-
 աւած էին լսել անոր արեւելեան նօ-
 թաները, Արի Տէրքը, Չայնըը հնչեցը ու
 նոյն կըտոյթով տանկական մեղմադ-
 ձիկ պայաքի մը անվրէպ։

Թաղեցին ալ վարժուած էր անոր
 մեղեդիներուն, ոմանք նոյնիսկ կը սի-
 բէին լսել անոր թախծոտ պայաքիները,
 ուր կար հառաչ մը, հողիէ վայոց մը,
 խոցոտող ցաւ մը իր կիսալարերուն մէջ։
 Ան ի զուր կը ջանար իր զուսպ զմա-
 ցին տակ ծածկել իր հողին կրծոտող
 վիշտը, որ թափանցիկ կը դառնար իր
 տարտոտ երգերով ու պայաքիներով.
 կը թուէր, թէ ունէր ներքին սուր տա-
 ռապանք մը, հոգեկան խիթ մը, որ կը
 խլէր քունն իր աչքերէն։

Ճ

Մկր երեք տարեկան էր, երբ իր հայ-
 րը՝ Սարգիս ամուսին կրտսեր եղբայրը,
 մի՞նչ ջարդին եղբրականօրէն խողխող
 ունցաւ քերտերէն։ Մկրի ծնունդով
 մահացած էր իր մայրը։

Սարգիս ամուսին ընտանիքը խնտ-
 մած էր գայն հարազատի մը նման, գէ-
 պի որբը միշտ հանոյակատար. «Մեղք
 է, անոր Աստուած զարկած է», միտին
 լաւ պատտուը անոր գրուած էր. «Մեղք
 է, անոր Աստուած զարկած է»։

Սարգիս ամուսն ազգականի մը միջ-
 նորդութեամբ գայն տեղաւորած էր
 գերմաններու որբանոցը՝ ուսեալ մարդ
 ըլլալուն համար, երբ ան տասներեք
 տարեկան էր։

Մկրտիչ, հոն եղած էր ուշիմ եւ օ-
 բինակելի աշակերտ մը, բայց քաղաքն
 ու քաղքենին միշտ իր սրտին անհաշտ
 մնացած։ Յոգնած եւ դժգոհ բողբջական
 աղօթաձևէն ու որբանոցի խիտ կաշ-
 կանդումներէն, մեծ կարօտով կը յելէր

կերուան բռնող սարկաւազն ու ժամունն անուշ խունկին հոտը :

Ուտուսի շափաւոր պաշարով մը ան ձգած էր որբանոցը իր սասնըվեց տարեքին ու վերադարձած հօրեղբոր ընտանիքին, որպէս տուն հարազատի :

Մկը, իր հօր մարմնական ճշգրիտ տիպարն էր. վայելչահասակ, լայն սուսեր, ամբակուս. կազմ ու հօրը պէս մտայլ եւ զղայուն :

Ան հասած էր տարեքի մը, ուր արբունքի խայթող մրմունջներ իր մելամաղձոտ հոգին կը փոթորկէին : Անծանօթ հեծեմանը մը, լալու գորաւոր տենչ մը, յաճախ իր տխուր հոգին կ'ալիւնէր : Պատանիի իր թափուր ու արդաւանդ սիրտը մենութեան մէջ սիրոյ սերմեր կը սաղմնաւորէր. անվերջ մատնորուն եղունգները կը կրծոտէր ծանր խորհուրդներով բռնաւորի մը պէս :

Յաճախ, երբ տարեկից զբացի տղաք, մօտակայ գաշտի մը մէջ վազելու, ցատկելու, գնդակախաղի կը հաւաքուէին, Մկը կ'երթար անոնց մրցուած զիտելու եւ աշխոյժով կը մասնակցէր, երբ կը հրաւիրուէր :

Իր վերաբերումը խիստ զիւրաբարոյ էր ամէնուն. աչքը կուշտ գիւղացիի շնորհապարտ արամազրութեամբ լի՝ Ան այս առաջինութիւններով սիրուած ու մտերմացած էր զպրոցական տղաներու, որոնցմէ պարբերաբար կը ստանար հետաքրքիր վէպեր, Վեդբար թովմասի տնակը, «Թոպիկոսն Գրուզոյն», «Հազար ու մէկ գիշերներ» : Օր մ'ալ ան ստացաւ «Արաքսիա կամ վարժուհի», սիրային վէպը :

Այդ վէպի ընթերցումը կրկնապատկեց անոր սովորական մելամաղձութիւնը. հեշտայի յուզում մը, սուսայտանքի հաճելի խտխտուք մը կլանեց իր թափուր սիրտը :

Մկը, վէպի հերոսուհին սիրահարուէցաւ. վայոց մը, աւաղում մը կը ճարակէր իր հոգին :

Օր մը, երբ ան տանիքը, առանձնութեան մէջ, պատի մը տակ ծուարած գիւրքը կը թղթատէր, իր սիրտը երկրա-

շարժի ենթարկող էջերը կրկին կարգաւորուան փափաքով մը, զբացի տան պատուհանէն, ձայն սուսա իր ամէնօրեայ ծանօթ թուրք ոտականին երիտասարդ կիներ, էմինէ խանըմը :

– Մկը, ամառնս, կընա՞ս շուկային ինծի համար տուգեաղի բերել, մութը չմնամ այս գիշեր :

Մկը, մեծ հաճոյքով, բայց միշտ արական սրսիւքով մը ըրած էր գանաղան ծառայութիւններ այս զեղանի թուրք կնոջ համար, շատ մօտէն տեսած ու խօսած էր անոր հետ, երբ ան ժեռաքաչ թափանցիկ քողով մը զլուխը ծածկած կ'ըլլար մինչեւ իր բարակ ազեղնածէւ յօնքերը, ան երբեք այսպէսի սարսուռ յարուցած չէր իր միլամաղձոտ սրտին ու երբեք այսքան զիւթիլ երեւցած չէր : Այսօր՝ ան առանց քօղի, զլուխը բաց, շաքանակագոյն մազի խոպոպները ուսերուն թափած նբրաճաչակ զպրոցական աղջկան մը նման, անդիմադրելիօրէն հրապուրիչ էր. անոր ձայնի փառաքաչ զարդուցիւնը ու նայուածքին թաւային նբութիւնը, իր կարգացած վէպի Արաքսիային յանկուցիչ կենդանի պատկերը ստուերազրծեց :

Մկը, պահ մը ընդարձացած, ազահօրէն զիտեց զեղատեսիլ կնոջ կարթոյն աչքերը ու նուրբ իրանը աբուի մը տենդազին մոյուցքով ու իր անսահման յափտակութեան մէջ, պինդ բացաւ իր սիրատանջ սրտին գոնիքը, որ թուրքին ինքնամատոյց քնքոյլ կիներ, ներս քալէ նազանքով, ինչպէս ճրագի բոցիկներուն շուրջ թռուտող անմեղունակ թիթեռնիկ մը :

Հետագային, անոնց խիստ մտերմութեան ստեղծուած տարփանքի ցնցող ամէն նորութիւն ուսնացուց անոնց հաշիւախառն տենչը ու զգուանքը :

Կնոջ հրաշագեղ կազմին անժլատ մատուցումը չմեղմեց անոր հրապոյրները :

Կըսուի, որ գաղտնի սիրաբանութիւնը արբեցուցիչ թովչանք մը ունի եւ գողցուած համբոյր մը աւելի քաղցր է,

քան տրուած Համրոյր մը: Անոնք Հեռու էին յազեցումէն: Մկրի գերեզմարուած սրտին մէջ սակայն՝ յարատեւ խռովք մը կը տրոփէր. վտանգի մը նախազգացում մը, թէ զաղտնի սիրողներու յատուկ, թուրքի մը կնոջը Հետ սիրաբանութեան սաքսափը:

Ան շէր կրնար Հասկնալ այս տարօրինակ ճնշումին պատճառը. մանաւանդ՝ երբ օրէ օր աճած ու ամրացած էր իր կիրքն ու վտանգութիւնը իմենէի անտարակուսելի անկեղծութեան ու նուիրումին. կնոջ պարզասիրտ ու անբնականօրէի անձին մէջ կը ծփար շատ նուրբ ու Հիւրընկալ մազնիսականութիւն մը. անոր տեսքն ու ամենափոքր Հպանքը բաւական էր սղոյղելու իր Հոգին՝ արական Հուժկու երանութիւնով մը:

Հրաշք մը միայն պիտի կրնար վըրգովի իր Հեշտօրօք մրափը ու խորտակել սոկեզօծ կապանքները, որ սիրուհի մը օղակած էր անարգել, անբնական: Մկր, Հիմա կը նմանէր զինեմովի մը, որ կը իմէր իրք ներքին տառապանք մը մոռնալու, բայց ան որքան շատ իմէր, այնքան աւելի կը սրէր իր զգայնոտութիւնը:

Երբեմն կը մտածէր ձեւը քաղաքը ու զիւղ երթալ. խոր կարօտ մը ունէր զիւղի իրենց տան ծխոտած առիթին, ազգականներուն, ընկերներուն, զաչտին ու զարաւանդին, փոշիներու ամպին մէջ կորած գիւղի նախիրին, տուն զարձոյ ու իր ձագուկը փնտռող կենդանիներուն Հոգեպարար Համերգին:

Տաղաւար օրերուն կը սպասէր, ինչպէս միշտ, գիւղ երթալու Համար:

Գիւղի իր տարեկիցները տարբեր էին որբանոցի կաշկանդուած միջավայրին մէջ կամազուրկ դարձած տղաքներէն: Կը յիշէր անոնց Հետ ըրած ձմերուկի զոգութիւնները, կորուած կովի մը արկածախնդի փնտառուքը բլուրներու փոթերուն մէջ, զօտեմարտները, միւնազնդակի խաղերը, ու Հիմա, որ Միւլտը մօտեցած էր, ան զրեթէ անՀամբեր էր զիւղ երթալու Համար:

Կ'երեւակայէր զպրատան տանիքը Հաւաքուած տղաքն ու աղջիկները, վառուած մոմերով եկեղեցիէն դուրս եկող տղաքը, ճարճատող բոտոր ու պղնձազոյն բոցերուն Հեւացող թաւալումն ու զրեթէ կ'ուզէր, որ իր վրդով, մեյուսազօրիկ Հոգին կորսուի այդ սուլող Հրեղէն ալիքներուն մէջ: Միլտէն երեք օր առաջ ան դիւզն էր:

Միլտը, Տէրընտասը՝ մեր Տեսուչնառաջը, Հայոց կրակապաշտ օրերու յիշատակումը, աւանդապաշտ ժողովուրդը դարերով խանդավառութեամբ տօնած էր: Կրակի այդ պաշտամունքը նուիրուած էր Միւլտ Ասածուն: Հայոց Հեթանոս օրերուն Միլտը՝ Արամազդի տղուն՝ Միւլտին ձօնուած Հանդիսաւոր պաշտամունքի օրն էր:

Միւլտը, Հաշտութեան, բարեյուսութեան ու միջնորդութեան Աստուածն էր:

Երկու երիտասարդներ, Հարսներ անձկապին կը սպասէին Միլտին ուխտ բռնելու, շնորհք խնդրելու Միւլտ Ասածուն:

Գիւղի պարմանները օրեր առաջ կը Հաւաքէին չոր օրթատունկեր, ծղօտներ ղէզերով, արեւմարէն ետք բոցավառելու, Տեսուչնառաջը տօնելու:

Եկեղեցիին կից՝ զպրատան տանիքը, ուր անմիջապէս տեղի կ'ունենար զիւղի զխաւար բոցավառութիւնը, Հաւաքուած կ'ըլլային աղուամազոտ, կենսախինդ երիտասարդներ, արբունքի Հոտէն զինով դեռատի աղջիկներ, Հուրքոտ, կարմրաթուշ Հարսներ, Միւլտին արուզակալի մը ծնունդը աղբիւրով, խորպէթը իրենց ամուսնուն մուժտա ճամբելու Համար:

Մկր այդ երեկոյ զպրատան տանիքն էր՝ իր ընկերներուն Հետ, որոնք մեղաւոր փոփոտուքով սիրուն աղջիկներ կը մասնանշէին իրարու:

Ժամերգութիւնն աւարտած՝ տղաքը տանիքն են, վառուած մոմերով ու կրակ կուտան ծղօտներու Հսկայ ղէզին, որ կը բոցավառի ու խայտանքով կը Համակէ երիտասարդները: Զուարթ, ցնծազին

Իրեցկինը խարոյկի պատահարէն անտեղեակ, աղջկան անկողնին մօտեցաւ, ձեռքը դրաւ անոր ճակտին, որ տաք էր, կ'այրէր, շփեց գէճքն ու վիզը կարեկից մօր պորովով ու հարցուց մեղմօրէն.

- Մարան, ձագս, ո՛ւրդ կը ցաւի, ի՞նչու բերանդ լոխմա մը բան չի դրած պառկար. ի՞նչ ունիս, խոտաղ առնեմ:

- Բան մի չունիմ, մայրի՛կ, Միլէտին քիչ մի շատ պոռեցի, խոնջած իմ, ու վերմակը դուխը քաշեց:

Կը խուսափէր մօրը աչքերուն նայիլ, ըսել անոր իր հոգին այրող կրակը, ոսկեթոյր երազներուն հողմացրիւ անհետացումը: Յանցանքի մէջ բռնուողի մը պէս երեսը ծածկել կ'ուզէր:

- Մարան, ձա՛գս դզալ մը մածուն բերեմ կեր, ճակատդ կրակներու մէջ է, փորիդ վըսյ Յափազա մի թող ըլնէ:

- Ձէ, մա՛րս, պուկէս լոխմա վար չ'երթար, խոնջեցած իմ, թող քիչ մի հանգչիմ:

Մարան կը վախնար, թէ այդ գիպւածին մէջ նախախնամութեան մատը կար ու չէր դիտեր, թէ ինչպէ՞ս պիտի կրնար ազատուիլ այդ անողոք վճռէն:

Ձէ՛ր ուղեր, այո՛, չէ՛ր ուղեր, ուրկէ՛ ուր Մկր մը: Միբայր յեղաշրջումով մը կը շրջի՞ժէր, երկնադերս բողոք ունէր պոռտու, թէ ան չէ՛ր իր անուրջներուն ասպետը, ան չէ՛ր:

Մարան, նման էր մանկան մը, որուն խոտացումը էր աչքերը բացող ու գոցող սիրուն պուպրիկ մը՝ կաղանդի նուէր, ու ան կը ստանար զսպանակուած խնչափառ մը:

Մարան գրեթէ ուղեց սիրտը բանալ մօրը, ցոյց տալ անոր զինք ճարակող հրդեհը. իր անըջային կախարդէ՛լ շուշաններուն թառամումը պատմել ու սպաստանիլ անոր կարեկցութեան:

Ամօթի խոր զգացում մը, սակայն, կապեց իր լեզուն ու ան մնաց իր խորտակուած զղեահիին մէջ, իր վշտին հետ առանձին:

Մարան, հիմա՛, քարսիտ որսորդէ

մը հալածուած դողահար եղնիկի ձը սարսուռը կ'ապրէր:

Աչքերը գոց կը տեսնէր Միլէտին ճարճատող բոցերը, կը լսէր տրոց զուարթ աղմուկները ու մէջընդմէջ, կը զգար Մկրին ուժեղ բազուկները իր պարարտ իրանին շուրջ: Ամօթի ու կատաղութեան տաք հոտանք մը ներս կը խուժէր իր երակներէն:

Առաջին անգամ ըլլալով, ան լրիւ զղաց իր հասուն իզականութիւնը, օգին մէջ ցնդած իր ոսկեճամուկ երազներուն համար՝ փղձկեցաւ դառնակովիմ: Գլուխը վերմակին տակ արտասուեց լուռ հեկեկանքով, լացաւ՝ նոր ու անծանօթ վիշտով մը:

Քունը հետու էր իր աչքերէն. մատներովը ակնակապիճները կը սեղմէր քնանալու, մոռնալու համար կոտտացող կակիճը, սակայն, հարիւ իր ջրզարդիւ գանկը մրափի մը թմբութեան եզրին, ինքզինքը կրկին կը դտնէր խարոյկի հետացող բոցերուն մէջ, Մկրի թեւերը ամբօրէն շղթայուած իր պարմանի դուլար իրանին ու ընդոստ վեր կը թռէր տաժանելի մղձաւանջէ մը փախչողի նման: Միհրի անազորոյն տնօրէնութենէն, ան ի սպառ թերահաւատ դարձած՝ մոլեղին կ'անիճէր իր դժխեմ բախտը ու անմեղ Մկրը: Արդեօք ա՛յս է ճակատագրիս...:

Արբունքի սաղմերով հարուստ այս կենսուրախ աղջիկը, այս գեղեր էգի իր առաջին սարսուռէն բռնուած, իր երազներու հերոսէն բզկտուելու այրող տենչովը կը մրրկէր:

Երկար տուայտանքէն պարտասած էր, երբ ցաւամոք մրափ մը իր օրհնութիւնը ցնցուղեց անոր խառնաչիտթ մտքին, թեթեւ անզորը մը սփռելով իր ընթոստ ներաշխարհին:

Քունը՝ մանաւանդ շընդհատուող քունը, միակ դարմանը գրգռուած մտքին, երկար ատեն մերժած էր ընծայել անոր այդ բարեբը:

Կարճ թմբիլի ընթացքին, սակայն, ան դարձեալ լսել կարճեց տօնախմբողներու ահաբեկ ճիւղը, որ ցնցած էր զինք

խարոյկի պատահարին: Արժնեցաւ կըրկին, խորին սրտմտանքով, բայց այդ կարճ պահն ալ տուած էր չափաւոր սփոփանք մը:

Ան հիմա մեղմացած վրդովմունքով կը գիտէր խարոյկի իր արկածը եւ զայրոյթն ու դառնութիւնը աւելի մեղմ էր դէպի անմեղ Մկրը: Ինչո՞ւ առեւ ու դատապարտել անմեղ երիտասարդ մը, որ զինք աղատած էր ճարճատող բոցերէն ու եթէ այդ պատահարը նախանամական վճիռ մ'էր, ինչպէ՞ս կրնար աղատել: Իրա՞ւ արդեօք, Միհրի անդառնալի վճիռն էր այդ...:

Հիմա, որ ան վայելուչ ներողամտութեամբ մը կը գիտէր արկածը, Մկրին դէմ իր զայրոյթը գտաւ գրեթէ անհրաւ. անկեղծորէն զղջաց զայն դատապարտած ըլլալուն համար, ուզեց մաքրագործել սրտին կուտակուած պարստանքը անոր դէմ ու նոյնիոկ թոյլատրեց, որ համակրութեան ներողամտիս հունտեր սպրդին իր միացող սըրտէն ներս:

Աչքերը փակ, ան փորձեց զգեստաւորել Մկրը իր երազած կտրիճին հանդերձանքով, նստեցնելով զայն հողմընթաց նժույզի մը վրայ, անոր մէջ փընարուելով նմանութիւնը երազներու իր ասպետին:

Մարան, հիմա, յորձանուտ ալիքներու մէջ խարխափող մակոյկի մը կը նմանէր, ուժգին տեղատուութիւն մը բաւ էր զինք ծովամոյն ընելու. ու ան՝ այդ գոլիւիչ երազներուն մէջ, յանկարծ կրկին զգաց Մկրին զորաւոր բազուկները պինդ իր հարուստ իրանին, որ փշաքաղեց, խտխտուքով մը բռնկցուց իր գաղջ մարմինը:

Մարան այդ նոր անուրջներով թաթաւուն, փակեց իր յոգնած աչքերը:

Պապղուն լուսուն աստղը շատոնց սողոսկած էր Տէրտրանց շարտախէն ներս ու սպրդած Մարանի կուտական տաք ծոցը:

Մկր իր քեռոնց շարտախին մէջ կրոր լուսնկայի արծաթեայ փայլին

տակ, անկողնի վրայ երկնցած էր առանց հանուելու:

Լուսնին մէջ Մարանի պատկերը կը տեսնէր:

Աչքերը չկրցաւ փակել, տէիլոս հեշտանքի ու տանջանքի դիշեր մ'անցուց նոր ու անծանօթ կարտով մը:

Ան, հիմա, մոռցած էր ամէն բան, որ տեսած ու լսած էր իր կեանքին մէջ. գրեթէ մոռցած իր գեղանի թրքուհին կաթնաթոյր մարմինը: Բախտը զինք ժպիտով դիմաւորած էր. գեղ մը զեղով խնթ կ'ըլլար Մարանին համար, որ իր դիրկն էր քանի մը ժամ առաջ:

Մրտին բարախուժը կը լսէր. միաքը խոնուած՝ դադրած էր գործելէ: Այժմ, կար ու չկար Մարանը կար այս ոչխարհին մէջ:

Առտուան, կոշնակի ձայնին հետ վեր կեցաւ, Մարանը անգամ մը եւս տեսնելու ու անոր իր սրտին կրակը ըսելու հօր փափաքով, երբ Տէր Պապան ժամ դաջած կ'ըլլար:

Տէրտրանց տան շեմին հասած, ան լսեց իրիցկնոջ ճո՛ւլ, ճո՛ւ, ճո՛ւ. հակերը կանչելու ձայնը, ներս մտաւ վեհերոտ ջայիքով ու բարեւեց իրիցկինը որդիական խոնարհութեամբ, թողութիւն խնդրող յանցաւորի մը թօնով:

Մարանի մայրը առաւօտ կանուխ լսած էր Միլէտի արկածը զբացի այլընչակէ մը, գոյած եւ օրհնած էր Մկրի քաջութիւնը: Իրիցկինը հիմա գիտէր, թէ ինչո՞ւ էր Մարան սրտնեղ ու հիւանդ:

- Չա՛ղս, Մկր, դուն խուսուր չունիս, խէզէն, խէզէ է կուսայ: Աստուած արեւդ պահէ. Մարանս տէիլոս կրակներու մէջ էր:

Մարան, լսելով Մկրի անունը, անապարանքով հազուեցաւ ու բակը իջաւ, լուս աչքով զայն լաւ մը տեսնելու բուն փափաքով:

Իր ապշահար նայուածքին խուզարկու թափը սքօղել անհնար էր. իր շեշտակի սեւեռուժը կը մասնէր իր անձկադին հետաքրքրութիւնը:

Մարանի կարմիր թուշերուն թեթեւ

զայուկ մը նստած էր. աչքերը յոգնած ու նուազկուն էին:

Մկր կարկամած քառերով, ուր կար յուզում ու գորով, իր ցաւն յայտնեց պատահարին համար եւ օգտուելով իր բնական հաւերուն կուտ ձգելու զբազումն, աւելցուց.

— Մարտն, Գրիստոս վկայ, տէրիս աչքո լեմ զոցած, հոգս չէր թէ ես վառէի այդ բոցերուն մէջ, քե՛զ մեղքցայ, հիմա ալ նոր կրակի մը մէջ կ'աղնձիմ. — ըսաւ տնայնակի՛ սիրաբար յոգով մը, որ Մարտն կարմրեցաւ ու մնաց սալշած:

Յետոյ, Մկր ջերմօրէն համբուրեց իր բնական ձեռքը ու ածապարեց հեռանալ, Տէր Պապուն վերադառնալէն առաջ:

Տարօրինակ ջերմութիւն մը կար այդ անտո՛ւր համբուրին մէջ, որ վշաքաղեց իր բնականը. Ան գրեթէ զգաց, որ Մկր խնկեցած էր, սէրով բռնուած:

Մկր գէպի քաղաք իր վերադարձին՝ խարոյկին մէջէն կը քայլէր, կը զգար Մարտնի կուրծքին տրոփո իր լանջին, որ զինք կ'ողողէր երանութեան աննդակէզ սարսուռով մը:

Տուն հասած չնտած, ուզեց զբեւ իր սիրոյ յեզակարծ առկայծումը, որ կլանած էր իր համակ էութիւնը:

Մկր, գերզգայուն որբ մ'էր, իր մատաղ սիրաբ նոր բացուող ծաղիկի մը նման հիւրընկալ էր սիրոյ սեքմերուն: Ան կ'ուզէր գողարիկ, սիրատարփ բառերով ստուերազծել իր յոյզերը, ըսել Մարտնին, թէ այս նոր կրակը անչիջելի էր. կ'ափսոսար, որ էնպէս գինք զըրկած, լերան մորենիին պէս չէր վառած ու անկացած Միլէտի բոցերուն մէջ:

Գանկին մէջ մտքերու ու բառերու խտնիճաղանճ մը իրար կը հրմշակէր, դժուարացնելով բանաձեւումը, երբ յանկարծ յոյսի փարոս մը տեսածի պէս, յիշեց ոտմանիք հեքիաթ մը, որ օր մը պառուէ մը լսած էր:

— Մարտն, սիրուն Մարտն, Միլէտի բոցերը հիմա տէ՛ր սրախ խորը մտած է. ո՛չ քուն ունիմ, ո՛չ հանգիստ. առանց

քեզ ալ կեանք չունիմ: Աստու մատը մէջն էր, Միլէտը իմ ուխտս էր, ու պատմել սկսայ հեքիաթը:

Գծամանակին իշխանագուն մը երպրին մէջ որսի պացած կ'ըլլայ, հեռուն ձորի մը մէջ ան կը տեսնէ քեզ նման հուրի պէս գեղեցիկ աղջիկ մը, որ արեւուն կ'ընէր, զարե՛ւ, դուն մի ցաթիբ, ես պիտ' ցաթիմ»: անմտն, սիրուն, հրեշտակի պէս աղջիկ մը:

Իշխանին ձին մորեկի պէս կը սուբայ դէպի աղջիկը: Բայց իր շար բախտէն, յանկարծ երկինքը կը սկսի գոռալ ու մուրթ ամպի սաւան մը կը ծածկէ, կ'աներեւութացնէ հուրին:

Իշխանը հոգեկոտոր տուն կը դառնայ: Քուարանէ մը ելածի պէս կ'արթննայ քրտնաթաթախ ու ան այդ երազէն ետք, օրըստօրէ կը հալի ու կը մաշի: Դեղ-գարման փարա շընհեր: Մտողքին բազմաթիւ միջոցները, անոր մոռցնել տալու այդ դուազիբ երազը, կը մնայ ապարդիւն:

Անոնք յուսահատած, օր մը կը կանչեն դաւաթ նայող նշանաւոր բուս մը ու կը խոտանան մեծ պարզեւներ, իթէ կարենայ դաւաթ մը ջուրի մէջ գտնել երազի աղջիկը:

Կատաղի ալեկոծումէ մը ետք, գաւաթին ջուրը ճամբայ կուտայ բուշին, որ քանի մը անգամ կը յօրանջէ, անհասկնալի բաներ մը կը բարբաջէ ու կը սկսի այսպէս.

— Ահա կը տեսնեմ հրեշտակի պէս գեղեցիկ աղջիկ մը, բուպիկ, մարմարէ բաց սրունքներով, հոլանի թեւերով, հարուստէն դատելով աղքատիկ կ'երեւի: Կը տեսնեմ, ահա կը վազէ, խարտեալ ոսկելող մազերը հովին տուած, կը վազէ ամպի պէս արագ, այծեամի պէս թեթեւ. կը վազէ, կը թռչի: Գնաց, գնաց հասաւ փոքրիկ գիւղ մը ու մտաւ աղքատիկ խրճիթ մը, որուն տէրը երկար ճերմակ մօրուք մը ունի. չեմ կրնար ըսել թէ ո՛ր կողմ, կամ ո՛ր գիւղ է: Ահա ջուրս փոփրեցաւ ու մթնեց:

Երիտասարդ իշխանը կը նստի իր

նժոյզը, կ'առնէ պարկով ոսկի ու արծաթ, կը համբուրէ իր մայրը ու կը վճռէ ուշխարհը իր ուղիին տակ տալ, աղջիկը չգտած չվերագառնալ:

Ան՝ օրերով ու ամիսներով կը թափառի լեռներ ու ձորեր, անթիւ գիւղեր ու քաղաքներ: Օր մը, շատ յոգնած ու ակառօթ աստանելէ ցաւով մը կը մտնէ գիւղ մը, ակռան քաչող մը գտնելու:

- Գիւղին մէջ աստամարտոյժ շունինք, կ'ըսեն, - բայց մեր քահանան կրնայ քու ակռադ քաշել:

Բեղաբաժ իշխանը ցաւին ու փոշիին մէջ կորած, որ ալ շատ իշխանաւորի չէր նմաներ, կը մտնէ քահանային տունը ու կը խնդրէ, որ ցաւոտ ակռան քաշէ: Գիւղաբի չոր գետնին վրայ ու ցոյց կուտայ զինք տանջող ակռան:

Երէցիկներ, որ աւելի իմաստուն են դած էր, տղուն վրայ ազնուաշուք հով մը տեսնելով, կը կանչէ իր աղջիկը, որ տղան գլուխը անոք ծունկին զնէ ու գլուխը ամառ մը գրկէ:

Իշխանը աղջիկը տեսնելով կայծակէ մը գարնոնածի պէս կը ցնցուի:

Ամիսներու տառապանքէն ու վշտաւորութենէն ետք՝ այս անակնկալ գիւտը տղուն խելքը գլխէն կը տանի:

Այո՛, ճիշդ էր երազի աղջիկը: Խորտակուած հոգին կը նորոգուի: Կը զնէ գլուխը աղջկան ծունկին՝ երկնային երանութեամբ մը:

Քահանան կը քաշէ ցաւոտ ակռան, սակայն իշխանը ալ չէր ուզեր գլուխը աղջկան ծունկէն վերցնել:

- Տէ՛ր հայր, քաշէ քովինն ալ, ան ալ կը ցաւի. քաշէ միւսն ալ, միւսն ալ, - մինչև որ իր բերնին բոլոր ակռաները կը քաշուին, կը հանուին:

Իշխանը դուռէն երազի իր հուրին ու կ'աղէր գլուխը անոր ծունկին անէանալ:

- Հիմա էդ ե՛ս եմ, Մարան, առանց քեզի օր արեւ չունիմ: Միլիտը իմ ուխտս էր, Աստծու մատը մէջն է:

Գալ շաքոթ գիւղ պիտի գամ. կէս գիշերին մեր պատին տակ, Մխտոնց

կողմը, քեզի պիտի սպասեմ: Մարան, արեւուդ զուրպան, առանց քեզի ես կեանք չունիմ, Աստծու կամքով զունիմս ես:

Յաջորդ օրը, քաղաք եկող գիւղացիներէն իր ազգական կնոջ մը հետ, որ ծանօթ էր Միլիտի պատահարին, ան զրկեց իր սիրոյ առաջին անկեղծ թուղթը Մարանին:

Քաղաք վերադառնալէն քանի մը օր ետք, նոր խոսովք մը սկսած էր կրծել Միլիտի սիրտը: Խղճախայթ մը ծայր տուած էր: Ան հիմա երկու կրակի մէջ էր:

Էմիլիէն՝ կը սրէր ներքային անզուտ կրքով. անոր սիրատու շաքոթը, թաշախին ձայնը ու անապակ ոչին, առաջին օրէն փարատած էր իր ներքին թախիծը, նման հովահարի մը, որ կը կազդուէր սոթէն շնչահեղձ մարդու հոգին:

Յիշեց մեղրալուսնի առաջին օրերը, թէ ինչպէս հեքիաթներու դիցուհիի մը տաք ծոցին մէջ հեւ ի հեւ կը թաւալէր, անձնատուր անոր կախարհիլ զգուսնութեան: Հիմա, որ գերբնական արկած մը հրկիզած էր իր սիրտը արմատիք երազներով բեռնաւոր, գիւղացի հարստ աղջկայ մը անշիջելի կրակով՝ ինչպէ՞ս պիտի կրնար Էմիլիէն ըսել, պատկերացնել իր հոգիին այրուցները այս նոր կրակէն, որ շարիւնէր, շիտոտէր ազնուական սիրտը այդ փափկասուն կնոջ:

Կնոջ անկեղծ նուիրումը, իր մէջ սիրոյ հետ յարգանքի ածուններ ալ բացած էր: Իր մտերմութեան առաջին օրէն, Էմիլիէն ցոյց տուած էր սիրուհիի մը ու ջրով մը աղապատանքը:

Միլիտ չփոթ, շուտ ու մտատանջ վիճակը իր ներքին սուր տազնապի հայտնի էր:

Էմիլիէն, կը գզար ցուրտ հովի հասանք մը, որ տեղատարափէ մը առաջ միջոյրտը թաց պաղութիւնով մը կը շաղարիէ:

Միլիտ յաճախակի բացակայութիւնը կը մտահոգէր զինքը ու ան դժկամակօրէն թէն, բայց վճռեց հասկնալ պատ-

ճանները, վերջ տալու համար Մկրի տխուր հոգեվիճակին:

Բաժանումի դժխեմ Հեռանկարը խուժողուժ հարուածի մը ուժգնութեամբ խոցոտեց Էմիլնէի սիրահար հոգին. արտօսելի մարգարիտէ կաթիլներ զար- զարեցին անոր մեղմանուշ աչքերը:

Մկրի կարկամած, նախուն բառե- րը անզօր էին մեղմացնել անոր կակիժը:

Էմիլնէ խանրմ անմխիթար, նման էր յեղակարծ եղևամէն թօշնած, դլխահակ վարդի մը: Յաջորդող քանի մը օրերը, ան թունաւորումէ մը սպաքինող լըջ- ւած ու սրտակոտոր էակ մ'էր, որ կ'ափսոսար շճեաժ ըլլալուն համար:

Ժամանակը՝ ամենարոյժ ու իրա- տող, կըցաւ հաւասարակուել ու սըր- բադել անոր դատողութիւնը:

Էմիլնէ ծնողք տեսած չէր: Ան ո՛չ ծանօթ էր իր իսկական տարիքին, ո՛չ ալ զինք կերտող կաւին ցեղային ծագման:

Կը յիշէր միայն փոքր դիւղ մը, օ- րերով հեռու ձորի մը մէջ, սւրկէ կ'անց- նէր աղմկահոտ փոքր դետակ մը, որուն մօտ կար շատ անխնամ ձգուած դերեղ- մաննոց մը, ուրկէ սոսկուածով կը փախ- չէր:

Լսած էր որ արեւմաբէն ետք, այ- լանդակ մեծ ժանրքներով ճիւղներ կուզային դիակներ կրծոտելու: Գիշեր- ները ան կը լսէր դիակներու լացի ձայնը:

Կարօտով կը յիշէր բարի ու ալիւնք ծերունին, որ զինք կը խնամէր, ու ա- նոր ճակատը ճերմակ գիրուկ կոմը: Կը յիշէր փայլուն կոճակներով զինուորը, որ պարբերաբար կ'այցելէր ծերունիին, ձիուն պարկը ուտելիքով ու հազուստով լի: Յետոյ խոր վշտով կը յիշէր, թէ ինչպէ՛ս տարիներ ետք, երբ ինք դեռ պատանի մ'էր, զինուորը՝ որուն քեռի ըսել վարժեցուցած էին, եկած էր օր մը, երբ ան գրեթէ ալեւորութեան սե- մին էր հասած, առած զինք իր ձիուն կոնակը ու օրերով ճամբորդած լեւնիք ու գեաեր կտրելով, զինք բերած էր հօս, այս առևը հայկական թաղի մէջ ու ըսած, որ սակէ հոք դուն ի՞մ կինս ես. դուքս, փողոց պիտի չելլես, տասնց (Շար. 1)

ծածկուելու:

Էմիլնէի աչքերուն մէջ միւտ նուազ- կուն հառաչանք մը կը շողար: Երկար ու սև թարթիչներուն շուքին տակ, աչ- քերուն շինջ ջուրերուն մէջ թաղուած կը ցոլային իր թուխ ու թափանցող բի- բերը: Իրարու մեղմօրէն կոթնած բարակ շրթներ, որ երբ կը խնդար՝ ի յայտ կու դար կեռասի պէս կարմիր, մեղրահամ լեզուն:

Մարմարի պէս ողորկ, նուրբ թլիկ մը, որ կըբոտ անյազ համրոյէ մը կը խամրէր, արեան բիծեր կը ձգէր:

Ձգայարանքներու անխճածիլի դա- սաւորում մը, ուր չկար դժի ու յափի ո՛չ մէկ աննիրդաշնակութիւն: Թրջուհին անվիճելիօրէն գեղեցիկ էր: Միտ մի- նակ, որբ ու անտիրական, գոյութեան իր պայքարին մէջ, ան իր փոքր տարի- քին տիրացած էր կշռելու ու դատելու իմաստութեան: Հակառակ գեղեցիկնե- րու յատուկ մեծամտութեան, ան ող- ջախոճ էր, գրեթէ խոհուն: Թշնամանք մը, կամ անկիրթ վերաբերում մը դի- տէր շէզոքացնել անքինախնդիր ու շնորհալի, ներողամիտ նայուածքով մը, համակրանքի ջերմութիւն մը ստեղծելով իր շուրջը: Ողջմտութիւնը բնազդային զգայարանք մ'էր իր մէջ ու ան լսեց վեհանձն օրտի մրմունջներուն, կըցաւ տիրապետել իր ալեծուփ սիրոյն՝ եւ թոյլ չտուաւ, որ իր տարփանքը ը- յայ ինքնասէր ու նուաստ զէպի այդ գերզգայուն անփոք ճայ տղան: Կրճ- րունէր, թէ տաժանելի էր հրաժարել զայն սիրելի, մոռնալ անոր պատանիի զօրեղ բազուկներուն հեշտացուցիչ ճըն- շումը իր բորբոքած իրանին շուրջ, այր սուհանդերձ՝ ան խոհական էր կանխե- լու ահաւոր սճիր մը, որ կրնար ծնունդ տունել անտաւոր ազահութեանէ մը:

Կեանքի անստոյգ վազբին, դժուար էր գուշակել, թէ ան՝ օր մը, ո՛վ կրնար ըսել, թէ դարձեալ զայն պիտի չսիրէ. հիմա, սակայն, որ Մկր բնական ու հա- րազատ սիրով մը կ'ազնձուէր, թրջու- հին, խղճին առջև պարտական կը զգար զօրավիլ ըլլալ անոր՝ սիրողի մը ու ջրոջ մը նման:

Ա. Ե.

Ծ Ա Ռ Ը

Քարճարաքիւումն աւ վիթխարի
Ոսկայ ծառի, կամաչ ոստիկն եւ եւ չնչին,
Քանի՛ դարեր ինննից՝ առաջ,
Ապրել է այս ծառը հսկայ,
Արմատներովն իր հաստատուն:

Քանի՛ ոստիկ դարձել եմ ոստ,
Քանի՛ սստեր դարձել եմ գիւղ,
Ու գարդարել ծառն այս շքեղ:

Այս վիթխարի, բարճարաքիւումն
Ծառի ոստիկն եւ եւ չնչին,
Փռքիկ ոստիկ՝ փետուրի պէս,
Օրորում եւ մտն շնչից:
Օրորում եւ, սակայն անվախ
Գիտեմ եւ էլ պիտի դռնում,
Ոստն ու գիւղը այս մայր ծառի,
Եւ արձակեմ նոր ոստիկներ,
Ապագայում շքեղ ծաղիկ:

Ես կարող եմ լոկ միւղ դառնայ,
Բայց ոչ թէ ծառ՝ մի վիթխարի,
Ծառն կազմեցին պապերը իմ
Ձէի տեսել երբ ոչ մի ինչ այս աշխարհից:

Ծառն կազմեցին պապերը իմ,
Հիմի եւ էլ պապերիս պէս,
Պիտի խմբուեմ այս բուն ծառին
Միասնութիւն միայն փնտռեմ,
Չքնաղ ծառի խիտ անտառից:

Աշխարհն անտառ,
Ազգս ծառը՝ այն վիթխարի,
Իսկ եւ, իսկ եւ, փռքիկ ոստիկ,
Ու գաւակը շքեղ ծառին այն վիթխարի:

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ

ԱՐԱՔՍԻ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Գ Ե Ր Ե Ջ Մ Ա Ն Ն Ո Ց Ը

Ակնէս ելաւ «mètre»-ին մութ աստիճաններէն, ձեռքին՝ ծաղիկներուն գլուխները կախ էին յանցանքի մէջ բռնուած աղջիկներու գլուխներուն նըման: Դուրսը լոյս կար ու հակառակ թիչ մը պայծառ օդին, շատ մարդ չկար գուրսը: Ակնէս աչքերը թարթեց եւ նայեցաւ շորս կողմ... Օրերէ ի վեր բնութալացած էր այս ճամբուն, խանութներուն եւ տուներուն, անձերուն եւ անոնց շուններուն... ահա նոյն barmanը, որ կը նայէր իր ձեռքի փունջին, նոյն մարդը, որ ամէն առաւօտ «croissant» մը կը կերցնէր իր շունին, նոյն պտուղը, որ զիրքեր կը ծախէր մայթին վրան, նոյն...

Ակնէս աննարկը յառեց իր ծաղիկներուն. թիչ մը արեւ ինկած էր անոնց վրայ, զանոնք հեւքով ճզմեց կուրծքին, առաքեալի մը պէս, որ սիրելի խաչը կը ճզմէ որտեղ մօտիկ: Հիմա, սրտածարաւ սիրահարի նման, չրթունքները կը քսէր անոնց, կը հոտուրաւ զանոնք, եւ կը գինսմար անոնց բոլորով...

Որովհետեւ այդ ծաղիկները հասարակ ծաղիկներ չէին. անոնք հիմա իրմէ մաս մըն էին, հիմակուայ գոյուքներէն բեկոր մը... Հիմակուայ արեան չրջանը...

Եւ այդ ծաղիկները պիտի դրուէին շիրիմի մը վրայ...

Թէեւ ոտքերը խիստ կը ցաւէին, սակայն Ակնէս ուզեց քալել այդ օր, քալել առանց զգալու որ կը քայլէ, առանց մտածելու, այդպէս, մէկ ձեռքը դրպանին, իսկ միւսով՝ ծաղիկները գրկած...

Դարձաւ յարակիր ճամբէ մը, որ կը տանէր Monparnasseի գերեզմաննոցը... Հիմա կը շտապէր կարծես, քայլերը արագացուցած, կարծես ուշացած ըլլար շատ սիրելի ժամադրութեան մը,

շատ թանկազին հանդիպումի մը, որուն համար պատրաստուած ըլլար ժամեր եւ զօրեր...

Եւ մէկը կարծես կը հետեւէր իր քայլերուն... Ակնէս չգիտցաւ ինչու, սակայն զգաց որ շարժարանք կար այդ քալուածքին մէջ, տեսակ մը վտանգըւած անորոշութիւն եւ խոչտանդուած սազնապ...

Բնազդով գլուխը ետին դարձուց... Թէեւ երբեք սովորութիւն չունէր ետեւ նայելու... սակայն այս անգամ չես գիտեր ինչ խաթարուած տենդէ բռնուած, նայեցաւ երիտասարդ տղու մը կոտորտըւած բիբերուն մէջ... ա՛հ, որքան երկար եղաւ այդ երկվայրկեանը եւ որքա՛ն զուռով...

Խոնաւ մայթին վրայ զանդադեցոյց քայլերը... այդ ազան ալ գրկած էր փունջ մը սրտին վրայ... այդ տղան շատ կը նմանէր իրեն... Ակնէս իր միտնակութեան մէջ զգաց որ մէկը կար իրմէ թիչ մը հեռու, բիւրեղացած էակ մը միտակ, վերացած, եւ որուն վէրջոտած բիբերուն մէջ բուպէի մը ընթացքին կտրուցած էր իրականութիւնը...

Հիմա, քով-քովի էին գրեթէ... եւ թեթեւցած կարծես, իրենց եթերային արշաւին մէջ...

Ակնէս տեսաւ իր ամբողջ կեանքը գծագրուած այդ երկար եւ կարճ ճամբուն վրայ, առաւելութիւն սեւ եւ ճերմակ հեքիաթային տեսողութեան ընթացքին...

Եւ յետոյ, նայեցաւ տղուն... Այդ երիտասարդը սեփ-սեւ հագուած էր, եւ ան ալ ծաղիկները մը ունէր դաստակներուն ներքեւ... ճերմակ լիւաներու կապ մը, խնամքով փաթթուած, ամուսնանալիք աղջիկներու պէս մաքրամտօքուր...

Տղուն սեւ մազերը ցրուած էին ար-

Նոր լայնածառու ճակտին վրայ, եւ խը-
րոխտ profile կը ցայտեցընէր ներքին
պայթարը... Ակնէս լաւ տեսաւ անոր
ցառէն եւ ապրումէն կծկուած չրթունք-
ները, որոնց դաւկութիւնը մոռցուած
ճրագի մը տպաւորութիւնը կը ձգէր...

Այդ տղան ալ իրեն պէս էր, աւելի
մինակ, քան այդ ծաղիկները, քան Mon-
pamasse-ի մայթերը այդ ժամուն... Եւ
արեւ կար քիչ մը այդ օր, Փարիզի ա-
զահարեւ կ'երգէր այդ օր, տխուր,
չարականներու նման երգ մը...

Աստիճալը կը հեւար քայլերու
ուժգնութեան տակ, կարծես վրէժ լու-
ծել ուզէին գեանէն իսկ, որուն խորքե-
րը լի էին սիրելիի արիւնով, մարդոց
մեռած շունչերով, մարմիններու խող-
խողուած նիւթերով...

Այդ հողերը, իրենցմէ աւելի կ'ապ-
րէին... Հասած էին դերեզմանատուն-
մտան երկուքն ալ... այնպէս կը թուէր,
որ երկուքն ալ կ'ուղղուէին նոյն շիրի-
մին կողմը... երկու գերեզմաններ նոյն
չարքին վրայ էին... երկու ճղճիմ,
թրթուան, կծկուած գերեզմաններ,
փոքրիկ խաչերով, ճերմակ մթութեամբ
պատանքուած...

Կը սարսուային երկուքն ալ... տան-
ջանքով, նայեցան իրարու... երկուքին
ալ կոկորդիներուն մէջ յուսահատ ճիչ մը
պայթեցաւ:

Մինակ էին տիեզերքին եւ իրարու
դիմաց:

Ակնէս աչքերը յառեց իր դէմի շի-
րիմին, ի՛ր շիրիմին,
Angelina, née 1952
Morte 1960

Ակնէսին աչքերէն արցունք չէր որ
կը հոսէր, այլ արտակարգ կրակ մը,
զաղջ արեւի մը ճամանչներէն աւելի
ջերմ... սիրտը հիմա կարծես կը դեզե-
րէր խելացիոր, պարիկի մը մոզական
քայլերով...

Կը զգար որ ինք տէրը չէր իր սըր-
տին...

Կրկին նայեցաւ աջ կողմը... երի-
փարարող տղան հիմա իր ծաւալուն ճա-
կասը կոկորդիցած էր պաղ քարին եւ

կը հեկեկար... փոքրիկի մը պէս...

Ակնէս, ցատուով եւ անընթացա-
յելի պոռթկումով մը ժօտեցաւ տղուն...
Եւ ակնածանքով, խորին պաշտամուն-
քով մը, աչքերը յառեց տպաւորութիւն.

Gerard, né 1952
Mort 1960

- Ժերար... - կը մըմնջար երիտա-
սարգ տղան հողիւ լսելի ձայնով... -
Ժերար, փոքրի՛կ տղաս...

Ակնէս չի՛նայու համար կոթնեցաւ
չիրիմին: Ծերմակ լիւաները կը հանդ-
չէին տախտակէ խաչին շուրջ դարնուած
հայ կոյսերու նման... արիւնլուայ...
այո՛, Ակնէս արիւն տեսաւ անոնց կեր-
պարանքին վրայ, բայց կարմիր, փոք-
րիկ տղու արիւն... բարստող արիւն...

Ձեռքը դբաւ տղուն ուսին, այն
տղուն, որուն անունն իսկ չէր գիտեր:
- Ակնէս է անունս, - մըմնջեց անոր
ականջին...

Տղան կը խօսէր հիմա առանձին,
բրերը լայն բացած, կզակը կոթնցու-
ցած բազուկին եւ մազերը տուած փոք-
րիկ հոգին:

- Դասարանին առաջինն էր. կինս
մեռաւ ծննդաբերութեան ատեն. մի-
նակ մեծցուցի դինք. այնքա՛ն ուշիմ
էր, այնքա՛ն տաղանդաւոր...

Աշակերտներ կը մըցէին իր հետ, ոչ
մէկը սակայն կրնար հասնիլ իրեն...
ան արդէն ութ տարեկանին դաշնակ կը
նուագէր հանճարեղ երաժշտագէտի մը
պէս... աւելորդ ժամեր կ'աշխատէի՝
դասերը վճարելու համար. գիշերները,
կնոջ մը տեղ, կը փաթթուէի իր վզին,
կը տաքընէի մեր էութիւնները. «ան»
այնքան տխուր էր առանց մօր... աչքե-
րը լիճերու պէս լայն, երկա՛ր կը նայէր
ողորժած մօր նկարին... Երբ արկածը
ունեցաւ՝ անոր փշրուած, փոքր, մըմ-
լուած զանկին վրայ դրի շրթունքներս,
անոր կոտորած, արիւնաքամ սիրտը ա-
ռի մեռեցորու մէջ... եւ չմեռա՛յ...

- Հերի՛ք, - պոռաց Ակնէս յարտա-
փահար. ան կը դողար հիւսնդոտ այծի
մը պէս...

- Ո՛չ, Ակնէ՛ս, ճիշդը կը խօսիմ,

հաւատա՛ ինծի, այդ անհասցած սիրտը իմ ալ սիրտս էր... իմ ամբողջ հոգի՛ս, երազներս, կեանքս...

- Տե՛ս, աղա՛յ, եկուք հետս... Գիշ մը մոռցիր զանորք գոյութիւնը... ես ալ Անժէլինաս կրօնացի... ան ամուսնոյս աղջիկն էր, շատ կը սիրէի զայն... որք մըն էր... սակայն ան չկրցաւ զիս սիրել... «Ինչ» կը փնտռէր, իրական մայրը, ան՝ որուն երակներուն շերտէն սպրդած էր... մեռաւ thyphoidէ, ջարդարօր օրերէն մէկուն... դատապարտեցին զիս... ըսին՝ որ դարմանը դիւրին էր, սակայն ես չի ուզած անոր ապաքինումը... սակայն շա՛տ կը սիրէի զայն... օրեր խելագարի նման այդ որք աղջիկը կը ցցուէր դէմս, հաշիւ կը պահանջէր ինձէ՛. ամուսնոյս միակ դասակն էր, որ խոտացած էի պտահել քնքշօրէն, դեղեցիկ ժանեսակի մը պէս... ամուսինս լքեց զիս, Փարիզ եկայ. կը փնտռեմ Անժէլինան, ամենուր... Հո՛ս, ուրիշ տեղ...

Տղան սառած աչքերով կը նայէր իրեն. անոր շրթունքները շարժեցան եւ բռտերը ինկան դուրս՝ վիժած զաւակներու պէս...

- Ուրեմն... Անժէլինայիդ չէրիմը չէ՞ ստիկա:

- Ո՛ւ, Անժէլինաս կը հանդիս ծնընդավայրիս մէջ, սակէ մղոններով հեռու երկրի մը մէջ, որ անծանօթ է քեզի, հոն կ'սպրի նաեւ ծնողքս, քոյր... եղբայր... քանի մը բորենիներ, վիշապներ, բուեր... եւ ուրիշ սիրելիներ... շա՛տ սիրելիներ...

- Asses, - պոռաց տղան, Ակնէսին ուտերը ճզմելով ափերուն մէջ... այս Անժէլինան ուրիշ մըն է, չէ՞... ըսէ, խօսէ՛... կուտաս ուրիշ աղջկայ մը համար:

- Այո՛... ճիշդ նոյն թուականին ծնած եւ մեռած:

Եւ Ակնէս չէյնալու համար՝ իր փոքրիկ գլուխը դբաւ այդ տղուն ուսին,

եւ շարունակեց մեղմ, մեղեդիի մը նման.

- Սակայն օրդեզրած եմ այս չէրիմը, ատիկա իմս է... Հոս կը զգամ, հո՛ս կը շնչեմ օրերէ ի վեր... անցեալ շաբաթ մօրը հանդիպեցայ... Այս Անժէլինային մօրը...

- «Thyphoid»էն մեռաւ... ըսաւ ինծի լալով... Հասկցայ որ միակ շէի այդ ստեն, թէ՛ ունէի ուրիշ մը ինծի համար լացող... Ամուսինս լքեց զիս... յիմար մըն էր... societén մորթած էր անոր ուղեղը... Ա՞՞ խելագարի մը պէս կը մտածէր... եւ ես կուլամ այս աղջկան մահուան վրայ...

Հիմա, քով-քովի, կը քայլին գերեզմանատունէն դուրս: Դեռ տղան, շուարած, չփոթահար, կը նայէր Ակնէսին շատ գեղեցիկ դէմքին, անոր հիւսանդազին ճակատին, քաց վարդադոյն լրթունքներուն... ճերմակ եւ բարակ վզին...

Քայլեցին այդպէս վայրկեաններ, լուռ, խորհրդածելով... իրենք իրենց հարցումներ ուղղելով, ներքեապէս պայքարելով... տատանելով իրենց գոյութիւններուն առջեւ... այդ վայրկեանը կը նմանէր անհաւատի մը աղօթքին...

Հասած էին «Coupole»ի քով.

- Իսկ անո՞ւնդ, անուկդ չըսիր ինծի, - ըսաւ յանկարծ Ակնէս տղուն դառնալով, կարծես տղան պիտի փախէր յաւէտ, անունը շալկած հոգիին խորերը... եւ վախնալով որ ա՛լ երբեք չի տեսներ զայն...

- Անունս Ալպէր է, - ըսաւ տղան շատ մեղմ ձայնով, եւ բռնելով Ակնէսին մատները իր խոնար անքերուն մէջ.

- Հինգշաբթի, նոյն ժամուն... չէ՞... - ըսաւ:

Նո՛յն ժամուն... եւ միշտ... մինչեւ ուրիշ դոյութիւն...

Ակնէս այդպէս ճանչցաւ Ալպէրը, որ երիտասարդ դատաւար էր Սորպոնի մէջ:

(Հատուած «Ողբակեր» անտիպ վէպէս)

Ա. Չ.

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱԻԷՐ

Պարոն Գրիգոր Տէր Ներսէսեանը, յիսուննոց մարդ մըն էր, երբ սկսայ ճանչնալ զինք:

Հոյտ ձօրճին կը նմանէր, անշուշտ միայն մարմնով: Շատ ուրախ պիտի ըլլայինք, եթէ զլուխով ալ նմանէր, բայց առանց անոր ալ արդէն ժողովի անդամ էր:

Ամէն ժողովի, ժամանակէն հինգ վայրկեան առջ կուգար կը նստէր ու ասիկա նկատողութեանը կը յանձնէր ժողովականներուն:

Ժողովը կը սկսէր քանի մը հօդինէլուրու բացակայութեան:

- Ներողութիւն, պարոն ատենապետ, միտերուն շրջաբերական չզնա՞ց:
- Այո, ամէնուն զնաց, ինչպէս ձեռն:

- Չ'ըլլա՞ր, պարոն ատենապետ, չ'ըլլար առանկ, պէտք է ամէնն ալ ճիշդ ժամանակին զան ու ժողովը պաշտօնապէս սկսի:

Շատ կը սիրէր պաշտօնականութիւնը, կ'ուզէր որ ամէն ինչ պաշտօնական հանդամանք ստանայ, ամէն ինչին պաշտօնական ֆալթիւք կ'ուզէր, ստորագրութիւնով, դրոշմաթուղթով: Նոյնիսկ լուկայէն բանջարեղէն դնելէ ետք, նպարավաճառէն կը խնդրէր, որ հաշիւները պաշտօնապէս ներկայացնէ:

Ինքը աղօթարանի երեւելիներէն էր, խօսքը կշիռ ունէր: Երբ իր ազան դասարանը կրկնեց, խնդիրը պատուոյ հարց նկատելով՝ անօրէնը դպրոցէն հանել տուաւ:

Տնօրէնին դպրոցէն հեռանալէն ետք տարի ետքն իսկ ասիկա նիւթ էր իրեն:

- Կը դարձանամ, պարոն Սարգիս, - կ'ըսէր զովինին, - ինչպէ՞ս անօրէն մը կը յանդիմի հողաբարձուի մը տղան նոյն դասարանը պահել, նոյնիսկ եթէ տղան հինգ դասէ ինկած ըլլայ:

Իր ժողովականի հանգամանքը անակնկալ դէպքի մը պատճառով ստացաւ: Սկիզբները ռեւէ մէկուն մտքէն չէր անցնէր, թերեւս ի՛ր ալ մտքէն չէր անցնէր անանկ բան մը: Բայց երբ եկեղեցական ժողովի անդամներէն ծերունի Իսահակ Յղբայրը մահացաւ, անոր տեղը յարմար տեսնուեցաւ Գրիգոր Եղբայրը, որ բարի, աստուածավախ, ամէն ինչին «այո» ըսող երիտասարդ մըն էր: Այդպէսով մնացուն ներկայացուցիչներէն մէկը եղաւ մեր եկեղեցիին:

Մեր եկեղեցիին պատմութեան մէջ առաջին երիտասարդ ժողովականներէն էր, անկէ զատ երիտասարդ ուսեալ տղայ մըն ալ առին իրենց մէջ, բայց ան հազիւ մէկ տարի կեցած՝ զընդդիմադիր էր, ըսելով զուրա հանեցին, մինչդեռ տղան բան չէր ըսած, միայն առարկած էր կնամովի մը ժողովական ըլլալուն, ու զրամի զեղծարարութեամբ ամբաստանուած ժողովականի մը ժողովական մնալուն զէժ:

Երբ նոր երէցը եկաւ մեր եկեղեցին հովուելու, ժողովականի աթուռները նոր երիտասարդներով լեցնելու զարգացում մը յղացաւ, բայց յետոյ անդադարձաւ, թէ յարմարագոյնները Պաղտասար եւ Թադէոս Յղբայրներն են ու ասոնց պէտ մարդիկը:

Սակայն, Գրիգոր Յղբայրը մնացած էր, քանի որ բերանը բնաւ չէր բացած,

ու ինչ որ երէջը ըսած էր, «այո» պատասխանած էր:

Բայց Գրիգոր Եղբայրն ալ վարժուեցաւ խօսելու, այլևս վառվռուն դարձաւ, զործունեայ: Անգամ մըն ալ, այդ սկիզբներն էր, ընդդիմադիրներուն միացաւ, բայց անդրադարձաւ, թէ անոնք միշտ զուրսն են, ինքն ալ զուրսը չմնալու ու հոն չմտնելու համար՝ փոխեց իր ուղղութիւնը եւ դասը առածի պէս՝ եկաւ մտաւ երէցին հովանիին տակ, հոն ուսնացաւ, բարձրացաւ ու հոն մնաց: Ամէն կողմէ սկսան յարգել զինք ու զգաց, թէ իրապէս եկեղեցիին երեսելիներէն է:

Արտաքին կերպարանքին ալ ուշադրութիւն դարձուց, շարաթը անգամ մը սափրիչի սկսաւ երթալ, ամէն օր կ'ածիւռէր:

Եկեղեցիին փայլուն երիտասարդներէն էր: Խօսելու ձեւն ալ փոխեց, կամաց-կամաց սկսաւ բարձր բաներ գործածել: Բառարան մը գնեց, օւր, ամէն ստիթով, բարձր բառեր կ'սրոնէր ու անոնք կը գործածէր խօսակցութեան մէջ, ամէնէն շատ գործածած բառերը (Այնուամենայնիւ) եւ «Եւայլն բան մը», բառերն էին:

Ամուսնացաւ, տարիներու ընթացքին վեց հաս դաւակներ ունեցաւ, ամէնն ալ շնորհալի եւ տաղանդաւոր երիտասարդներ դարձան, մէկը բանաստեղծ դուրս եկաւ, երկրորդը զբոսգէտ էր, միւս մէկ հատը պատմաբան, նկարիչը եւ երաժիշտն ալ կար անոնց մէջ, միայն թատերադեր չունէին, այդ ուղղութեամբ ալ ամենապարկի տղուն վրայ դրած էին իրենց յոյսը:

Ինքն ալ արդէն եկեղեցիին Լոյս ձօրան էր:

Սկիզբները, չրեթէ դպրոցի հոգաբարձու չէր ըլլար, ուրիշ ժողովներու անդամ կ'ընտրէին զինք, մինչ իր երազը դպրոցի հոգաբարձու ըլլան էր, քանի որ հարիւրաւոր աշակերտներով դպրոցի մը հոգաբարձու ըլլալը քիչ քան չէր: Սկսաւ շատ երթալ-դալ երէցին քով ու խօսել միւս ժողովականներուն, թէ

յարմարագոյն անձը ինքն է:

Տարի մըն ալ փափաքներուն զոհացում տրուեցաւ:

Պաշտօնական թուղթ մը պատրաստուեցաւ ու պաշտօնապէս հրատարակուեց զինք հոգաբարձուի պաշտօնին:

Առաջին նիստին իսկ ատենապետ ընտրուեցաւ, շատ յուզուեցաւ, այդ պաշտօնին ինքզինք անյարմար տեսաւ, բայց խոստացաւ իր ամբողջ կարիքին ընել՝ դպրոցին եւ եկեղեցիին վերելքին համար:

Ժողովէն ետք, ժողովականները ընկերացան իրեն մինչեւ տուն, ամէնն ալ զովեցին զինք, իր հեռատեսութիւնը, իմաստութիւնը, վարուելակերպը, համբերատարութիւնը յիշեցին:

Այդտեղ միայն լուսանկարիչներ եւ թերթի թղթակիցներ պակաս էին:

Անուշեղէն բաժնուեցաւ հիւրերուն, խմիչք հրամցուեցաւ ու խորին յարգանքով ձեռնուելէ ետք, մեկնեցան հիւրերը, ինք ուրախ էր ու նոյն ատեն յուշաւած: Իրբեւ անոնց խնամբ ծառան, ուղեկցեցաւ մինչեւ դուրսի դուռը, վերադարձաւ, նստաւ թիկնաթոռին յոգնածի, պարտուածի երեսօթով, սկսաւ պատմել, թէ ինչպէ՞ս զինք իբր յարմարագոյն անձ ատենապետ ընտրած էին: Ամիսներ տեւեց իր հոգաբարձու ըլլալու պատմութիւնը:

Իր կենսապատմեան մէջ ուշագրու գէպք մըն էր Գրիգոր Եղբոր ատենապետ ըլլալը, իր բուն կենսապատմեանը այստեղէն կը սկսէր ու հոս ալ պիտի վերջանար: Եթէ առանց այս պաշտօնին մեռնէր, շատ-շատ պիտի թաղէին եւ ունէ մէկն ալ պիտի չզիտնար իր մասին, նոյնիսկ իր զբոսգիները շատ-շատ իրարու պիտի ըսէին զբացին մեռեր է: Բայց ամբողջ կեանքը մայեցուցած էր եկեղեցիին մէջ, իր ամբողջ կարողութիւնը եւ ժամանակը ի սպաս դրած էր եկեղեցիին ու դպրոցին:

Իսկ հիմա որ հոգաբարձութեան ատենապետ էր, կ'ուզէր որ լաւ վարուէին հետք: Իրեն հետ պաշտօնական հանգամանքով չիօտոդին հանդէպ որոշ արհա-

մարհանջ կը անուցանէր: Այլեւս խելացի էր: Եթէ խելացի չըլլար, զինք ստեղծուած կ'ընտրէին, ուրիշները նշանակէր որ խելացի էր: արդէն ո՞վ կար իր մէջ զատ այդ անուշիկ յարմար: Այլեւս ճշտօն այն էր ու ճշտօն՝ ո՛չ:

Առաջին օրէն պաշտօնականութիւն մտնող իր բոլոր գործերուն մէջ, Ամէն ինչ պաշտօնական Փաքթիւրով կը վերջանար:

Առաջին շաբաթն իսկ ժողովականները պաշտօնական նամակով մը ժողովի կը հրահարուէին, կարեւոր հարցեր քննելու համար:

Յաջորդ շաբաթ, որոշեալ օրը, իր աստիճանական աստիճան նիստը Փացտած կը յայտարարէր: Առաջին տարիով իսկ, կ'որոշուէր ուսուցչական կադրը հաւաքովի հրահարել: Այդ օրը ընէ սկսաւ մաքուր ըսելիքները պատրաստել. այդ օրերը բառարանը շատ գործածուեցաւ: Ամէն անգամ որ տունը ասանձին ըլլար՝ սեղանին առջեւը կայնած՝ բարձրաձայն կը խօսէր, ըսելիքները պոչ կը սորվէր:

Հաւաքովի շատ յաջող անցաւ, մանաւանդ իր ճառը շատ հաճուեցաւ, ամէնն ալ դժուարեալ որոտով իրենց տունները վերադարձան:

Յաջորդ ժողովին, նորէն կարեւոր հարցեր քննելու համար՝ պաշտօնական հրահարները զացին ժողովականներուն:

Երան ժողովականները որոշեալ ժամուն ու անցան օրակարգերուն: Ճաշկերոյթ մը կազմակերպել էր իրենց միտքը ու մէկ ժամ տեսող վիճարանութիւններէ ետք, որոշուեցաւ ճաշկերոյթը ընել շաբաթ իրիկուն մը ու ամբողջ աշխատանքի հողը տիկնանց միտքեան վրայ ձգել: Այդ օրն ալ յաջող անցաւ:

Գարգիսն մէջ ամէն ինչ զիւրին կը կարգադրուէր, բացի անօրէնի խնդրէն, ամէն տարի նոր տնօրէն մը կուգար փոխարինելու հինը, պարզապէս այսինչ Հոգաբարձութիւն կամ եկեղեցական ժողովի մէկ անդամին պատճառով, կը պատահէր որ տնօրէն մը մինչև դպրոցական շրջանին կէսը հաջի՛ւ ասանելի ըլլար:

Յաջորդ տարին նոր մը կը հրահարէին:

Տարի մըն ալ նախագահ աստեղծի պատուակալ անդամներէն մէկը եղաւ, այդ տարին ալ, իր բախտին, Հանրածանօթ պարտն Տիգրանեանին դատաւարութիւնը տեղի ունեցաւ: Արդեօք այդ Տիգրանեանը Հանրածանօթ մէկն էր, թէ ինքը պատմելէն-պատմելէն Հանրածանօթ դարձուց զայն, որոշ չինք զիտեր, միայն մէկ բան գիտէնք, որ ամբողջ ութ տարի, ամէն իր տունը հիւրութեան եկողին՝ Տիգրանեանին դատաւարութիւնը կը պատմէր: Ծատ կը խօսէր այդ դատաւարութեան մասին: Իր եւ երկու բարեկամներուն ազգու միջամտութեան շնորհիւ էր, որ դատաւարութիւնը տարբեր ընթացք ստացած էր:

Որքան տարիքը կը յառաջանար, միտքը աշխարհ կը նահանջէր կարծես: Նոյն բանը հազար անգամ կը պատմէր: Ժողովները, ընդհանրապէս, իր պատմութիւններով կը վերջանային:

Միշտ ալ գեաղան մը, բարձրաստիճան պետական մարդ մը, կամ զորավար մը իրեն գործ ազգայնաց կ'ըլլային, իր ըսելով՝ նախագահին հետ իսկ անոր բարեկամ էր: Պատմածներն ալ շատ կը ճիշդագործէին. կարծես միտքը չէր կրնար հակազդուել: Ամերիկա երթալը պատմելու ատեն՝ իր ազուն ամունտութիւնն ալ պատմեց, ու մեծ աղջկան երկրորդ դասին մկրտութիւնը:

Ամէն անգամ որ հիւրերու հոտը ասնէր, գրավաճառէն թեթեւ մը կը գնէր, կը կարգար ու իրիկունը մէկ-մէկ կարգացածները միշտով նիւթ կը բախար:

Վերջերս, ինքզինքը գրադասութեան հասկցող ալ ըրաւ: Տղոց դասադիրքերը ուղի կ'անցընէր, կը հարցնէր այդ կամ այն բանաստեղծին մասին: Երբ, օրինակ, Գրիգոր Զօհրապէն մասին խօսք ըլլար, կ'ըսէր.

— Մեր լուսագոյն զրոյններն է, անոր պէս գրեթէ չկայ:
Տունն ալ կրնը յոգնած էր իրմէ,

քանի որ միշտ կը գանգատէր իր առողջական վիճակով, գանազան տեսակի դեղեր կը գործածէր, իր գործածած դեղերը, սոխ, սխտոր, սուրճ կամ բանջարեղէնի գանազան տեսակներ կ'ըլլային:

Տարի մը կաղամբ շատ կերաւ, յետոյ՝ հազար սկսաւ ուտել, իտրհելով որ անկէա լաւագոյն դարձանն է: Ամէն եղանակի նոր բան մը կը ստեղծէր, ժամանակ մըն ալ տունը տղրուկներով լեցուն օրուակ մը պահեց:

Ամէն ինչ կարգով կը գործածուէր, սկիզբները շատ օգտակար կ'ըլլային անոնք, ցաւերը ճիշդ դանակի պէս կը կտրէին: Քանի մը ամիսներ շարունակելէն ետք, ստիպուած ուրիշ բաներ կը փորձէր:

Բայց առողջութիւնը երթալով կը վատթարանար: Մարմինը առաջուայ տոկունութիւնը շունչէր, միտքը յոգնած էր: Օր մըն ալ անկողին ինկաւ: Իժիշկներ Լիան, քննեցին, ամէն անդամուայ պէս բան չհասկցան, բայց գանազան տեսակի դեղեր գրեցին, գացին: Մարդը գրեթէ չէր խօսեր, միայն, երբեմն-երբեմն, գլուխը կը շարժէր: Ի՞նչ էր արդեօք հիւանդութիւնը. չէին հասկընար, մինչև ութսուն տարիքը արիարար կեանքը ապրած էր, աշխատած հելի հել ու վազված ժողովէ-ժողով, իսկ հիմա, յոգնած մարդու երեսոյթով՝ պառկած էր կոնակին վրայ:

Հիւանդանոց փոխադրեցին: Հոն ալ հոտոտեցին, քննեցին մարմինը, յետոյ՝ մէկը, յետոյ՝ կղկզանքը ու եզրակացութեան մը չյանգեցան:

Մեր էր, պէտք էր մեռնէր, բայց չէր մեռներ, սահմանը հասնելուն՝ ոչ ըսելու պէս գլուխը կը շարժէր ու չէր մեռներ:

Վիճակը ծանրացաւ, ետ աուն դրուկեցին ա՛յն մտքով, որ երկու օրէն կը մեռնէ, բայց աուն գալէն ետքն ալ յամառօրէն ապրեցաւ:

Ամիսները կ'անցնէին այդ ձեւով: Աստուած հողին կ'ուզէր առնել, բայց ինք ա՛լ կ'ըսէր, հիւանդանոցէն գալէն ետք, երկու տարի այդպէս անկողին դամուած մնաց:

Ոչ ոք հասկցաւ այս երկարատև հողեվարքին բուն պատճառը: Որոչ հիւանդութիւն մը շունչէր, ծերութիւն էր, յոգնածութիւն, շարշարուած միտք: Ամէնուն հանելուկ կուզար իր պարագան: Շատեր կը հետաքրքրուէին առողջական վիճակով, հարցնողներուն կը պատասխանուէր:

— Երեք տարի կ'ընէ անկողնոյ կը ծառայէ, բայց մեռնելու շատ միտք չունի, — կ'ըսէր ժողովական իր ընկերներէն մէկը:

— Կարծես պաշտօնական հրաւերի կը սպասէ մեռնելու համար, — կը կատակէին միւսները:

Ամէն անգամ որ Գարբիէլ հրեշտակապետը մօտենար, սիրտը շատ կը նեղւէր, գլուխը կը շարժէր, մարմինը կը ցնցէր ու գլուխը մէկ կողմ դարձուցած՝ քննցածի պէս կը պառկէր: Հոգեառը մեռնունայն ետ կը վերադառնար:

— Ի՞նչ է, նորէ՞ն չեկաւ, — հարցուց — Աստուած վերջին անգամ դալարացած:

— Ձեկաւ, ի՞նչ ընեմ, չ'ուզեր գալ:

— Լաւ, ի՞նչ կ'ըսէ, ի՞նչ առարկութիւն կ'ընէ:

— Ի՞նչ գիտնամ, խիտ յանդիմանական ձեւով մը կը վարուի հետս, անհասկնալի բաներ կը պոռպուայ ու ետ կը համբէ:

Աստուած հասկցաւ յամառելուն պատճառը: Կտրուկ օճով մը ըսաւ հրեշտակապետին.

— Երկար ըրաւ, ա՛ռ հողին ու վերջացուր:

Պարոն Գրիգոր Տէր ներսէսեանի ժողովական ընկերները պաշտօնական հրաւերներով կազմեցին յուշարկաւորներուն թափօրը եւ տեղատարափ անձրեւին տակ յանձնեցին մարմինը ցուրտ հողին:

Ն. Վ.

Ն. ԺԻՐԱՅՐ

Շ Է Ն Ք Ը . . .

Երկրորդ հանդիպումն էր որ տեղի կ'ունենար Ամնայի եւ Թոմի միջեւ: Երկուքն ալ կեանքին շնորհած ազատութիւններուն խենթ հաւատացող անզիտացիներ են: Կ'ընթանան անզիտացի նոր սերունդին ճամբով ու չեն ճանչնար ոչ մէկ կաշկանդում, սահմանափակում, խոչընդոտ: Վերապահ են եւ զգոյշ: սակայն վը հաւատան որ երկու սեռերուն միջեւ ազատութիւնը պէտք է անսահման ըլլայ: Բարոյական ըմբռնումներու ոտնակոխում տեղի չ'ունենար, եթէ անոնց սեռային յարաբերութիւնները՝ ընտելեան օրէնքներուն խնկ թելադրանքով՝ ազատութիւնը որդեգրեն: Այս ձեւով միայն մտածումը կ'ըլլայ դերիշխող, եւ այս ճամբով միայն կեանքին դառնութիւնները նուազագոյնի կ'իջնեն:

Այդ օր, կէսօրէ ետք, զբոսայգիի մէկ անկիւնը առանձնացած՝ այսպէս կը զրուցէին անոնք ու կը սիրաբանէին: Թոմ մատնանչի լուցկիի ասփի ձեւով չիմուած բարձր ու բազմաթիւ դիմացի շէնքը, եւ յայտնեց որ վերջին յարկին

միայն զանուուզ ամէնէն փոքրիկ սենեակը իրն է, ինք հոն կը բնակի:

— Որքա՛ն բարձր տեղ է սենեակը. որքան դժուար հոն բարձրանալն ու վար իջնալը ամէն օր, — ըսաւ Ամնա:

— Երբ կեանքը իր իսկութեան մէջ դժուար է, խարտափկ դիւրութիւններով դժուարը քողարկելն ու անիրատեսօրէն անտեսելը, մարդու կեանքին մէջ հիմնական ո՛չ մէկ փոփոխութիւն կը յատուցանէ: Ես կը նախընտրեմ դժուար կեանքին փարիլ ու նոյնանալ անոր հետ, որպէսզի աղջիկներուն հետ իմ ապրած այս քաղցր պահերուն, ստանամ հողեկան մեծ բաւարարութիւն:

— Ուրեմն, քեզի համար սէր զոյնութիւն չունի, իբրեւ զսեմացած ըմբռնում, հողինքը իրարու նոյնացնող, վերացնող, — շտապ խօսեցաւ Ամնա:

— Զգացումներու եւ ապրումներու յորդացած կուտակումն է սէրը: Կրնայ ազդակ մը ըլլալ հողինքու նոյնացման, սակայն հիմք՝ երբեք: Հողինքու ամբողջական նոյնացումը մտածումի բնականն ճամբով կ'իրականանայ:

Թոմ այսպէս բացատրեց ինքզինքը. եւ նշմարեց որ Աննային զէմքը խոտո-
նած է:

Բնականօրէն աղջիկը այս երկրորդ
հանդիպումով կրցաւ հասկնալ աղուն
միտքը, եւ մեղմ ժպիտ մը ուրուազծե-
լով զէմքին, խնդրեց զինք ճամբել տուն:

Սկսան ձեռք-ձեռքի քալել: Թոմ
զաւելաւ մը պատմեց: Աննա երբեք չիւրն-
դաց: Ապա, կրկին Թոմ մատնանչեց իր
ընտանիք շէնքը, որ տւելի հսկայական
կը թուէր, բարձունքի մը վրայ կառուց-
ւած ըլլալուն համար:

Երբ աւելի մօտեցան շէնքին, Թոմ
ըսաւ.

- Նայէ՛, Աննա, այդ պատուհանը
կը տեսնե՞ս. որքան փոքր է, որքան
բարձր. օդին մէջ կախուած ըլլալ կար-
ծե՞ս. այդ պատուհանը իմ սենեակիս
միակ լուսամտան է: Գիտե՞ս, Աննա,
յրջացած ընկերուհի, որ երկու շաբաթը
մէկ, այդ սո՛կնէն բարձր պատուհանին
ապակին կը սքրեն: Ինչպէ՞ս հոն կը
հասնին, մի հարցնիր, միայն նիհարա-
կեցմ երիտասարդ մը երկու շաբաթը
մէկ, առտու կանուխ, կը բարձրանայ,
կը մաքրէ, եւ իր գործով ալ միշտ ու-
րախ՝ կը սուլէ անվերջ: Այդ սուլոյցը
օտարօրինակ խորհուրդ մը կը պարզեւէ
այդ գծուար գործին, այդ աննշան ու
նիհարակցած աշխատաւորին, որուն
դէմքին միշտ սեւ մուրը իր կնիքը ունի:

Աննա պահ մը կեցաւ եւ աչքերը սե-
ւեռեց շէնքին: Կարծէք թէ Թոմին խօս-
քերուն մէջ իմաստութիւն մը գտաւ, որ
այդ շէնքին կը բխի, կը պատկանի այդ
շէնքին մէջ ապրողներուն, ընդհանրա-
պէս կեանքին:

- Ի՞նչուն շէնք մըն է, Թոմ: Իրա-
պէ՛ս խօսուն: Մանաւանդ քու սենեակը,
որ սո՛կնէն բարձրն է, կարծես օդին մէջ:

- Այո՛, օդին մէջ, - ըսաւ Թոմ. եւ
ձեռքերը պարզեց օդին մէջ: Ապա՝ եր-
կուքը միասին սկսան քահ-քահ խնդալ
բարձր: Անոնց խնդուքին ձայնը կը հաս-
նէր շէնքին, մինչև Թոմի սենեակը:

Կրկին ձեռք-ձեռքի սկսան քալել ըն-
դարձակ դրօսայդիին մէջ, շէնքի ուղ-
ղութեամբ: Երբ մօտեցան, Աննա զու-
խը բարձրացուց եւ փորձեց վարէն վեր
նայիլ շէնքին: Գլուխը պոտոյտ ունեցաւ,
եւ չկրցաւ երկար դիտել բարձրութիւնը.

- Վե՞ր, սենեակս բարձրանանք, -
ըսաւ Թոմ:

- Գու սենեակը, այդ բարձր տե՛-
ղը, ո՛չ: Գծուար է, - մերժեց Աննա:

- Գծուար չէ, կը սիրես, եկուր
բարձրանանք, կանուխ է դեռ, - խնդրեց
Թոմ:

- Այո՛, կը սիրեմ այս շէնքը. կը
սիրեմ բարձրեցը թառած փոքրիկ սենե-
ակը, բայց գծուար թէ համոզուիմ հոն
բարձրանալ: Կը փորձեմ միշտ խուսա-
փիլ կեանքի գծուարութիւններէն. հոն
եթէ բարձրանամ, ըսել է պիտի սուղ-
ւիմ գծուարութեանց ովկէսներն մէջ.
այդպէս չէ՞, Թոմ:

- Գաղցրութիւնը հոն է արդէն, հա-
ւատա՛: Միայն համբուրուելով, ձեռք-
բու ջերմութիւնը ներգլխով, միամտա-
բար գուարթանալով, սիրաբանելով ո՛ւր
կը հասնինք: Այս շէնքին բարձրութիւնը
կը տեսնե՞ս, Աննա՛, պէ՛տք է աստիճան
առ աստիճան բարձրանանք վեր, մինչև
իմ սո՛կնէն փոքրիկ սենեակս, ուր այդ-
րելու համար միայն ջիշեր պատրաստ
են վարձը վճարելու: Այն ատեն միայն
այս շէնքին շեղութիւնը կը փոխադրուի
իմ սենեակս, կը փոխադրուի մեր հոգի-
ներուն: Հաւատա՛ ինձի:

Աննա, արագ համբուրեց Թոմի ե-
րեսէն եւ ցտեսութիւն ըսելով՝ վազեց
զառիվար, ո՛չ, ո՛չ, ո՛չ, ժխտական բա-
ցազանչութեամբ:

Թոմ բարձրացաւ սենեակը. օրունակ
թերթը աչքէ անցուց. էլլաքիկ նուազ մը
լսեց. իր սիրած «Կուլտ Լիֆ» ծխախոտը
ծխեց. անկողնին տակ գտնուող զարե-
թերթը աչքէ անցուց. էլլաքիկ նուազ մը
զարեթուր գտաւ, խմեց եւ անկողին նեղ-
ւեցաւ, դիմաւորելու համար առաւօտը,
որ յաճախ անարեւ է ու մշուշոտ:

Թոմ, որուն շարաթուկան ստացած գումարը չնչին բան մըն էր եւ ինչ պարզ ու աննշան պաշտօնեայ մը, կրցած էր երկար մտածումներէ ետք՝ այս հսկայ շէնքը գտնել եւ համոզել տէրը, որ ամէնէն բարձր անկիւնը իրեն յատկացնէ։ Տանտէրը վարմացկոտ նայած էր Թոմին եւ առանց տատանումի՝ ընդառաջած ցանկութեան։ Շէնքին հպարտութիւնը կուրծքին հրուիրած աղայ մըն էր Թոմ, որուն համար կեանքի փիլիսոփայութեան հանգոյցը լուծուած էր, իր բնական շէնքին հետ նոյնացնելով զայն։

Քանի մը օր ետք, երեկոյ մը, հրք Թոմ կրկին նստած իր փոքրիկ ու նեղ սենեակին մէջ գոյութիւն ունեցող Կոնֆորտին վրայ կը ծխէր, լսեց իր սիրած էլլապիլի նուազը, զանգի ձայն մը առաւ, սենեակին դուռը բացաւ, եւ անակնկալի եկած՝ Հուրա՛ մը պոռաց, ու գրկեց Աննան, որ դռնապանին օգնութեամբ գտած էր Թոմին տեղը ու բարձրացած վեր, դէպի այն դժուար սենեակը, ուր

մերժած էր ինչ բարձրանալ օրեր առաջ, Երկուքին ուրախութիւնը անսահման էր։ Եւ այդ երեկոյ մարդկութեան հսկայ ընտանիքին միացաւ նոր պոյց մը...

❖

Հսկայ ու բարձր շէնքը, Թոմը, Աննան, իրենց փոքրիկ բոյնը, որ թառած է բարձրերը, եւ շէնքին ապակիները երկու շարաթը մէկ մաքրող, նիհարակազմ ու սեւ մուրը միշտ երեսին քսուած երթատասարդն ու իր զուարթ սուլոցը, օրերուն հետ սկսան դառնալ անբաժանելի ամբողջութիւն մը, որոնց յարատեւելու ու տոկալու սխալը ուրիշ բան չէր, եթէ ոչ իրենց բնական ու հպարտ կառոյց ունեցող այդ շէնքը, որ աւելի՛ հսկայ կը թուէր, աւելի՛ շքեղ, աւելի՛ խօսուն, որովհետեւ շինուած էր բարձունքի մը վրայ։

Չ. Ժ.



ԾԱՂԻԿՆԵՐՈՒՆ ՎԻՇՏԸ

Լեռներում մէջ, այս իրիկում,
Երբ արեւը կ'երթայ իր տուն,
Շողերն անոր երբ կը հալին,
Հագիս կու լայ վիշտը երկրին:

Ծաղիկներն ալ կը խոնարհին,
Կը սքգան մտեր արեւին.
Ջեփիւտն ի գուր կը սարփէ պար,
Գգուանգներով իր սիրավառ:

•

Արեւ, մնա՛, քի՛չ մը գթայ,
Ծաղիկներում սա դողացող.
Քի՛չ մ'ալ շագա՛ անոնց վըրայ:

Թերթերն անոնց, տես, կը քտին
Լայս արցունքներ այնպէս վընիտ.
... Յոյ՛ք մը դրկէ գէթ լուսնակէն:

ՊԱՏՐԱՆՔ

Քալեցի երկար, որոնցի քեզ,
Արեւներու հետ, քէ սեւ ամպերու,
Յոյսովս անհատնում, ճիգերով իմ մեծ,
Ես ուխտուոր հեզ, վայրերէ հեռու:

Սակայն ա՛վ էիր, որ խանդովս տա՛ք
Փնտրուցի քեզ, ու մերթ ալ արկաք
Քայլերով վարան, վայրին անգիտակ,
Բայց աչքերուս մէջ հեռու մը դալար:

Հետքդ կը մնայ անվերջ ու անհա-
Ջուր են ճիգերդս քայլիդ հասնելու.
Բանի մտնեմս, դուն կը հեռանաս,
Ու կը մնաս մըշտ քաղճամբ մը հեռու...:

ՇԱՀԱՎՈՒԽՏ

Ա. ՏՕՆՈՅԵԱՆ

“ ԿՌՈՒՆԿ ”

Ք. Հրուանդանէն արձակուած հրէի-
ւի փորձը ձախողած էր: Տխուր էին
տիեզերական այդ փորձին մասնակից
մասնազէտները:

Օդային ուժի վառելանիւթային
բաժնի ընդհանուր պատասխանատու
Տաքթըր Ռաֆ հասած էր հետ բերած
վերջին տեղեկագրերներու դէպին վրայ,
ըզային շարժումներով դէմքը կը ճմռթ-
կէր:

Տխրութեան մէջ մխիթարութեան
ըզացում մը, փպիտ մը ուրուագծուած
էր դէմքին: Ինչ էր պարտականութիւնը
կատարած էր մեծ բժախնդրութեամբ:

Այդ բողէին էր որ ձոճօն համար-
ձակութիւնը ունեցած էր հօրը աշխա-
տասենեակէն ներս մտնելու: Ռաֆ ու-
րախ էր այդ տրամադրութեամբ աշխա-
տանքին դադար տալուն: Երկու օր էր
ուիք-էմտը անցուցած էր տան մէջ բան-
տարկուած:

Կերակի օր մըն էր, Նիւ Եորքի
մարդկային ծովուն մէջ, Հեյտանքը կը
հոսէր փողոցներէն, չոր ու լպիրշ ծե-
ծաղներով:

Օրը կ'երթկնանար: Խենթ մարդկա-
յին արշաւին կը միանային վայրագ լոյ-
սերու անգութ կատակները: Այդ քաղաքը
երկինք չունէր, այդ աշխարհի հորիզո-
նը բանտուած էր սպիտակ լոյսերու
մշուշներուն մէջ:

Մայթերէն հոտոզ կեանքէն միօրեայ
զրկանքն իսկ, հանդարտութիւնն ու մե-
նութիւնը իր ցեղային բնազդով ատոզ

ամերիկացի տիկինը Ռաֆին, Մէյրին
դարձուցած էր շղտզար: Սակայն քա-
ղալերուած ամուսնոյն փպիտէն՝ մեծ ճի-
գով կը յաջողի զայրոյթախառն արտա-
յայտութեամբ դիմաւորել ամուսինը:

- Շատ շնորհակալ ենք որ յիշեցիր
մեզ: Նոր հասկացայ, թէ ինչ ըսել է ողջ-
ողջ շնչահեղձ ըլլալ: Կեսնք տուր մեզի,
սիրելի Ռաֆ, շունչ տուր մեզի:

Մէյրի ծանօթ էր իր ամուսնոյն
փխրուն հոգիին: Միայն արցունքի քա-
ղաքականութեամբ կրցած էր նուաճել
Ռաֆը:

Ռաֆ չէր կրցած զանազանել ար-
ցունքներուն աչքերէն թէ սրտէն եկած
ըլլալը: Լացը իր աչքին կը բերէր մայ-
րը, որ իր մանուկ տարիքին զրկած էր
դինք, համբուրած ու հեկեկալով դարձու-
ցած իր ստոած այտերը՝ անծանօթին
դերկը նետելէ առաջ:

- Մերելի՛ Ռաֆ, այս բոլորը կարծես
բաւարար չըլլան, այս հրկու օրուայ ըն-
թացքին վերի յարկէն աղմուկաղա-
ղակ, հրզերու ձայնը ուղղակի խելագար
պիտի դարձնեն զիս: Օտարներ են կար-
ծեմ, անիմաստ ու տափակ անոնց երգե-
րը լոճցնել տուր զոնէ:

Ռաֆ, առանց համոզուելու, քայց
հաճելի թուելու համար կը միանար իր
տիկնոջ, իր կարգին օտարները դատա-
պարտելու զայրոյթ մը կեղծելով դէմ-
քին:

- Բայց շարժիր, քա՛ն մը ըրէ, հե-
նախօսէ՛ ոստիկանութեան զոնէ:

Ռաֆ անակնկալի եկած էր: Այլ խորհած որ խօսքի սահմանները այսքան շուտ կտրել օրհոր համարձակ էր կինը:

Անկարելի էր ես գտնայի: Հոսանքին դէմ կենալ, կանացի հոսանքին դէմ, Ամերիկայի մէջ, ո՞չ, անխոհեմութիւն էր:

— Մի՛ յուզուիր, սիրելի Մէյրի, ստիկանութեան կարիք չկայ, ես անձամբ կ'երթամ այդ անպիտանները լռեցնելու:

— Խնդրեմ, մի երթար, օտարներ են, վայրենիներ են, լսէ որքան բարձր կը խօսին, վստահութեամբ բան մը քննէ քեզի: Համբարով մը իր ջղագրգիռ տիկինը հանդարտեցնելէ ետք՝ Ռաֆ կը բարձրանայ վեր ու հազիւ զանգը տուած՝ զամուսն կը մնայ իր տեղը:

Երգի մը տխուր եղանակը կը շանթահարէ զինք: Ուղեկորոյտ, խոցուած ու արիւնոտ անցեալի մը յուշերը կը վերածուին շարժապատկերի:

Դուռը բացուած է արդէն ու թխադէմ, նիհար երիտասարդ մը շատ կոշտ ու անվարժ անզլերէնով ներս կը հրաւիրէ անժամանակ ու շուտ անցած այցելուն:

Ռաֆ կը մնայ սառած՝ զբան սեմին:

Երիտասարդը զարմացած կը կրկնէ.

— Հրամեցէ՛ք, պարոն, որո՞ւ տունը կը փնտռէք:

Նուազը մեղմացած էր: Երեք երիտասարդները դուրս եկած էին տեսնելու համար, թէ ի՞նչ տեղի կ'ուեննայ զբան առջեւ:

Ռաֆ բառ չէր գտնիր արտասանելու, բարի ժպիտ մը դէմքին, համարձակ կը յառաջանար դէպի փոքրիկ ախանձը, որ սալոնին միակ ներկայանալի կարասին էր:

Չորս երիտասարդներ շրջապատած այս տարօրինակ օտարականը՝ կը սպասէին, մինչ Ռաֆին դէմքէն ժպիտը հետքահետէ կ'անհետանար. ու երբ կը փոքրէր անոնց հետ ձեռնուիլ, յանկարծ չկրնայի զսպել իր յուզումը՝ կը փրզակէ, կը փաթթուի անոնցմէ իւրաքանչիւրին, կը համբուրէ զանոնք արցունքներով ողորկով, եւ նոր միայն կը նստի

բացատրելու իր այս սլակերպութեան պատճառը:

Չորս երիտասարդները կը ներկայացնեն իրենք զիրենք:

Տ

Տասնըութէն քսանմէկ տարեկան Հայ տղաք, Սուրբայէն ու Լիբանանէն Նիւ Եորք եկած են ուսանելու: Նիւթական անձկութիւնը զանոնք հուաքած էր մէկ սենեակնոց այդ խեղճ յարկաբաժինը:

Ասոնցմէ երկուքը նոր եկած էին Նիւ Եորք, որու անհրապոյր երկիրքին տակ կը վայելէին առաջին ձմեռը: Այդ կիրակի նախընտրած էին տունը մնալ: Կիրակիի մը ծախսը մի քանի օր զիրենք կ'ապրեցնէր:

Վիճած էին երկար, այնքան բուռն, հայկական ոճով:

Հալէպի Քարէն Եփփէ ձեմարանի շրջանաւարտին համաձայն չէին լիսէական երեք հայրերին:

Նիւթը հայկական դասն էր եւ այդ օրերուն ՄԱԿի յանձնուած հայկական յուշագիրը:

Բուլբուլ սլ համաձայնած էին, երբ ճեմարանաւարտը ճարպիկութեամբ Շարլ Աղնաուերի Մամայէն ետք Վեռուկայի երգապահակը սահեցուցած էր փէջափին վրայ:

ձեմարանաւարտ Զարեհը զգոյսական, կրակի պէս հայրենասէր տղայ մըն էր. երկու տարի առաջ իր ճամբորդական նիւար պայուսակին մէկ անկիւնը մի քանի հայկական երգապահակներ դրած էր:

— Սիրելի՛ տղաք, անուշ Հայ երիտասարդներ.

Կը խօսէր տաքէրը Ռաֆ, մինչ Հայ պանդուխտներ, Վեռուկայի վերջին խազերու թմրութեամբ շրջապատուած՝ մտիկ կ'ընէին:

Առանց ինքզինք ներկայացնելու եւ առանց ներածութեան կը շարունակէր Ռաֆ.

— Ճիշդ էնը տարեկան էի, ասկէ 33

տարի առաջ: Մեր գիւղը կը կոչուէր Հայնէ, Մուշի եւ Տիգրանակերտի միջև: Հայրս կորսնցուցած էի, իսկ մայրս զիս փրկելու համար ուղարկած էր Պոլիս, Հայ Ազգ. Որբանոցը: Միայն թրքերէն գիտէի, երբ որբանոց մտայ, ու չորս ամիս ախտեղ չկրցայ հայերէնին տիրապետել: Լաւ կը յիշեմ, այսպէս Կիրակի մըն էր, երբ Կիրակնօրեայ մեր սովորական աղօթքներու փոխարէն երգահանդէս ունեցանք:

«Շատախօս ուսուցչուհի մը ունէինք, որ մօտ մէկ ժամ խօսեցաւ: Բազմաթիւ անդամներ ձանձրացած ծափահարութեամբ կ'ընդմիջէինք զինք: Վերջապէս շատ նիհարակազմ, ոչ շատ դեղեցիկ դէմքով աղջիկ մը բնմ էլաւ եւ սկսաւ այնքան յուզել, այնքան զեղեցիկ երգել: Ես սողնքնուած, անոր երգերուն հետ միախառնուած էի: Ձէի շարժիլ, չէի ծափահարեր, կարծէք նոյնիսկ չէի շնչեր: Իր յայտագիրը վերջացուցած՝ բնմէն իջաւ եւ մեր մէջ սկսաւ պտուղիլ: Մօտեցաւ ինծի ու յուզուած շեշտակի աչքերուս նայելով, բարձրացուց զլուխս, համբուրեց աչքերս ու իր կարգին յուզուած ըսաւ.

« Անուշիկ մանչս, ի՞նչ կ'ուզես որ երգեմ քեզի:

«Անակնկալի եկայ: Որեւէ երգի անուն չէի գիտեր:

«Ոտքի ելայ, աղաչանքով մօտեցայ երգչուհիին, զլխահակ, թրքերէնով, դողդոջ ձայնով կ'մկմացի.

« Չորս ամիս է այստեղ եմ ու տապալակ մօրմէս նամակ մը կամ լուր մը չունիմ. ինծի պէս իրենց մայրերէն լուր սպասող որբերուն երգը երգէ:

«Կը կարծէի, թէ լաւ բացատրած էի միտքս, երբ շար ուսուցչուհիս յանդիմանական ահնարիկ ծանրացաւ վրաս: Երգչուհիին եկաւ փրկելու կացութիւնը: Կոտուկը կ'ուզէ, — կ'երեւի:

— Ուրախացած՝ անմիջապէս աւելցուցի.

« Այո՛, այո՛՝ «կոտուկը»:

«Ակսաւ երգել ... ինծի կը նայէր,

իսկ ես կը ժպտէի: Աչքերուս պարզութեամբ մեր գիւղը: Մայրս հիմա առանձին կը զրադի թէ՛ դաշտային եւ թէ՛ տնային աշխատանքով: Յանկարծ սկսաւ այբիլ ծոծրակս, ուր վերջին անգամ մայրս թափած էր իր ամենաշերմ արցունքները:

«Երկուքս ալ վերջացած էինք: Ոչ մէկ ծափ, երբ որբերու քայլերդ վերջ գտաւ:

«Մէկ տարի միայն մնացի որբանոցը: Հաղիւ սկսած էի հայերէն սորթիլ, երբ հօրեղբայրս այստեղէն զիս գտաւ եւ նիւ Եփրատի մօտ բերաւ:

«Մինչեւ համալսարան կարդացի, աւարտեցի քիմիադիսուսութիւնը Տաթևուրա վկայականով: Դժբախտաբար մոռցայ հայերէնը, մոռցայ ոչխարէի ու աղցային պարզ բաները, ուրախութիւնս փնտռելով հրթիռներու յաղողութեան մէջ:

«Այսօր միայն, հիմա՛ յիշեցի ազգս, երբ ամերիկացի կիներ աղմուկ կը կոչէր մեր «կոտուկը»:

«Որքան դժբախտ է ազգս մեզմով: «Բաֆֆի էր անունս, զիս կանչեցին Ռաֆ: Տղաս՝ ձոճօ»:

Խեղճացած, հրթիռապէս հայը գլուխը հակած՝ ամօթի զգացումներով կը խօսէր մեղամաղձոտ, առանց նոյնիսկ անզրադառնալու իր տիկնոջ ու մանչուկին ներկայութեան: Ռաֆին ուշացումը տեսնելով՝ անոնք սարտափահար ներս մտած էին քաց դռնէն ու անձայն նստած մտիկ կ'ընէին:

Չարեհ կարդաղբած էր որ լուսթիւնը չճնչէ վերածնած հայուն վրայ:

«Կոտուկը» կ'երգէր տխուր, կ'երգէր պանդուխտ հայուն սրտին, կ'երգէր ուսման ու կեանքի ապահովութեան համար ովկիանոսներով իրենց ընտանեկան օճախէն հեռացած այս տղոց թրթուռ հոգիին:

Պէյրուսի լիտեալարտ Վարանդ, Սյրսոթի շրջուն վաճառորդ Սերոբի տղան, խոհանոցէն սալոն կը մտնէր մէկ ձեռքին ափսէ մը՝ բաժակներով լի-

ցուն, միւսին հայաստանեան շին մը գոնեակ:

Ռաֆի ամերիկացի կինը շուարած, բան մը ըսելու անկարող՝ կը զիմէր արտասուքին:

- Ինչո՞ւ կուլաս, սիրելի՛ս, ընդհակառակն, ուրախացիր, գրկուած եմ, վերստին ծնած եմ, ուրախացիր: Այս սղաքը զիս բերին իմ ազգիս տաքուկ զիրկը:

Խանդավառութեան մէջ՝ Ռաֆ բաժակը գրաւ տիկնոջ մեքքին, մինչ Զարեհ կը պատրաստուէր ծաքին մէջ, անզլերէնով արտասանելի բաժակածառք:

Կա՛րճ, կոտորուած, բայց հարազատ ու անկեղծ էր իր խօսքը.

- ... Վերջապէս տաքքըր Ռաֆիին հայկական դատի մեծ կոթողին եկու ամբակուտ քար մը աւելցնելու:

Եւ սղոց հետ ունեցած վէճին ընթացքին՝ իր տեսակէտը պաշտպանելով.

- Ի՞նչ արժէք ունի Արարատէն մեր ալիարհագրական հեռաւորութիւնը, երբ մենք զխոհեք նաեւ Արարատներ կոթողել նիւ Երբէի մէջ:

Գոնեակը, անյայտացումէն առաջ, իր առաքելութեան մէջ յաջողած էր:

Պէյրուս, Հալէպ, Պոլիս, Նիւ

Երբ, հայութեան յաւերժական զաւակներու սփոփարար քառուղիներ, հայ սղոց մեծ երազին, հին երազին ժամանակաւոր հանգստեան ու կազդուրման կայաններ:

- Ծոճօ՞, զո՛ւն եւս մեր հայկական ակումբին մաս կը կազմես:

Հարցումը կու դար Զարեհէն:

Քիչ մը իմաստակի հովերով, Ամերիկացի լաճի հնչիւններով ծօճօ կը յայտարարէր.

- Ինչո՞ւ չէ, մեծ հօրեղբայրը ինծի խօսած է թուրքերուն մասին, Հայաստանի մասին:

Այս անգամ վրդոված ու յանդիմանական, խօսքը հօրը ուղղելով.

- Պապա՛, մեզի հրթիռ մը տո՛ւր այս երկտասարդներուն հետ երթանք թուրքիս, պատե՛նք այդ բարբարոսները ու մեր ընդարձակ հողերը ազատենք:

Տղաքը կեցցէներով իրենց ուսերուն բարձրացուցած էին ձոճօն:

Վարանդ այս անգամ անպատեհութիւն չտեսնեց Զարեհը ընդօրինակել.

- Կարկուտ տեղա՛ց...

- Կեցցէ ձոճօն, կեցցէ նիւ Երբէի նորակոթող Արարատը:

Միթէ կարելի՞ էր զսպել Զարեհը:

Ա. Յ.



ԵՐԿՈՒՆՔ

Կը տարածեմ ես անա մաքրամաքուր կտան այս
Արեւուն դէմ ոգոզում.
Ջայն օծած եմ ես վազուց, սպիտակ ու մաքրաթեւ
Հաշիշուք իմ հագույն,
Եւ անպարփակ ու դիւքիչ խորութեանը մէջ անոր
Հեզեղած եմ ես արդէն
Ժողովուրդիս լուսայտոյ էութիւնը ծնուցիչ:

Կը տարածեմ զայն անա արեւուն դէմ իմ հագույն,
Ու իր կողերն անհանգիստ
Տենդախուով կը սպասեն երակներուս հրայրքին,
Խոհերուս հուր տարփանքին,
Մատներուս գիրգ գգուանքին,
Քեզմնաւորման հրաշքին...

Կտան անա պատրաստ է ու վրձինիս բախումէն
Տե՛ս, կ'արհւնի, կը ծաղկի,
Եւ հայելին իր գունեան կարծես ցալալ կը նզնի
Իմ ներաշխարհը յուսթի:

Երակներուս մէջ արհւնն յանկարծօրէն կը վառի
Եւ կը վազէ սանձարձակ:
Տրկունքն արդէն ես կ'ապրիմ. գոյները ճոյլ, ներդաշնակ,
Ականակիտ ինչպէս ակ,
Հանդարտօրէն կը հասնն,
Ակօսներուն իմ սրտին:

Եւ երանգները բարձր վարսերն իրենց կ'օծանեն
Արբեցուցիչ բոյրերով,
Կը մագլցին դէպի վեր, դէպի ոլորտը վերին,
Մինչ ես անա խունկ կը ծխեմ, կ'ազօթեմ
Ինձ ընծայած անոնց կախարդ խննդքին:

Արեւ ու լոյս է եիմա,
Իմ հիւրընկալ հոգիին...

ՆԱԶԱՐԷԹ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏԱԿՈՐ ՓԱՓԱԶԵԱՆ

ԵՐԿԱՐ ՍՊԱՍԵՑԻ

Ուշադրութի՛ւն... Ուշադրութի՛ւն :
Զափի վրայ կտրուած, կռկուած,
ամէն մաշակի յարմարող բանաստեղծութիւններ : Հասցէ՛՜ Փիլիսոփայութեան դասարանին անկիւնը, ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՐԱՏ :

Մարիամին հետ դասարան կը մըտնէինք առտու, երբ այս յատարարութիւնը խոշոր տառերով անսանջ գրատախտակին վրայ : Երէկ կոփամարտիկ մը ասպարէզ կը կարգար դասարանի քաղերուն, ուրիշ մը՝ յետ երկար փնտրատուքներու, գտած էր, թէ ինք յիմար մըն է եւ կ'առաջարկէր զինք խննթանայ փոխադրել, երբորդ մը կ'առաջարկէր ուսանողական ըմբոստութիւն մը դասարանի զեղեցկուհիներուն եւ ուսուցչուհիներու կարճ փէշերուն դէմ : Երեսուն աշակերտ, երեսուն տաղանդ, ամէն օր սէք, վայելք, կռիւ, վիճարանութիւն, հաշտութիւն : Գրատախտակը դասարանի օրուայ արամագրութիւններուն արտայայտութիւնն էր, եւ ուղղութիւնը օրուայ դէպքերուն :

- Գիտե՞ս, Մարիամ՝, - ըսի, - եթէ բանաստեղծ ըլլայի՛ առաջին նիւթս դո՛ւն կ'ըլլայի՛ր :

Մարիամ շարճնճիօրէն ժպտեցաւ և

անմիջապէս լուրջ դէմք մը աննկով հարցուց .

- Գծել գիտե՞ս :
 - Եռանկիւններ միայն :
 - Քանդակե՞լ :
 - Աղիւտներ կը պատրաստեմ :
 - Երգե՞լ :
 - Հաղիւ կրնամ խօսիլ :
 - Այն ատեն Արային ըսէ, որ իմ մասին բանաստեղծութիւն մը գրէ :
 - Բայց ես երազել զիտեմ, չե՞ս նկատած, - ըսի վերաւերուած :
 - Չմտնաս Արային ըսելու, - սլնեգէց Մարիամ :
 - Պիտի չըսեմ :
 - Չէ՞ որ կ'ըսես, թէ դուն իր քարտուղարն ես, իր նիւթերու պատասխանատուն :
 - Բացի քեզմէ պահանջուած նիւթերէն :
 - Քարտուղարը զատողութիւն չ'ըներ :
 - Պիտի չըսեմ, անունս ալ կը չընջեմ :
 - Չմտնա՛ս ըսելու, - ըսաւ Մարիամ պահանջկոտ :
- Արդէն երկար ատեն պատերազմ կար իմ եւ Մարիամին միջեւ : Պատըր-

ւակ կը փնտռէինք իրար վիրաւորելու, նուստտացնելու: Անցեալին Հպարտութեանս ենթարկած էի զինք, ազամայ, ալիպէս պատահած էր: Այսօր կ'ուզէր ինքզինք պարտադրել, չէի մեղադրեմ զինք, բայց կ'ըմբոստանայի Հպարտութեան զէմ: Պատերազմեցայ հետը, չընդդիմացաւ, բայց ինք յաղթեց:

Այսօրուան հերոսը հերոսներէն ամէնէն հետաքրքրականն էր: Արան յայտնութիւն մը եղաւ զասարանին, երբ զիտցանք, թէ բանաստեղծ էր: Ի ծնէ՞ր բանաստեղծ էր, թէ հտըը եղած, չեմ գիտեր, բայց բանաստեղծ էր Արան: Մինչ բանաստեղծները ներշնչումի պահակաէն կը կորնցնեն իրենց սողանդը, ընդհակառակն, Արային ներշնչման ակունքները անցամաքելի են: Կը բանաստեղծէ լուսինն ու մոլորակները, կաւե՛նք, իր կօշիկները, քարերը, ժայռերը, ինքնաշարժի անիւները եւ ինչե՛ր: Տակաւին քերթած է մեր ուսուցիչները, ուսնք ամուսնացուցած է իրարու հետ, ուրիշներ զրկած է զրախտ կամ դժոխք: Լուպրաթուարի կմախքին ընդմէջէն ծաղրած է մարդկութիւնը:

Արան ջուլ կը նստի, Մարիամին ետեւը: Օրուան եօթը պահերը միայն բանաստեղծութիւն կ'ունկնդրեմ, Արան անզաղար կը գրէ եւ ազանջի կը կարդայ: Ատեն մը եղաւ, երբ ազանջս միայն բանաստեղծութիւն սկսաւ հասկընալ...

Արան կը մտածէ, կը վերլուծէ, կը դատէ բանաստեղծութեամբ: Կ'երգէ, կուլայ, կը խնդայ՝ բանաստեղծութեամբ: Ու ա՛նկասկած, պիտի մեռնի բանաստեղծութեամբ...

Արան կուզայ լսուէն, լերան պէս հօկայ չէ, բայց անոր պէս մաքուր է ու անմեղ: Մեր զասարանի շափանիչներով՝ Արան մեծ է, որովհետեւ կը հանդուրժէ մեր կատակները:

Գիշերը միասին տուն կը վերադառնայինք Արային հետ: Օր մը՝

- Արա՛, - ըսի, - դուն աղջիկները կը սիրե՞ս:

- Կարծեմ այո, իսկ դո՞ւն:

- Ձեմ գիտեր, չեմ յիշեր, - ըսի խնդալով:

- Գիտե՞ս, Վաչէ՛, դուն երբեմն շատ խենթ ես, - ըսաւ Արան արագօրէն:

- Գիտեմ, - ըսի: Երկար եւ լուռ քալեցինք:

- Արա՛, ըսիր թէ աղջիկները կը սիրես, բայց անոր փաստը չես տուած:

- Ի՞նչպէս, - Հարցուց կարմրելով:

- Դասարանին մէջ տասը աղջիկ կայ, տասը նիւթ քեզի, տասը սիրտ ալ կը շահիս, բայց մինչեւ այսօր ո՛չ մէկուն մասին գրած ես:

- Կը կարծե՞ս:

Վարանում մը կար ձայնի մէջ, գրած էր եւ խոհեմարար պահած: Նթէ մեզի ցոյց տար, գիտէր թէ պիտի քաշկրտէինք զինք, պիտի գրէինք դրատախտակին վրայ, պիտի տանէինք աղջիկներուն: Դասարանի աղջիկներէն ո՞րո՞ւ մասին կ'ընար գրած ըլլալ արդեօք:

- Արա՛, - ըսի յանկարծ, - Մարիամը կ'ուզէ որ իր մասին բանաստեղծութիւն մը գրես:

Առանց գիշեր բարի ըսելու տան ճամբան բռնեց:

Հասայ կայարան, չուզեցի մտածել, ինքնաշարժի ճշակին ձայնը եւ մարդոց իրարանցումը շատ հաճելի թուեցան ինծի: Մարդիկը չհրմշակեցի ինքնաշարժ բարձրանալու համար, սպտեցի, երկա՛ր...

Յաջորդ օր, Արան սովորականէն աւելի խանդավառ եկաւ զասարան: Ազանջս զաղբեցաւ միայն բանաստեղծութիւն լսելէ, եւ օրուան եօթը պահերը սերտեցի գիտութիւն, հոգեբանութիւն, սիքիսոփայութիւն: Մերտողութեան պահուն, Մարիամը ետեւ զարձաւ, առաւ Արային երկարած թուղթը եւ նայեցաւ ինծի:

- Արա՛, սկսինք վերնագրէն, - ըսաւ Մարիամ, - «հոգեհատորիս»ը գէշ չէ, յարմար է: Երաժշտութիւն կայ, զգացում ալ կայ, ինչ որ ամէնէն անհրաժեշտն է բանաստեղծական արուեստին, այնպէս չէ՞, Վաչէ՛:

- Կարծեմ այո, - ըսի ու նայեցայ

Արային, որ դատապարտուած անձեղի մը պէս կը նայէր Մարիամին:

- Յանգերը, շափերը յաջող են, - շարունակեցի ես, - միայն կարգ մը տեղեր կը կաղան: Նկարը երեւակայական է, եւ ասիկա բանաստեղծութեան շատ ուսմանթիք բնոյթ կուտայ:

- Արա՛, իրապէս Հոգեհատորդ երեւակայական է, - Հարցուց Մարիամ իրար անցած:

Արան աչքերը արագ-արագ թարթեց, թեթեւ մը ժպտեցաւ, նուազած աչքերով նայեցաւ Մարիամին, անիմաստօրէն նորէն ժպտեցաւ, դէմքը կարմրեցաւ, անշարժացաւ, աչքերը միակ կէտի մը յռեց, մատիտով գծեց գրասեղանին վրայ, մատիտը վերցուց, գրածը ընջեց, նայեցաւ Մարիամին, ապա ինծի:

Մտածեցի պատրուակով մը փոխել տեղս, կամ Մարիամին ձեռքէն առնել այդ թուղթը եւ պատռել: Արան չէր կրնար պատասխանել Մարիամին: Այդչափ վարանած չէի տեսած զինքը: Ժամացոյցին նայեցայ, մատերս կրծեցի: Մարիամը պնդեց իր Հարցումին վրայ, Արան աչքերը վրաս սեւեռեց.

- Պարո՛ն վաչէ, զնահասելի է քննադատութեան ձեր շնորքը, ամփոփեցէք զանոնք զրբի մը մէջ, բայց ոչ սերտողութեան պահուէն:

- Ես ուզատ եմ:

- Բայց ոչ սերտողութեան պահուէն: Չարացայ, շեշտեցի.

- Արա՛, բանաստեղծութեանդ նիւթը ես ծիծաղելի կը գտնեմ: Այդ ի՛նչ

մաշած խաղեր են՝ Հոգեհատոր՝ս, մէկ Հատի՛կս, սիրունի՛ք, - ըսի եւ Մարիամէն առնելով բանաստեղծութիւնը նետեցի Արային առջեւ:

Արան երկար դիտեց առջեւը նետուած բանաստեղծութիւնը, մէջը տեսաւ զիս, Մարիամը, եւ նախորդ զիշերը: Դիտեց մինչեւ որ զանդը հնչեց: Դատարանէն երբ կ'իլլէինք՝ Մարիամը տիրորէն Հարցուց.

- Վաչէ, գիտե՞ս Արային Հոգեհատորը ով է:

- Բանաստեղծութիւնը:

- Բանաստեղծութեան ենթական ըսել կ'ուզեմ:

- Արային Համար մէկ Հոգեհատոր կայ՝ բանաստեղծութիւնը:

- Արային Հոգեհատորը տարբեր մէկն է, ես գիտեմ, կ'ուզե՞ս գիտնայ:

- Ձե՛մ ուզեր գիտնալ:

Մարիամը արագ հեռացաւ: Դրան առջեւ գտայ Արան, բայց այս անգամ իր բանաստեղծութիւններէն չէր արտասաներ: Տարբեր մէկը թուեցաւ ինծի...


Տեսաւ զիս, խոժոռեցաւ, գիշեր բարի ըսել շուրջեց եւ զնայ տուն:

Այդ գիշեր փողոցին անկիւնը երկար սպասեցի Մարիամին, եւ Մարիամ ուրիշ փողոցէ մը տուն վերադարձաւ:

Յաջորդ օր, Արան բարի չոյս ըսաւ, եւ մինակ դասարան մտաւ, գրատախտակը պարակ էր: Արան իր տեղը փոխեց:

Նոյն գիշերը երկար սպասեցի փողոցին անկիւնը, Մարիամ ուրիշ փողոցէ մը տուն վերադարձաւ...

Յ. Փ.



ԻՎԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

22 Գեկտեմբեր 1968-ին, խումբ մը Երիտասարդներու Ֆախստեռնու-թեամբ, ամերիկեան Կալիֆորնիոյ «Չեմբլը» քրտին մէջ տօնակցութեամբ ժազ Գալորեանի ծննդեան 50-ամեակը: Բանաստեղծին հայրեմասիրական լարը ճերկայացնելու պարտականութիւնը տրուած էր Մ. Իշխանին, որուն պատրաստած գրաւոր աւ գեղեցիկ վերլուծումը կու տամք ստորեւ:



ԺԱԳ ՅԱԿՈՐԵԱՆԻ



ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ

Ժազ Գալորեան ինչ նիւթ ալ երգէ եւ իր կեանքի ո՛ր շրջանին ալ հնչէ այդ երգը, կ'արտայայտէ հիմնական մէկ գագաթում — Սիբ: Սիրոյ եւ նուիրումի, գորովի եւ ամբողջական ինքնաբերականութիւնի բանաստեղծն է ան:

Երբ շատ երիտասարդ էր եւ իրրեւ սկսնակ մուտք կը գործէր Սփիտքի մեր գրականութեան մէջ, քնարական խոր գագաթումով եւ նկարիչ-արտեսանողէտի նուրբ գոյներով երգեց բնութեան սէրը, ծաղիկներուն եւ ծառերուն հրաշալիքը, ապա բնութեան իսկ գաղտնի շրտնջով եւ շունջով իր մէջ արթնցաւ հողին գերուզ, հողիին նոր թեւեր տուող գեղեցկուհիներու սէրը:

Ժազ Գալորեան նոյն գինովութեամբ եւ սիրահար տղու շոյող բաներով շատ շանցած պիտի արտայայտէր նաեւ հայրենիքի եւ հայեցի արժէքներու սէրը, մինչեւ որ յանգէր իր սէրերու մեծագոյնին եւ վերջնագոյնին — Քրիստոսի սէրը:

Եթէ կրօնական ներշնչումները իր մէջ եղան այնքան զօրաւոր ու տիրական, որ Ժազին հողիին գուրս վանեցին աշխարհիկ կեանքի վայելք-

ներուն հետ կապ ունեցող ուրիշ ամէն տենչ ու երազ, բնութեան կարօտն այլ մէջը հաշուելով, չկրցան թաղել սակայն Հայաստանի սէրը: Ժազ Յակոբեան կը շարունակէ միայլ խորագէտ հայրենասէր բանաստեղծ մը, որուն հոգիին թոճիչք կու տան ներշնչումի զոյգ թելեր – Աւետարանի խօսքը եւ Հայաստանի կանչը:

Ժազ Յակոբեան մեզի կը ներկայանայ հայրենասիրական քերթուածներու զոյգ հատորներով – «Մեսրոպաշունչ», տպուած 1946-ին, Գահիրէ եւ «Մասիսածիլ», տպուած 1963-ին, Պէյրութ: Գրքերու անուններն իսկ բնորոշ են, անոնց բովանդակութիւնը ճշգրիտ համար: Արդարեւ, մօտ հարիւր քերթուած պարունակող առաջին գիրքը, գրուած մէկ տարուան ընթացքին (1944-1945) եւ մէկ շունչով, տեսակ մը համանուագ է, բազմալար, բայց նոյն հիմնական նիւթն ու ոգին արտայայտող: Բանաստեղծը Մեսրոպի աշակերտը ըլլար կարծես, անոր շունչէն հաղորդուած հիացիկ դպիրը, որ անոր ծունկերուն մօտ նստած՝ նախ դովքը կը հիւսէ հայ բանին ու բարբառին, հայ գրչին ու գրականութեան, հայ դպրոցին եւ զըզրութեան: Ապա՝ Մեսրոպի այս հաւատարիմ խնկարկուն անսահման ցաւով կ'անդրադառնայ օտար երկիրներու սակ թափառող պանդուխտի իր թըլուա դոյութեան եւ կրտսացող վէրքի մը պէս մի առ մի մեր աչքերուն տուելու կը բանայ այլասերումի բողո՞ր ախտերը:

Երկրորդ գիրքը, լոյս տեսած 17 տարուան անըրպետով մը, աւելի հասուն եւ հաւատքով զօրացած հոգիի մը արձագանգները կը բերէ մեզի՝ Մասիսի արձակած կանչին ու պատգամներուն դէմ: Եթէ Մասիսը նկատենք Հայաստանի եւ հայ ժողովուրդի խորհրդանիշը, այս հատորին բանաստեղծութիւնները իսկապէս «Մասիսածիլ» են, որովհետեւ մեծ մասամբ կ'երգեն հայութեան անկորնչելի արժէքները, անոր յաւերժական զոյրութեան զաղտնիքը, անոր հոգեկան ուժին աղբիւրները, անոր անսասան տոկունութիւնը՝ ընդդէմ կործանարար հողմերու արշաւին եւ հաստատ ու վճռական համոզումը գալիք լուսապայծառ եւ ազատ օրերուն:

Ո՞վ է սակայն հայրենիքի կարօտխտէն բռնուած այս տղան, որ շարունակ Սեւան ու Երեւան կ'երազէ եւ գիշեր-ցերեկ հայ լեզուին քաղցըրութեամբ դիմովցած է:

Ժազ Յակոբեան բանաստեղծը մէկն է այն բազմահազար հայորդիներէն, որոնք ծնան ռօտար ափի վրայ ժանտ ու խորթ, իրենց հայրերու սրբանէն եւ շիրիմէն շա՛տ հեռու, բայց հակառակ օտար աշխարհի սակիներուն եւ լոյսին, սիրեցին հայ լեզուն, հայ պատմութիւնը եւ հայ հոգին:

Հայրենիք չտեսած այս բանաստեղծին հայրենասիրութիւնը ծնունդ կ'անէ ամէն բանէ առաջ հայ մշակոյթի դանձերուն ընդմէջէն, որոնք իր դժարարանքներուն մատչելի են ո՛ւր ալ գտնուի: Տեսակ մը ողբղէն հայրենիք, որ կը բացուի կարօտարազձ հայ հոգիներուն վերեւ՝ իբրեւ հարազատ ու ասողազարդ երկինք: Հայ լեզուի ու զգրութեան աւազանին մէջ հայ մկրտուած բանաստեղծը ամբօրէն կառչած կը մնայ այս գանձին, ո՛չ միայն իբրեւ գեղեցկութեանց անսպառ շտեմարան, այլ նաեւ իբրեւ փրկուցութեան ամէնէն ապահով լաստը պանդխտութեան մէջ: Ահա թէ ինչու հայրենասիրութեան իր առաջին վանկը, առաջին բացազանչութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ սրտին խորերէն արձակուած կոչ մը ամէն հայու:

Ո՞վ կայ, խօսէ հայերէն շէկ գարթօճէկ մինչեւ ճուռ,
Հպարտութեամբ, բարձրաձայն լոկ հայերէն խօսէ դուռ:

Գրեթէ սրտայոյզ պաղատանքի կը վերածուի ժազի այս պատուէրը, քերթուածէ քերթուած, երբ կը խնդրէ հայ մայրերէն, հայ հայրերէն, որ պէտքի հայ լեզուն սորվեցնեն իրենց զաւակներուն, «այդ սուրբ լեզուն Աստուծոյ»:

Հայ լեզուն ժազին համար ամէն ինչ է, «Ոսկի դաշտ Արարտեան ցորենի», «Վարդանափայլ փառքերու յուռթի հանք», «Հայ մաքի մեսրոպազոյն դրօշակ»: Տարիներ ետք, ամուսնանալով եւ զաւակներու տէր պանախով, Միացեալ Նահանգներու մէջ, ժազ Եսկոբեան պիտի ապրէր տառապանքներուն ամէնէն մեծը, երբ իր փոքրիկին ձեռքէն բռնած զայն կը յանձնէր ամերիկեան մանկապարտէզի խնամքին:

Դաժա՛ն ճակատագիրը հայուն, որ կը հեղնէ կարծես հայ լեզուի պաշտպանութեան պայքարին մէջ ամէնէն խանդավառ փողակարներէն մէկը եւս:

Հայ օրաթերթը, հայ դպրոցը, հայ տպարանն ու գրաչարը ժազի երգերուն ընդմէջէն կը տողանցեն, բոլորն ալ իբրեւ հայ լեզուին գինակիր պափակները: Ու բանաստեղծը այս օտար ավերուն վրայ անոնցմով ինքզինք զօրացած, հայացած, հպարտ ու երջանիկ կը զգայ: Որքան հայու ապրումը խորանայ իր մէջ, որքան հայ մշակոյթի կենսունակ աւելը առատ հոսի իր երակներէն, այնքան բանաստեղծին կարօտը կը բոցավառի իր շտեմած հայրենիքին հանդէպ: Ժազի քնարական հոգին սիրահարած է արդէն հեռուոր Հայաստանի կախարդ տեսիլքին եւ երբ զայն կը կանչէ, խօսքը անոր կ'ուղղէ իսկական սիրահարի մը բառերով.

«Իմ անձանօք, իմ անտե՛ս, իմ հեռաւա՛ր սիրտե՛ի»

Այս հեռուոր սիրուհին Հայաստանն է, իսկ սիրահար բանաստեղծին սիրտը կ'արիւնի զտող առ տող»: Ի՞նչ տեսակ սիրուհի է Հայաստանը ժազին համար: Մօտաւորապէս այն՝ ինչ որ է «Երազներու պերճուհին»՝ վերջալոյսի կախարդ գոյներուն մէջ իր հոգիին խռովքը տարածող պատանիին համար:— Հեքիաթի հմայք, հերոսներու եւ սուրբերու օրօրան, խունկ ու շարական:

Հայրենասիրութեան այս մեւ ապրում մը ամբողջ զգացում է. ինքնաբուխ եւ բնագոյնին մղում, որ ոչ քաղաքական տեսութեան կը վերածուի, ոչ ալ յատակ սահմաններու եւ կերպարանքի մէջ կը մարմնանայ:

Ժազ աչք չունի զինք շրջադատող շքեղանքներուն վրայ: Ո՞ր սիրահարը ուրիշ կիներու կը նայի, եթէ անշուշտ ճշմարիտ եւ խորունկ սիրով մը լեցուած է կեանքը: Ժազին համար անփոխարինելի կը մնայ «հեռուոր սիրուհին»՝ Հայաստանը, որուն միանալու ուխտ մը կնքած է նախախնամութեան հետ եւ յուսապինդ կը սպասէ որ ուշ կամ կանուխ այս օտար ճամբաները զինք անոր զիրկը հասցնեն:

Ժազի ամբողջ քերթողութեան հիմնական յատկանիշներէն մէկը զգայական ըլլալն է: Եւ Աղբալեան զինք որակած էր «զգայութեանց նկարիչ»՝ «Մեղրալուսին» հատորի յառաջաբանը գրելով: Աշխարհը զգալու եւ արտայայտելու զգայական այս յատկանիշը մենք կը գտնենք նոյնիսկ հայրենասիրական անոր տաղերուն մէջ, երբ շօշափելի եւ ըմբոշխնելի իրականութեան մը գոյութիւն չունի իր գիմաց: Այսուհանդերձ, ժազ գիտէ զգայական կանգնելու վերածել իր կարօտներն անդամ: Հայաստանի հոգը կը

ցանկայ շօշափել զկոյսի միտին պէս, զաղցր ու զովք, ու տակաւին քիչ գտնելով թանձրացեալ այս բացատրութիւնը, որ շօշափական զգայարանքին կը պատկանի, օղնութեան կը կանչէ հոտի իր զգայարանքներն ալ ու կ'ըսէ. «Հողն այդ հոտուըտայի թոքերովս եւ նօթութեամբ յովաղի. կամ հացի պէս, խունկի պէս ծամծմէի դայն անկուշտ»:

Ինչո՞ւ այս ահաւոր զաղցը: Որպէսզի կարենայ զհամն առնել մեր հայրերու հոգիին, մեր հայրենի դաշտերուն եւ կարենայ հայութեամբ արբենալք:

Այնպէս հօր է Հայաստանի սէրն ու կարօտը բանաստեղծի շիզերուն մէջ, որ զինք կը մղէ ո՛չ միայն հողը ծամելու, այլ նաեւ ընդխառնուելու անոր, թաղուելու անոր մէջ եւ ցորենահասկ մը դառնալու անկէ ծլած:

Փառ Յակոբեանի այս սեռի ջերթուածները ամէնէն հարազատներն են իր խառնուածքին, զերծ զարոզչական բնոյթէ եւ ճարտասանութեան մեղքերէն: Իրաւ ապրումներու սարսուռը չի՞ փոխանցուիր միթէ բոլորիս, երբ բանաստեղծը կը մաղթէ զհասակ մը հող ունենալ Արարատեան դաշտին մէջ, հոն թաղուիլ հունտի մը պէս, ցած խոտերուն հաւասար, մերկ՝ պատանքէ եւ փառքէ, զի հայրենի հողն ինքնին պիտի բեհեզ ըլլայ» իր մարմնին չուրջ: Թաղուիլ հունտի մը պէս եւ սպա վերածիլ իբրեւ ցորենի հասնես հասկ կամ վայրի ծաղիկ:



Եթէ սկզբնական շրջանին բանաստեղծը պատանեկան խանդով բռնկած սիրահար մըն է հայրենիք-սիրուհիին, աւելի հասուն տարիքին, տատանման մը ետք, կը դառնայ տեսանող-պատգամաբերը ամբողջ ազգի մը սպասումին: Իր մէջ արթնցած է մարդարեւական զօրութիւն մը, որ աւելի ծանրալուք հեղինակութիւն կու տայ իր կեցուածքին եւ աւելի վճռական հաւատք՝ իր խօսքին: Միտքը տիրապետած է սրտին վրայ, դատումն ու դատաստանը փոխարինած են իր զգայարանքները:

Փառ Յակոբեան այժմ կը հնչեցնէ քնարի տեղ շեփոք եւ սրինգի տեղ՝ թմբուկ: Մարտահրաւէր մը չէ անշուշտ իր երգը, որովհետեւ այս անուշ բանաստեղծին խորթ են յարձակապաշտ եւ մարտական արամազրութիւններ, բայց իր երգը կը դառնայ երբեմն զովք ու ներքող Հայաստանի յստեանական փառքերուն, երբեմն ողեկուշում մեր հերոսական պատմութեան և յաճախ հաստատումը ապրելու մեր կամքին եւ մեր հրաշալի յարութեան:

Առաջին անվերապահ վճիռը, որ կ'արձակէ հայութեան թշնամիներուն, բարեկամներուն եւ ամբողջ մարդկութեան երեսին, հայ ժողովուրդի անմահութեան փաստն է: Անցեալի ահաւոր բռնութիւններն ու հայածանքները չկրցան պատմութեան էջերէն ջնջել բուռ մը այս ժողովուրդը: այսուհետեւ ալ ս'չ մէկ ուժ պիտի կրնայ խորտակել անոր ապրելու եւ ստեղծագործելու կամքը:

Ձեր բորանին դէմ՝ մեմք բո՛րք արեգակ,
Կա՛նք ու կը մեա՛նք աշխարհի վրայ:
Ձեր յիսին կրակով դարձուցի՛ք մոխիր,
Ձերս հովին տալի՛ք մեր գիրն ու ոգին.
Բայց մեմք՝ լուսասփիւս Մեքոպ լուսածին՝
Անցեալի ճորէն կը գոռա՛մք - մերկա՛յ...
digitised by A.R.A.R.@

Ձեր հրդեհին դէմ՝ ծովի՛ պէս ամծիր
Կա՛նք ու կը մնանք աշխարհի վրայ :

Ուրիշ՞ կը ծնի բանաստեղծին մէջ այս խոր համոզումը : Պարագա-
յալան խանդավառութիւններու արդի՛ւնքն է արդեօք, թէ ազգի մը յուսա-
բեկ մնացորդացին կորով ներշնչելու առաքելութիւն : Ո՛չ մէկը եւ ո՛չ միւ-
սը : Ժառ Յակոբեանի հաւատքը կը բխի հայ ժողովուրդի դարաւոր պատ-
մութեան ակերէն եւ անոր հոգեմտաւոր արժէքներու խոր գիտակցութե-
նէն : Մենք կանք ու կը մնանք, որովհետեւ «Մենք սրտի անդունդ ենք եւ
մտքի բարձունք», որովհետեւ «Մենք անխախտ կամքի անյաղթ Արարատ
ենք», «Մենք ժայռի պէս հաստատ ենք եւ դաշտի պէս յուսովի», «Մենք
սրբախոյնով Ապրիլ 24 ենք, բայց նաեւ Ապրիլեան սուգին ու մոխրին վրայ
բարձրացած քանկուութիւն Մայիսի արեւ» (Մ. էջ՝ 7) :

Հայութեան յանրօրինակ եւ ազգային հանդէպ ժառ Յակոբեանի
վառաճութիւնը կը ծնի ուրեմն հայկեան արդիւն, որուն ճառագայթում-
ներն են Հայկն ու Վարդանը, Էջմիածինն ու Լուսաւորիչի տաղը, Նարեկն
ու Սայաթ-Նովան, Անին ու Երեւանը : Պարսիկը, մոնկոլը, թաթարն ու
թուրքը իրենց աւերիչ ու վայրագ բնապղծերով զցուցան մեր դէմ, սիւն-
սիւն քանդեցին մեր սուրբ երդեքները, բայց մենք «հակառակ անոնց դէն-
քին ու նենգին, մեր լեռներուն պէս յաղթ ու կանգուն ենք» :

Պատմութեան այս դասը, որ անքան պերճաբան է, իրաւունք կու-
տայ փոթորիկներու կուրծք տուած այս ժողովուրդի բանաստեղծ զաւկին
արդար հպարտութեամբ մը ազգաբարեւու աշխարհին :

Երբ փոքորիկի պէս խոյանաք մեր հագույն դէմ,
Ձեր բարբարոս քո՛րսմը փուփ պիտի բախի հայ հանճարի ազամանդին .
Երբ մեր դժոխքն ամբողջ վառէք մեր կեանքին դէմ,
Ձեր շին իրրեւ մսխիր ու մախ պիտի բախի հայ յանրժի Արարատին :

Մենք կայինք ու մնացինք. այսուհետեւ ալ մենք կանք ու պիտի մը-
նանք՝ ինչ ալ բլլան պայմանները . «Մենք կը հոսինք աշխարհն ի վար ան-
դադար հայակարկաչ իրրեւ Արաքս անսպառ եւ մենք կը վառինք միշտ աչ-
խարհի գմբէթին Լուսաւորիչի իրրեւ կանթեղ ու հոգի» :

Բազմաթիւ պատկերներով ու փոխաբերութիւններով՝ ժառ Յակոբեան
կը շեշտէ մեր ուժին գաղտնիքը, որ պարզ է արեւու լոյսին պէս : Ուրիշներ
ծառայեցին բիրտ ուժերու եւ փարեցան նիւթական զէնքերու, ատոր հա-
մար ալ «զէնքով ապրողներ՝ զէնքէն փչրեցան . քանզի շունչէն ոչ երգ, ոչ
տեսիլք», բայց մենք գոյատեւեցինք, քանզի «Մեր ձեռքին՝ սուրբ տեղ
սրինգ եւ մեր սրտին զէմ ունէինք արեւ» :

Ահա այսպէս, մեր պատմութեան արշալոյսէն ի վեր զինուած հոգե-
կան զէնքերով, «կուռի տեղ երգով կ'երթանք լոյսերուն» :



Բանաստեղծը ի՞նչպէս կը տեսնէ գալիքը : Նոր նահատակութիւննե՞ր,
նոր աւերածութիւնն, հուր ու մոխր՞ : Ո՛չ անշուշտ : Ներքին ձայն մը շա-
բունակ իրեն կ'ըսէ, թէ ապագան պիտի գայ ջահազարդ հսկայ նաւու մը
պէս, դանդաղ այլ վստահ, պիտի գայ մութերու ծովէն, մէզերու մէջէն,

«լոյսի եւ յոյսի միջուկը բեռացած»։ Մենք որ կը տառապինք օտարութեան մէջ, ժպտին համար «յաղթանակի ձայնն ենք քառասոմբակ»։

Երբ կը պատկերացնէ լուսաշող ապազան, ժպտ կը վերագտնէ իր քնարական շեշտերը, կրկին կը դառնայ սիրահար-հայրենասէրը, երգելու համար կարօտի քնքոյշ մեղեդիներ։

Պիտի գանձ քնդի, հեռու հայրենիք,
Մտղկուն եւ ծախուն Մայիսի նման՝
Մարաւ ծառերուդ բերելու ծաղիկ,
Մտղիկ դառնալու դաշտերուդ խոպան :

Գալիքի ոսկեվառ այս ակսիւքը ժպտ հովանաւորուած կը տեսնէ անպայման ազատութեան գրօլով, որ «իր անզսպելի թեւերը լուսաբացի պէս պարզած պիտի ըլլայ շորս ծագին»։

Այ բա՛ւ է որքան մոյկեր տնօրէն
Մեր ծաղիկ դաշտերն անգութ կոխտանն :
Բա՛ւ է - չեմք ուզեր
Ո՛չ մէկ օտար սա՛ք հայ հողին վրան,
Որ մեր ցորեններն ազա՛տ հասկանան՝
Արագածի պէս...

Այ բա՛ւ է որքան գոյնավ թշնամի
Մեր կամարին սուրբ կապոյտն եղծուի :
Բա՛ւ է - չեմք ուզեր
Ոչ մէկ խորթ դրօշ հայ երկինքին մէջ,
Որ աստղերը մեր շողան ջինջ ու պերճ՝
Զերթ ճիւն մտախնամն : («Մ.», էջ՝ 41)

Կարելի չէ պնդել որ ազատութեան դրօշ տննչն ու որոնումը քաղաքական հանդանակի մը ձեւակերպումն է ժպտի ազգային ուղեգծին վերայ, բայց հայօրէն Հայաստանը զգալու եւ բմբունելու ուրիշ կերպ գոյութիւն չունի բանաստեղծին համար։ Առանց ազատութեան՝ Հայաստանի ապազան պիտի մնայ միշտ ամպերով ծածկուած եւ իր երազը՝ անկատար։ Ապազան իսկապէս մերը պիտի ըլլայ, երբ հայրենի դաշտերուն եւ լեռներուն վերեւ սաստունի միայն մեր հոգին։

Ժպտ Յակոբեան իր զեղումներու ընթացքին յորդաբուխ է, պերճարան, բազմերանդ։ Նոյն նիւթի մասին կրնայ բազմաթիւ քերթուածներ դրել արտակարգ դիրքութեամբ։ Հայ լեզուն կը գործածէ տիրական վարպետութեամբ. եւ անոր բառազանձին հանդէպ շուայ է մինչեւ իսկ իր վիրաբերումը։ Ունի պատկերներու եւ արտայայտութեանց ինքնուրոյն ձեւեր, որոնք ընթերցողին կը բաշխուին կալին մէջ դիզուող ցորենի առատութեամբ։ Եթէ հարստութեան այս վատնումը երբեմն կը վնասէ բանաստեղծի տպումներուն խտացած բիւրեղացման, միւս կողմէ սակայն մեր ատը կը բանայ բազմաշնորհ բանաստեղծի հոգիին հարուստ մէկ երեսը։

Հայրենասէր ժպտ Յակոբեանի ապրումները նոյնքան անկեղծ են եւ իրաւ, որքան բնութեան, սիրոյ եւ հաւատացեալ քրիստոնեայի իր միւս երգերը։

Մ. ԻՇԽԱՆ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ՅԱՆԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՆՊԱՏԱԿԸ

Կեսնքը յարատեւ ձգտում է դէպի երջանկութիւն, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ ընդհանուր (ոչ մասնակի) եւ տեւական հաճոյք:

Ընդհանուր հաճոյքը մասնակի հաճոյքներու համադրումարն է, եւ հետեւանք քի ընդհանրապէս, որոչ ցանկութիւններու իրականացման:

Ազդող ամէն էակ տեւականօրէն կը կրէ իր հոգիին մէջ որոչ ցանկութիւններ:

Յանկութիւնը ներքին մղում է, ստեղծելու, իրականութիւն դարձնելու մասնաւոր, երեւակայական կացութիւններ, որոնք կը կոչուին ցանկալի կացութիւններ:

Յանկութիւնները հետեւանք են գիտակից եւ անգիտակից որոչ հազորդումներու՝ ներքին եւ արտաքին իրականութիւններու մտաին, որոնք կը հասնին մեր ուղեղին: Այդ հազորդումները կը կոչուին դրգիւններ:

Որպէսզի ստեղծուի ցանկութիւնը, անհրաժեշտ է որ ենթական ունենայ հաճոյքի նախատեսութիւնը (anticipation mental), շողկապուած՝ երեւակայական կացութեան հետ:

Եւ որպէսզի ստեղծուի հաճոյքի նախատեսութիւնը, ենթական պէտք է դառնի, իր իմացական կարողութիւններով՝ կապ, յարաբերութիւն տուեալ երեւակայական կացութեան եւ հաճոյքին միջեւ:

Յանկալի կացութիւնը նպատակ է, երբ կապը այդ կացութեան եւ հաճոյքին միջեւ անմիջական է:

Ուրիշ խօսքով, ցանկալի կացութիւնը նպատակ է, երբ գիտակցուած, նա-

խատեսուած վերջին պատճառն է հաճոյքի ստեղծման:

Երբ ես ծարաւ եմ, դարեջուր խմելը ինծի համար ցանկութիւն է: Նպատակը դարեջուրի համին զգայնութիւնն է:

Գարեջուր խմելու ցանկութիւնը կը ստեղծուի, երբ ես կը նախատեսեմ որ դարեջուրի համին զգայնութիւնը ինծի հաճոյք կը պատճառէ:

Նպատակներու իրականացումը հետեւանք է որոչ կացութեան մը մասին մեր ունեցած մտապատկերին, եւ ցանկութեան՝ այդ կացութիւնը իրականութիւն դարձնելու:

Բայց նպատակին իրականացումը, իւր հերթին կը դառնայ պատճառ, կամ կը նպատակէ որ ստեղծուի նոր հետանկար մը, ուրիշ խօսքով՝ կը ձգտի իրականութիւն դարձնել ուրիշ աւելի հետաւոր կացութիւն մը, որուն գիտակցութիւնը եւ ցանկութիւնը չունինք:

Կացութիւնը, որ հետեւանք է նպատակին իրականացման եւ որուն գիտակցութիւնը եւ ցանկութիւնը չունինք մենք՝ կը կոչենք դիմակէտ:

Ձուր խմելու կացութիւնը նպատակ է: Մեր անձին պահպանումը օժտող ջուրի որոչ քանակը դիմակէտ է:

Երբ տարբեր նպատակներ ունին միեւնոյն դիմակէտը, մենք երկուքը մէկ կ'անուանենք զուգադէմ նպատակներ:

Ձուր խմելը եւ արկածէ մը խուսովիլը զուգադէմ նպատակներ են, որովհետեւ ունին միեւնոյն դիմակէտը՝ անհատին պահպանութիւնը:

Նպատակը իրր իրականութիւն դառնայ՝ կը ստեղծէ հաճոյք:

Հետեւաբար նպատակը, որ ցանկա-

լի կացութիւն է, իրականութիւն դառնալով կը վերածուի հաճոյքի կացութեան: Բայց յաճախ կը ստեղծուին հաճոյքի կացութիւններ, առանց որ ենթական անոնց ցանկութիւնը ունեցած ըլլայ նախապէս:

Օրինակ, անտառին մէջ պտըտած պահուած սոխակի մը երգը ինծի հաճոյք կը պատճառէ: Միեւնոյն է պարագան մարմնական ցաւերուն համար, որոնք հոճոյքներ են բացասական իմաստով, բայց որոնց նախապատկերը եւ ուրեմն ցանկութիւնը մենք չունինք:

Այդ պարագաներուն, ցանկութիւնը կը ստեղծուի իբրև հետեանք հաճոյքին, եւ կը մղէ ենթական տեսականացնելու կամ վերջ ղնելու հաճոյքի կացութեան:

Նպատակները կ'ընդգրկեն մեր անձը, ուրիշին անձը, կամ անձերու հաւաքականութիւն մը, որոնք կրնան պարունակել իրենց հերթին՝

1) Յատկութիւններ, օրինակ՝ ֆիզիքական ուժ, առողջութիւն, քաղաքութիւն, բարութիւն:

2) Զգայնութիւններ, օրինակ՝ տաքութիւն, ճնշում, համ, գոյն, ձայն:

3) Զգացումներ, օրինակ՝ հաճոյք, սէր, կարօտ, վախ, երախտագիտութիւն, վրէժ:

4) Իմացումներ: Զգայնութիւնները, զգացումները եւ իմացումները նպատակին մէջ ունին որոշ ուղղութիւն. անոնք ուղղուած են մէկ անձէն զէպի ուրիշ անձ մը, օրինակ՝ զաւակ մը (ենթական) կրնայ նպատակ ունենալ որ իր եղբայրը սիրէ իր հայրը: Աշակերտը (ենթական) կըրնայ նպատակ ունենալ որ իր ուսուցիչը իմացումը ունենայ որ ինքը սորված է զասը:

Միայն բարկութիւններն են որ չեն ենթադրեր ուղղութիւն՝ նպատակներու մէջ: Օրինակ՝ դաւկին նպատակն է որ իր հայրը առողջ ըլլայ (առողջութիւնը ուղղուած չէ մէկ անձէն զէպի ուրիշ անձ մը):

Նպատակը առարկայական է, երբ

չ'ընդգրկեր մեր անձը, օրինակ, մերձաւորին երջանկութիւնը:

Նպատակը ենթակայական է, երբ կ'ընդգրկէ միայն մեր անձը: Եթէ ես կը մտիմ, ես նպատակ ունիմ օժտել իմ անձը որոշ շերտութեամբ:

Նպատակը հաղորդական է, երբ կը պարունակէ կապ ենթակային եւ ուրիշ անձի մը միջեւ: Օրինակ, բարեւը կամ համբոյրը, զոր կ'ուզենք տալ սիրած ձակի մը. երախտագէտ կամ վրէժառու նպատակները հաղորդական նպատակներ են:

ԱՐԾԷՔԸ

Մենք կ'անուանենք ցանկութեան առարկայ հաճոյքի ստեղծման գիտակցուած, նախատեսուած վերջին պատճառը, ազդակը, որ կրնայ գոյութիւն ունենալ առանձին եւ անկախ մեր անձէն:

Ցանկութեան առարկան առարկայական հակացողութիւնն է, որ, ըստ մեր մտածումին՝ կը ստեղծէ հաճոյք ուղղակիօրէն կամ մեր անձին հետ յարաբերութեան մէջ մտնելով:

Գարեջուրին տեսակին մէջ ինչ որ հաճոյք կը ստեղծէ՝ զարեջուրի համին զգայնութիւնն է: Ցանկութեան առարկան զարեջուրն է, որովհետեւ գիտակցուած վերջին պատճառն է, ազդակն է, որ կրնայ գոյութիւն ունենալ առանձին եւ անկախ մեր անձէն:

Ցանկութեան առարկան շողկապումն է որոշ թիւով համեմատաբար պարզ իրականութիւններու եւ յատկութիւններու: Այդ յատկութիւններէն ո՛մանք կապ չունին մեր ցանկութեան հետ: Ընդհակառակն, ուրիշ յատկութիւններ կը կազմեն մեր ցանկութեան բուն, անհրաժեշտ, էական առարկաները:

Ցանկութեան առարկային էական եւ անհրաժեշտ տարրը հաճոյքի ստեղծման համար, ըստ նախատեսութեան, մենք կ'անուանենք ցանկութեան վերացական առարկայ կամ արժէք:

Գարեջուրը շաղկապումն է զանազան յատկութիւններու: Անիկա ունի որոշ Հասունութիւն, որոշ քանակութիւն, որոշ ձեւ, որոշ դոյն, որոշ սառնութիւն, որոշ համ, որոշ թափանցիկութիւն, որոշ ծանրութիւն, եւ այլն:

Այս յատկութիւններէն էականը Հաճոյքի ստեղծման համար՝ զարեջուրին իւրապատուկ համն է: Մնացած յատկութիւնները էական չեն հաճոյքի ստեղծման համար: Այդ պատճառով զարեջուրին համը ցանկութեան վերացական առարկան է, կամ արժէքը:

Ենթակայական նպատակներու մէջ, արժէքը առանձինն գոյութիւն չի կըրնար ունենալ, անիկա զատ յատկութիւն է, որովհետեւ նկատի առնուած է անկախ, անջատուած ենթակայէն: Օրինակ՝ զովութիւնը, քաջութիւնը:

Առարկայական նպատակներու մէջ արժէքը կրնայ առանձինն գոյութիւն ունենալ, որովհետեւ ան յատկութիւն է շաղկապուած որոշ առարկայական Հասկացողութիւններու: Օրինակ՝ մօր մը համար՝ իր զակին երջանկութիւնը: Հայրենասէրին համար՝ Հայրենիքին վերելքը: Բարեկէն համար՝ մերձաւորին երջանկութիւնը:

Ամէն պարագայի, յատկութիւնը անհրաժեշտ տարրն է արժէքին:

Հետեւաբար, արժէքները կրնանք բաժնել տեսակներու, համաձայն Հասկացողութիւններուն, որոնք կը պարուենակեն յատկութիւնը: Այս տեսակէտով կրնան գոյութիւն ունենալ:

Նիւթական արժէքներ: Օրինակ՝ քաղցրութիւնը, զովութիւնը, Հաճելի բոյրը, ձայնը:

Մարմնական արժէքներ: Օրինակ՝ առողջութիւնը, Փիղիքական ուժը, սեռը:

Հոգեկան արժէքներ: Ինչպէս քաջութիւնը, ներողամտութիւնը, նուիրումը, բարութիւնը, իմացական կարողութիւնը, պարտականութեան զգացումը:

Ընկերային արժէքներ: Օրինակ՝ արդարութիւնը:

Կրօնական արժէքներ: Օրինակ՝ Հաստքը, եւ այլն:

ՔԱՆԻ ՄԸ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Կարգաւթիւնը յատկութիւնն է իրականութեան վերածելու առնուած որոշումները: Արժէք է ենթակայական նպատակի, որովհետեւ ենթական կը ցանկայ օտտել այդ արժէքով իր խօսանքը:

Կարող ըլլալու նպատակը կը մղէ մարդիկը կատարելու ազնիւ գործեր զիտութեան, արուեստի եւ ուրիշ բնագաւառներու մէջ:

Կարող ըլլալու նպատակը կը մղէ նաեւ կատարելու շար գործեր, որովհետեւ ամէն անգամ, երբ մէկը գիտակցաբար եւ ուզելով տառապանք կը պատճառէ ուրիշին՝ կարող ըլլալու ոգաւորութիւնը կ'ունենայ:

Բարութիւնը ցանկութիւնն է, որ իբրեւ նպատակ ունի մերձաւորին երջանկութիւնը:

Արժէքը այս նպատակին, նոյնպէ՛ս, մերձաւորին երջանկութիւնն է, որ կըրնայ գոյութիւն ունենալ անկախ ենթակայէն:

Ձգտում՝ ստեղծելու յարաբերութիւն ենթակային եւ արժէքին միջեւ՝ գոյութիւն չունի, Հետեւաբար բարութիւնը առարկայական նպատակ է:

Բայց գոյութիւն ունի նաեւ ենթակայական բարութիւն: Ենթակայական բարութիւնը ենթակային ցանկութիւնն է՝ օժտել իր անձը բարութեամբ: Ուրիշ խօսքով՝ ենթակայական բարութիւնը ենթակային ցանկութիւնն է՝ օժտել իր անձը ուրիշին, մերձաւորին երջանկութեան ցանկութեամբ:

Առարկայական բարութիւնը եւ ենթակայական բարութիւնը ունին միեւնոյն դիմակէտը, այսինքն՝ նպատակներու իրականացման անգիտակից Հետեւանքը: Այդ գիմակէտը կը կայանայ ապահովելու երջանկութիւնը ո՛չ թէ ենթակային, այլ երջանկութիւնը Հաստ

րակութեան: Հետեւաբար, առարկայական բարութիւնը եւ ենթակայական բարութիւնը զուգադէմ նպատակներ են: Արդարութիւնը յատկութիւնն է ընկերային յարաբերութիւններու, ուր բարի ցանկութիւնները վարձատրուած են երջանկութեամբ եւ շար ցանկութիւնները փոխադարձուած են ռառապանքով:

Արդարութիւնը առարկայական վիճակ է, ինչպէս բարութեան պարագային, առարկայական վիճակ է ուրիշին երջանկութիւնը:

Արդարութեան ցանկութիւնը մեղ էր մղէ իրականութիւն դարձնել արդարութիւնը:

Արդարութիւնը, ուրեմն, նպատակ է:

Անիկա, նոյն ատեն, արժէք է, որովհետեւ առարկայական նպատակ է, եւ կրնայ գոյութիւն ունենալ անկախ ենթակայէն:

Բայց գոյութիւն ունի նաեւ ենթակայական արդարութիւնը:

Ենթակայական արդարութիւնը՝ ենթակային ցանկութիւնն է, որ կը մտնի օտտել իր անձը արդար ըլլալու ցանկութեամբ:

Առարկայական արդարութիւնը եւ ենթակայական արդարութիւնը զուգադէմ նպատակներ են, որովհետեւ ունին միեւնոյն դիմակէտը՝ արդարութիւն հասարակութեան մէջ:

Տառապանքը հաճոյքն է՝ բացասական իմաստով:

Հետեւաբար, տառապանքը հաճոյք չի կրնար ըլլալ միաժամանակ, Բայց տառապանքը կրնայ ըլլալ պատմառ հաճոյքի:

Գոյութիւն ունի մասնաւոր նպատակ, հետեւաբար, ցանկութիւն՝ օտտել մեր անձը տառապանք ըլլալու յատկութեամբ, եւ տառապանք ըլլալու գիտակցութիւնը, իմացումը հաճոյք կը ստեղծէ մեր մէջ:

Այս ցանկութեան մէջ նպատակը տառապանքն է, բայց նպատակին անմիջական եւ նախատեսած հետեւանքը,

ինչպէս բոլոր ցանկութիւններու պարագային, հաճոյքն է:

Արժէքը, նոյնպէս, տառապանքն է, որովհետեւ յատկութիւնն է, որ կրնայ գոյութիւն ունենալ անկախ ենթակայէն:

Նպատակը ենթակայական է, որովհետեւ կը ձգտինք օտտել մեր անձը տառապանք ըլլալու յատկութեամբ:

Տառապանքի ցանկութիւնը ունի էրկու նշանակութիւն.

1.- Ընկերային, անոր համար՝ որ ուրիշին, եւ հետեւաբար, ընկերութեան օգտակար ըլլալու իղձով ենթակային տառապանքը, ցաւը յաճախ անհրաժեշտ է: Տառապանքը ըլլալու ցանկութիւնը կը մղէ ենթական կատարելու անձնագործեր:

2.- Անհատական ճշմանկալիքին, ամէն անհատ կը խուսափի տառապանքէն: Բայց երբ հակառակ իր կամքին անհատը կը տառապի, տառապանքը ըլլալու գիտակցութիւնը կը ստեղծէ հաճոյք եւ կը մեղմէ իր տառապանքը:

ԿԵՂԵՑՆՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս տեսնուց, ցանկութեան վերացական առարկան, այսինքն արժէքը ընդհանրապէս առանձինն գոյութիւն չի կրնար ունենալ: Բայց ան կը գրաւէ մեզ շրջապատող առարկաներու եւ երեւոյթներու մէջ՝ շողկապուած ուրիշ իրականութիւններու հետ, եւ կը կազմէ բազկազուցիչ մէկ տարրը այդ առարկաներուն եւ երեւոյթներուն:

Մզուած մեր ցանկութիւններէն, մենք տեսականօրէն կը փնտռենք արժէքը մեզ շրջապատող թանձրացեալ առարկաներու մէջ:

Առարկան, ուր մենք կը փնտռենք արժէքը, կը կոչուի գիտուած առարկայ: Գիտուած առարկան կրնայ կապ ունենալ կամ չունենալ արժէքին հետ:

Գնդեցկութիւնը կապն է, յարաբերութիւնն է առարկայի մը եւ արժէքին միջեւ:

Գնդեցիկ կը կոչուի ամէն առարկայ:

որ օժտուած է գեղեցկութեամբ, այսինքն ունի կապ արժէքին հետ:

Գեղեցկութիւն կը կոչուին նոյնպէս գեղեցիկ առարկաները, երբ կ'անդրադառնանք անոնց գեղեցիկ ըլլալու յատկութեան, այսինքն՝ երբ ունին յարաբերութիւն արդիւնքին հետ, այնպէս, ինչպէս կանաչութիւն կը կոչենք ամէն բուսականութիւն, երբ կ'անդրադառնանք անոնց կանաչ ըլլալու յատկութեան:

Իսկ առարկայ մը կրնայ ունենալ կապ, յարաբերութիւն արժէքին հետ, երբ առարկային գոյութիւնը պայմանաւորուած է արժէքին գոյութեամբ, երբ անոր (առարկային) գոյութիւնը կ'ենթադրէ արժէքին գոյութիւնը:

Յարաբերութիւնը առարկային եւ արժէքին միջեւ կրնայ ըլլալ:

- 1) Նոյնութեան յարաբերութիւն,
- 2) Ներքին, բովանդակութեան յարաբերութիւն,
- 3) Արտաքին յարաբերութիւն:
 - Կը հետեւի, որ գեղեցիկ է՝
 - 1) Նոյնինքն արժէքը,
 - 2) Ամէն առարկայ, որ կը կրէ, կը բովանդակէ արժէքը,
 - 3) Ամէն առարկայ, որ հետեւած է արժէքին:

Մանուշակին բոյրը գեղեցիկ է, որովհետեւ կը նոյնանայ արժէքին հետ: Մանուշակը գեղեցիկ է, որովհետեւ կը կրէ բոյրը, որ արժէք է:

Միեւնոյն մանուշակը, եթէ արուեստական է, կրնայ գեղեցիկ ըլլալ իր հասնելի գոյներուն համար. բայց, ամէն պարագայի, նուազ գեղեցիկ է, որովհետեւ զուրկ է իր մէկ արժէքէն՝ բոյրէն:

Քէչին տաքութիւնը արժէք է, երբ կը մսինք: Շոգին՝ որ կը բարձրանայ թէյէն, գեղեցիկ է, երբ կը մսինք, որովհետեւ արդիւնք է տաքութեան, որ արժէք է:

Յօղը, որ կը շրջապատէ գարննաբնի գաւաթը՝ գեղեցիկ է, երբ տաքացած ենք, որովհետեւ արդիւնք է սառնութեան, որ արժէք է այս պարագային:

Հոյակապ շէնքը գեղեցիկ է, որովհետեւ արդիւնք է արժէքին, որ կարողութիւն է եւ որուն իմացումը կ'ունենայ ենթական, երբ կը դիտէ շէնքը. գեղեցիկին գոյութիւնը պայմանաւորուած է կարողութեան գոյութեամբ:

Գեղեցիկ են բոլոր ցանկութեան առարկաները եւ հաճոյքի առարկաները, որովհետեւ կը պարունակեն արժէքը:

Գեղեցիկ են նաեւ ա'յն առարկաները, որոնք ցանկութեան կամ հաճոյքի առարկաներ չեն, որովհետեւ չեն պարունակեր արժէքը, բայց որոնք արդիւնքներն են արժէքին:

ՍԷՐԸ

Սէրը պարզ, անվերածելի (irreductible) իւրատեսակ զգացում է, որ մենք կրնանք զգալ կամ յայտնատեսել (intuir), բայց որ կարելի չէ բացատրել:

Արժէքին իմացումը մեր մէջ կը ստեղծէ սիրոյ զգացումը եւ սիրոյ զգացումը կը շաղկապուի իրեն ծնունդ աբուղ արժէքին իմացումին:

Բայց սիրոյ զգացումը կը շաղկապուի նաեւ դիտուած առարկային, երբ ան կապ ունի արժէքին հետ, այսինքն երբ գեղեցիկ է:

Հետեւաբար, իմացումը գեղեցիկ առարկային եւ անոր միջոցով իմացումը արժէքին, կը ստեղծէ սէր եւ սէրը կը շաղկապուի նախ արժէքին իմացումին եւ ապա, անոր միջոցով, դիտուած գեղեցիկ առարկային իմացումին:

Մինչ այժմ արտայայտուած միտքերը կարելի է ամփոփել հետեւեալ ձևով:

Գեղեցկութեան ըմբռնումը եւ սիրոյ զգացումը սերտօրէն կապուած են նպատակներու եւ ցանկութիւններու: Գոյութիւն չունի գեղեցկութեան ըմբռնում եւ սիրոյ զգացում՝ եթէ չկայ նպատակ եւ ցանկութիւն:

Որոշ իմացումներ (գործիւններ) կը ստեղծեն նպատակներ:

Նպատակը կը ստեղծէ արժէքին գաղափարը:

Քանձրացեալ առարկաներուն մէջ մենք կը յայտնաբերենք արժէքը, այսինքն՝ կ'ունենանք արժէքին իմացումը:

Կ'ըմբռնենք յարաբերութիւնը, որ գոյութիւն ունի արժէքին եւ Քանձրացեալ առարկային միջեւ, այսինքն՝ կ'ըմբռնենք գեղեցկութիւնը:

Դիտուած Քանձրացեալ առարկան կը վերածուի գեղեցիկ առարկայի:

Արժէքին իմացումը մեր մէջ կը ստեղծէ սէր եւ կը շարժապուի անոր:

Արժէքին միջոցով սէրը կը շարժապուի նաեւ դիտուած առարկային, որուն կապուած է. եւ այս ձեւով մենք կը սիրենք դիտուած գեղեցիկ առարկան:

Հետեւեալ օրինակը կ'որդեպրէ Հոգեմտականորէն այս կապակցութիւնը:

Սաստիկ շոգը զիս կը նեղէ (գըրգրիւ):

Կ'ուզեմ զոգմանալ (նպատակ, ցանկութիւն):

Ձոյմանալու նպատակը կուտայ ինծի պաղութեան գաղափարը (արժէքին գաղափարը):

Կը տեսնեմ լեռը ծածկուած միւնով (դիտուած Քանձրացեալ առարկայ):

Ձիւնածածկ լեռան միջոցով ես կը յայտնաբերեմ, իմացումը կ'ունենամ պաղութեան (արժէքին):

Կ'ըմբռնեմ յարաբերութիւնը, որ գոյութիւն ունի միւնածածկ լեռան եւ արժէքին միջեւ, այսինքն՝ կ'ըմբռնեմ գեղեցկութիւնը:

Դիտուած Քանձրացեալ առարկան կը վերածուի գեղեցիկ առարկայի:

Պաղութեան իմացումը իմ մէջ առաջ կը բերէ սէր:

Սէրը կը շարժապուի պաղութեան (արժէքին) իմացումին եւ անոր միջոցով միւնով ծածկուած լեռան (գեղեցիկ առարկային) իմացումին:

Եւ այսպիսով՝ ես կը սիրեմ միւնածածկ լեռը:

Եթէ ես մսէի, փոխանակ տաքցած

ըլլալու, այդ միւնոյն լեռը իմ մէջ գեղեցկութեան ըմբռնում եւ սիրոյ գղացում պիտի շատեղծէր: Եւ եթէ պիտի սահեղծէր, որոշ արժէքներու հետ ունեցած իր կապերուն պատճառով՝ անոնք պիտի ըլլային աւելի աղօտ, աւելի նըւաղ:

մ

Արժէքը ենթակայական է, ան, վերջին Հաշուով, կապուած է ցանկութեան եւ ցանկութիւնը ենթակայական է:

Գեղեցկութիւնը առարկայական է, ան կապն է դիտուած առարկային եւ արժէքին միջեւ եւ այդ կապը առարկայական է, անկախ ենթոկայէն:

Ըմբռնումը գեղեցկութեան, այսինքն կապին, որ ունի դիտուած առարկան արժէքին հետ՝ ենթակայական է, ան կախուած է ենթակային իմացական կարողութիւններէն:

Սիրոյ գղացումը, որ կը ստեղծուի գեղեցկութեան ըմբռնումէն, նոյնպէս ենթակայական է, կախուած է ենթակային Հոգեկան կառուցումէն:

ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գեղեցկութիւնները կարելի է բաժնել երեք տեսակներու, Համաձայն բնագաւառներուն, ուր անոնք կը գտնուին:

- 1) Բնական, նիւթական գեղեցկութիւններ,
- 2) Ապրող էակը,
- 3) Արուեստի գործերը:

ԲՆԱԿԱՆ, ՆԻԹԱԿԱՆ

ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բնական, նիւթական առարկաները եւ երեւոյթները գեղեցիկ են, երբ նոյնացած են արժէքին հետ, կամ երբ ունին կապ, յարաբերութիւն անոր հետ:

Ուաղողին Համը գեղեցիկ է, որովհետեւ արժէք է: Քաղցրը ինքնին սոյնպէս գեղեցիկ է, որովհետեւ ունի կապ խաղողին Համին հետ:

Վարդին բոյրը, ջուրին պաղութիւն

նը գեղեցկութիւններ են: Գեղեցկու-
թիւններ են նաեւ առարկաները, որոնք
կը կրեն վերայիւնալ արժէքները՝ վար-
դը, ջուրը իր ամէն ձեւին տակ: Գետ,
ծով, լիճ, աղբիւր, եւայլն:

Բնական, նիւթական առարկաները
եւ երեւոյթները գեղեցիկ են նաեւ, երբ
մենք ազատութիւնը ունինք, թէ ա-
նոնք ունին կապ հոգեկան արժէքներուն
հետ:

Մենք տեսականօրէն կ'ըմբռնենք եւ
կը համեմատենք մեզ շրջապատող ա-
ռարկաները իրարու հետ: Ամէն անգամ,
երբ անոնց մէջ կը գտնենք տարբերու-
թիւններ՝ այդ տարբերութիւնները կը
վերաբերենք պատահականութեան: Ամէն
անգամ, երբ մը գտնենք նոյնութիւններ
կամ հաստատութիւններ՝ մենք կը գի-
րագրենք այդ նոյնութիւնները եւ հա-
աստարութիւնները իմացական կարո-
ղութեան մը միջամտութեան: Այսպի-
սով, գտնելով կապ զիրարած բնական,
նիւթական առարկային եւ սրժէքին,
այս պարագային իմացական կարողու-
թեան միջեւ, զիրարած առարկան մեզի
կը թուի գեղեցիկ:

Այդ պատճառով, գեղեցիկ են նիւ-
թական առարկաները, որոնք բաղկա-
յած են համաչափ տարրերէ:

Միւսմանը նիւթական, բնական ե-
րեւոյթ է: Իր վառ գոյները հանոյք կը
պատճառեն, հետեւաբար, արժէք են եւ
ուրեմն՝ գեղեցկութիւն:

Բայց ծիածանը գեղեցիկ է նաեւ իր
երկներու հաւասարութեան եւ իր կո-
րութեան համար, որ միեւնոյն է ամ-
բող երկայնքին եւ իմացական կարո-
ղութեան մը գործը ըլլալու տպաւորու-
թիւնը կը ձգէ մեր վրայ:

Նոյնպէս, ճիւղին փաթիլը մեզի դե-
ղեցիկ կը թուի իր հաւասար ապիտո-
կութեան եւ իր մասերուն համաչափու-
թեան համար:

ԱՊՐՈՂ ԷԱԿԸ

Ապրող էակը եւ մասնաւորապէս
մարդը գեղեցիկ է իր մարմնով, հոգիով
եւ գործով:

Ձուկը գեղեցիկ է՝ երբ կը լողայ,
թռչունը գեղեցիկ է՝ երբ կը ճախրէ օ-
դին մէջ, որովհետեւ ձուկին լողալը եւ
թռչունին ճախրանքը դիտելով մենք ի-
մացումը կ'ունենանք կարողութեան, որ
արժէք է:

Մարդը գեղեցիկ է իր մորթին, աչ-
քերուն, ձաղերուն գոյնհրովը եւ ձայ-
նովը, որոնք երբ հանելի են՝ գեղեցկու-
թիւններ են, որովհետեւ կը նոյնանան
արժէքին հետ: Բայց գեղեցիկ են նաեւ
իր լայն ուտերը, քայլածքը, մորթին
եւ մկաններուն առաձգականութիւնը եւ
իր շարժումները, երբ կը յայտնաբերեն
առողջութիւն եւ ֆիզիքական ուժ, այս-
պիսին՝ մարմնական արժէք:

Իր մարմնին եւ դէմքին համաչափ
գիծերը, դէմքին արտայայտութիւննե-
րը գեղեցիկ են, երբ կ'արտայայտեն նո-
գեկան արժէքներ, իմացական կարո-
ղութիւն, բարութիւն, տառապանք: Ս-
րինակ՝ ժպտը գեղեցիկ է, երբ շարու-
թիւն կ'արտայայտէ:

Մարդուն մարմնին եւ դէմքին հա-
մաչափ գիծերը եւ ձեւերը կը յայտնա-
բերեն իմացական կարողութեան մը գո-
յութիւնը: Այդ կարողութիւնը յասկո-
թիւնը չէ նոյնիսկ մարդուն, բայց ա-
տիկա էական չէ: Իականը ա՛յն է, որ
մենք կապ կը գտնենք մարդկային
մարմնի համաչափ գիծերուն եւ որեւէ
իմացական կարողութեան մը միջեւ,
ինչ որ հոգեկան արժէք է:

Հոգին մենք ուղղակիօրէն չենք
զգար մեր զգայարաններով, բայց կըր-
նանք ունենալ հոգին իմացումը: Ս-
հոգին գեղեցկութիւն է, եթէ կը բովան-
դակէ արժէքներ:

Ապրող էակներէն բացառաբար մար-
դը կրնայ արտայայտել իր նողիին ար-
ժէքները բերանացի եւ գրաւոր բառե-
րով եւ նաեւ արուեստներու միջոցով
(նուագ, նկար, քանդակագործութիւն,
պար, եւայլն), որոնք այս ձեւով կ'ու-
նենան յարաբերութիւն արժէքներու
հետ, եւ, հետեւաբար՝ գեղեցկութիւն-
ներ են:

Գիւստիւմը, գործը, խօսքը եւ ուր-

ւեսալը, երբ զեղեցկութիւններ են, կուտան նաեւ զեղեցկութիւն հոգիին, որ կը պարունակէ իրենց արտայայտած արժէքը:

Գեղեցիկ են մասնաւորաբար դործերը մարդուն:

Գործը ո՛չ միայն կ'արտայայտէ հոգեկան արժէքներ, այլ նաեւ կը ստեղծէ այդ արժէքները: Բարի գործը ո՛չ միայն կ'արտայայտէ անձին բարութիւնը, այլ նաեւ կուտայ այդ անձին բարի ըլլալու յատկութիւնը, ստորագիծն:

Այս պարագան կը մղէ ենթակոն կատարելու ազնիւ գործեր, օժտելու համար իր անձը յատկութիւններով, որոնք իրեն համար արժէքներ են:

ԱՐՈՒՆԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԸ

Որեւէ երեսոյթ, երբ հետեւանք է աշխատանքի՝ կը կոչուի գործ:

Ամէն գործ իր հերթին հետեւանք է զանազան ուրիշ գործերու, որոնք կը նախորդեն իրեն եւ կը կոչուին գործին հանգրուանները կամ գործին փուլերը:

Ամբողջութիւնը հանգրուաններուն, առանց փոխազդեցութիւններու եւ յաջորդականութեան, ժամանակի մէջ կը կոչուի գործին ընթացքը (technique):

Արուեստը գործին ընթացքն է, երբ գործը զեղեցկութիւնն է:

Իսկ զեղեցկութիւնները երբ գործ են, այսինքն երբ արդիւնք են աշխատանքին, կը կոչուին արուեստի գործեր կամ արուեստի առարկաներ:

Արուեստի առարկան կը պատճառէ հաճոյք գիտող ենթակային:

Արուեստի առարկայ ըլլալու համար որեւէ գործ պէտք է մղէ գիտող ենթական մտածելու եւ մտածումով գտնելու յարաբերութիւնը, որ գոյութիւն ունի արուեստի գործին եւ արժէքին միջև: Մտածելու եւ մտածելով արժէքը գտնելու հաճոյքը ընդհանուր է արուեստի բոլոր ճիւղերուն համար:

Բացի ատկէ, հաճոյք է սիրոյ զրացումը ինքնին, իբրեւ արդիւնք՝ զեղեցկութեան ըմբռնումին:

Արուեստը կը պատճառէ հաճոյք՝ յուզումի միջոցով: Մենք կը յուզուինք ամէն անգամ, երբ կը շոնենք սէր ուրիշ անձին կողմէ՝ հանդէպ մեր անձին կամ հանդէպ մեր սիրած մէկ ուրիշ անձին կամ առարկային: Զարեհցի «Նս իմ առնուշ շայտտանի» բանաստեղծութիւնը մեզ կը յուզէ, որովհետեւ կ'արտայայտէ սէր հանդէպ հայաստանին, որ մեր սիրած մէկ առարկան է Հոգեբանական իմաստով:

Արուեստը կը պատճառէ հաճոյք նաեւ հաճելի զգայնութիւններու միջոցով: Երաժշտութիւնը մեզի կուտայ զգայնական հաճոյք՝ իր ձայներու ուրակով (ոչ էլեւէջներով): Նկարչութիւնը իր հաճելի գոյներով, նոյնպէս, կը պատճառէ զգայնական հաճոյք:

Արուեստի ամէն գործ ունի իր արտայայտութեան ձևը եւ բովանդակութիւնը:

Արտայայտութեան ձևը կը յայտնաբերէ կարողութեան արժէքը:

Ինչ կը վերաբերի բովանդակութեան, արուեստի զանազան ճիւղեր կ'արտայայտեն տարբեր արժէքներ:

Ճարտարապետութիւնը բովանդակութիւնով աղքատ արուեստ է, ան չի կրնար արտայայտել ո՛չ բարութիւն, ո՛չ արդարութիւն եւ ոչ մէկ հոգեկան վիճակ:

Բովանդակութեամբ ամենահարուստներն են զեղարուեստական դրակոնութիւնը, թատրոնը, շարժանկարը:

Բանաստեղծութիւնը կրնայ արտայայտել հոգեկան արժէքներու բոլոր տեսակները՝ կարողութիւն, բարութիւն, արդարութիւն, տառապանք, ծնողական նուիրում, ներողամտութիւն, եւայլն: Ան կրնայ արտայայտել նաեւ հոգեկան որեւէ վիճակ:

Ձափերը եւ յանգերը բովանդակութիւն չեն տար բանաստեղծութեան: Անոնք տարբերն են բանաստեղծութեան ձեւին եւ կ'արտայայտեն կարողութեան արժէքը:

ՐԱՅՅԻ ԻՍՐԱԵԼԻԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

**Ա Կ Ն Ա Ր Կ
ՀԱՅ ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**

Դժուար է որևէ ջննդատական կամ գրախոսական գրիչ երկի մը մասին, որ իր ձեռով եւ պարունակութեամբ առաջին անգամ ըլլալով գիտական աշխարհին կը ներկայանայ: Իրաւ է, նախապէս շատեր, զանազան լեզուներով, հայ ճարտարապետութեան մասին գրած են, սկսեալ Ժէ. (ՆԴ) զարէն, բայց մասնագիտական ուղիով եւ միայն Հայկական ճարտարապետութեան նուիրուած ու սկիզբէն մինչեւ մեր օրերը ընդգրկող որեւէ երկ մինչեւ վերջերս չէր հրատարակուած: Արքան ալ թորամանեան այն միակ անձը եղած ըլլալ, որ ուսումնասիրելով Հայկական ճարտարապետութիւնը, ինչպիսիքն էր ճարտարակ նետեց մեր ճարտարապետութեան անգերազանցելի նմոյշները, ցոյց տուաւ գիտական աշխարհին անոր ինչնայտուակ ոճը եւ ճշգրտեց տեղը համաշխարհային պատմութեան մէջ, սակայն ժամանակ չունեցաւ լիակատար գործ մը տալու, իբրեւ համադրութիւնը իր տարիներու ապրումներուն: Թորամանեան իրրեւ արդիւնք իր առօրեայ ուսումնասիրութիւններուն՝ պարբերաբար մամուլին յանձնեց հարուստ «նիւթեր հայ ճարտարապետութեան պատմութեան», բայց ան բախտ չունեցաւ իր յօդուածներուն լիակատար հաւաքածոն տեսնելու:

Ն. Մառ եւ ուրիշներ, նոյնպէս, ո՛չ մէկ ջանք խնայեցին, որպէսզի գիտական աշխարհը, ի վերջոյ, Հայկական շինարարական ինքնուրոյն արուեստի մը գոյութիւնը միանգամընդմիջ ընդունի: Այլ չեմ խօսիր Սարգիսիւսի մասին, որ պարզապէս թորամանեանի գործը քիչ թէ շատ իւրացնելով, կոթնելով գիտնականի իր միջազգային համբաւին, 1918-ին հրատարակեց իր պատկասելի գործը, գերմաներէն լեզուով երկհատոր «Հայկական ճարտարապետութիւն եւ Եւրոպա»: Սարգիսիւսի այս գործը, բոլորովին անակնկալի բերաւ եւրոպական գիտական աշխարհը: Համբաւաւոր մասնագէտներ, Օ. Շուազին մանաւանդ, եւ բիւզանդապէտ Տիհլ, սկիզբները հեղեական քննադատով մը ընդունեցին Սարգիսիւսի տեսութիւնները, բայց, ի վերջոյ ստիպուած եղան ընդունիլ իրենց սխալը եւ հին հրատարակութիւնները սրբազրբեայ ձեռով վերահրատարակեցին: Մանաւանդ Օ. Շուազինի ժամանակները ուղղակի՛ նոր գլուխ մը բացին, միմիայն Հայկական ճարտարապետութեան համար, շեշտելով Հայկական ճարտարապե-

տուժեան զերը բիւզանդական կոչուած ճարտարապետութեան մէջ, նոյնը ըրաւ Տիհչի, բայց շատ տկար կերպով :

Ձենք կրնար ժխտել հսկայ բիւզանդական կայսրութեան գոյութիւնը, որ զրեթէ հազար տարի անընդհատ զբօշակիրը եղած է քրիստոնէական արուեստին, բայց պէտք է ընդունիլ նաև, որ Հայաստան՝ այդ կայսրութեան արեւելեան սահմաններուն վրայ կընկըւած, երբեմն անկախ, շատ անգամ ոտնակոխ, բիւզանդական կամ զբացի միւս պետութեանց՝ պարսիկներու եւ յետոյ այ արաբներու կողմը, երբեք չզաղքեցաւ ինքնուրոյն արուեստի, զբաղանութեան եւ գիտութեան, այսինքն բարձր մշակոյթի առաջնակարգ օճախ մը ըլլալէ :

Հոս, այս էջերուն վրայ, ո՛չ մէկ նպատակ ունիմ հայկական ճարտարապետութեան մասին զրուած զբաղանութեան պատմականը ընելու, ասիկա շատ երկար պիտի ըլլար: Ինչ որ մեզ կը հետաքրքրէ, սա՛ է՝ որ այն հրատարակութիւններէն եւ ոչ մէկը, Ուրարտուէն մինչև մեր օրերը, Հայաստանի ճարտարապետութեան ամբողջական պատկերը չի ներկայացներ :

Հայկական Ս. Ս. Հ. Գիտութիւններու Ակադեմիայի Արուեստի Ինստիտուտը, կը խորհի ստեղծել հայ արուեստի պատմութիւնը եւ այս ինչորոյն լուծման նախապատրաստութեան համար, կ'առաջադրէ ուսումնասիրութեան սկսիլ, երաժշտութեան, ճարտարապետութեան, թատրոնի եւ կերպարուեստի հանգուցային առանձին հարցերուն նուիրուած մենագրութիւններու հրատարակութեամբ: 1963-ին լոյս կը տեսնէ մատենաշարի առաջին հատորը՝ «Ակնարկ հայ երաժշտութեան պատմութեան»: Իսկ 1964-ին լոյս կը տեսնէ երկրորդ հատորը՝ «Ակնարկ հայ նարտարապետութեան պատմութեան» :

«Այս աշխատութիւնը ուրուագծում է երկրի նարտարապետական, կառուցարարական արուեստի զարգացման յաջորդական ընթացքը, սկսած ուրարտական ժամանակներից մինչև մեր օրերը: Այսպէսով նպատակ է դրում, ներկայացնել հայկական նարտարապետութեան ծագման կազմաւորման ու նրա հետագայ զարգացման անցած աւիւն, որով եւ փորձ է արւում ընթերցողի առջև բացել հայ ժողովրդի կեանքի՝ փոքրի լեզուով գրուած, շուրջ երեք հազարամեայ ստրագրութեան ամաչառ էջերը» :

Եւ առ այդ, ինչ կը վերաբերի հայկական ճարտարապետութեան՝ Ս. Ս. Հ. Գիտութիւններու Ակադեմիայի Արուեստի Ինստիտուտը կը կազմէ հետեւեալ խմբազբաղական մարմինը .

«Ներածութիւն»

- Ա. Ա. Սահինեան
- Գլուխ Ա., «Ուրարտական ճարտարապետութիւնը»
- Կ. Լ. Յովհաննիսեան
- Գլուխ Բ., «Հայկական ճարտարապետութիւնը Ստրկատիրական հասարակարգի ժամանակաշրջանում»
- Ա. Ա. Սահինեան

Գլուխ Գ., «Հայկ. ճարտարապետութիւնը վաղ Ֆէոտալիզմի դարաշրջանում» (Դ.-Ձ. դարեր)

Ա. Ա. Սահինեան

Գլուխ Դ., «Հայկական ճարտարապետութիւնը Ձ. դարի երկրորդ կէտից մինչև Է. դարի վերջը»

Ս. Յ. Մնացականեան

Գլուխ Ծ., «Թ.-ԺԱ. դարերի հայկ. ճարտարապետութիւնը»

Ս. Յ. Մնացականեան

Գլուխ Զ., «ԺԲ.-ԺԹ. դարերի հայկ. ճարտարապետութիւնը»

Կ. Լ. Յովհաննիսեան

Գլուխ Է., «Սովետական Հայաստանի ճարտարապետութիւնը»

Լ. Մ. Բարսեան

Յմբարգրենք՝ Բ. Ն. Աւաքէլեան, Մ. Դ. Մազմանեան

« Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն »

Ա. Ա. Սահինեան

Մասնադասակէս տասնընթաս խիտ էջերու մէջ, հեղինակը համառոտ մէջ պատկերը կու տայ հայկական ճարտարապետութեան պատմութեան, սկիզբէն մինչև մեր օրերը, որմէ ետք, կը օկտիբուելէ թուր սոյն օտար եւ հայ հեղինակները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով դրադած են հայկական ճարտարապետութեամբ: Համառօտ, բայց շատ յստակ կերպով կու տայ գրեթէ թուրքին յատկանշական գիծերը: Կը խարտնէ բոլոր անոնք, որոնք արգիտութեամբ կամ մասնաւոր նպատակներով կ'անտեսեն հայկական ճարտարապետութեան ինքնուրոյնութիւնը եւ անոր մէջ կը տեսնեն պարսկա-արաբական արուեստի ազդեցութիւնը (С. Шааге) կամ քիւզանդականի ազդեցութիւնը (Еh. Diehl եւ О. Wulfl) եւ կամ հոսմէա-բիւզանդական ազդեցութիւնը (Rivoira): Կատկած չկայ որ եւրոպական գրականութեան մէջ հայկական ճարտարապետութեան ինքնուրոյնութեան ըմբռնման գործին մեծապէս ծառայած է Ստորչիկովսկին, որքան որ ալ այս վերջինը «Հայերի ճարտարապետութիւնը եւ Սլրապան» անուն աշխատութեանը մէջ շատ մը կէտեր սխալ ըմբռնած ըլլայ:

Յրինակ, Քրիստոնէական վաղ շրջանի Հայաստանի պագիլիէ կառուցումները օտարամուտ կը համարէ: Կեդրոնական գմբէթի կառուցումներու հիմքում ընկած հայկական ժողովրդական տաճարաւ ժածկերու խաղացած դերը կ'անտեսէ, ծայլն: Այսուհանդերձ, պէտք է ընդունիլ որ հայկական ճարտարապետութեան մասին մինչև այսօր օտար շնորհով գրուած ամենալուրջ գրութիւնը, նոյնինքն Ստրչիկովսկիի վերոյիշեալ երկն է:

Սովետական կարգերու Հայաստանի մէջ հաստատումէն ետք է որ հայկական ճարտարապետութեան աւսումնասիրութիւնը կ'անցնի հայ գիտնականներու մեռքը եւ այլեւս կը դադրի անհատական գրողունք ըլլալէ եւ կ'ըլլայ պետական գործ:

Ուրարտական, քաղաքայինութեան, ճարտարապետութեան եւ շինարարական գիտութեան բազմաթիւ հարցեր, Բ. Պիտտորովսկիի, Կ. Յովհաննիսեանի եւ Մարտիրոսեանի շնորհիւ՝ իրենց ճշմարիտ յուսարանումը կը գտնեն: Իսկ Գ. Բունիաթեան, Կ. Տրեւեր եւ Աւաքելեան հելլենական եւ արեւելեան ժողովուրդներու արուեստներու փոխ-յարարելութիւններու ճիշդ մեկնարանումը կու տան:

Գալով միջնադարեան ճարտարապետութեան, Մ. Մազմանեան, Ն. Տոկարսկի, Ս. Յակոբսոն (S. Jacobson), Ս. Մաֆարեան, Վ. Յարութիւնեան, Բ. Աղաբաբեան, Ս. Մնացականեան, Զ. Պալիխաչեան, Կ. Ղաֆատարեան, Ս. Բարխուդարեան, Ա. Մարութեան, Ս. Վարդանեան իրենց բազմաթիւ եւ բազմազան ուսումնասիրութիւններով հետզհետէ լոյս կը սփռեն շրջապահուած բազմաթիւ հարցերու շուրջ:

Ա. Ա. Սահինեան միայն տասնըւորս էջերով կու տայ յատուկ գաղափար մը, նաեւ հայկական ճարտարապետութեան միջազգային գրականութեան վրայ, թուելով բոլոր այն հեղինակները՝ Փրանսացի, գերմանացի, ռուս, իտալացի, անգլիացի եւ հայ, ինչպէս նաեւ ուրիշ ազգերու կողմէ հրատարակուած գիրքերու լիակատար մէկ ցանկը, որուն համար միմիայն խորին շնորհակալութեան խօսք ունինք:

Անկասկած, Սահինեանի գործը աւելի կատարեալ պիտի ըլլար, եթէ յիշէր նաեւ ժ. Դարէն սկսեալ հետեւեալ հեղինակներու օնունները եւս, որոնցմէ մէկ քանին ուղղակի, եւ յստակ կերպով, մատնանշած են հեռաւոր Հայաստանի ինքնուրոյն արուեստի գոյութիւնը, մինչ այդ բոլորովին անծանօթ: Poser 1621, Eullia 1647, Rod 1648, Tavernier 1676, Chardin 1673, Chilingier 1699, Ker-Porter 1822, Boré Eugen 1845, Benoit F. 1912, E. Migeon 1927, եւայլն:

ԳԼՈՒԽ Ա.

«ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ»

Կ. Լ. Յովհաննիսեան

Կարելի է ըսել, թէ արտասահմանի համար այս գլուխը, զգրկէ նորութիւն մըն է: Տարիներու ընթացքին, մէկ քանի կցկառու գրութիւններ հազիւ թէ մեզի հասած են:

Ուրարտուի գոյութիւնը, հայկական լեռնաշխարհի մէջ, առաջին անգամ կը յիշատակուի (Մ. Թ. Ա.) ժ. Գ. դարուն, ասորական արձանագրութիւններուն մէջ: Տարիներու հետազոտութիւնները ցոյց կու տան, որ Հայաստան թանկագին հնութիւններու հարուստ թանգարան մըն է: Կարմիր բլուրի, Էրեբունիի պեղումները եւ հոն գտնուած իրերը Հայաստանը Ուրարտարանութեան համաշխարհային կեդրոն մը դարձուցին: Ուրարտական սեպագիր արձանագրութիւններ կրող յուշարձանները ընդհանրապէս դանձր-ւած են միայն Հայաստանի մէջ, ինչ որ ի միջի այլոց կ'ապացու-

ցանկ, որ Ուրարտուն Խորհրդային Միութեան սահմաններուն մէջ գտնուած ամենահին պատուօթիկն է :

Սեղմ էջերու մէջ կը տեսնէք, թէ ինչպէս կառուցուած էին քաղաքները՝ Տուշպան, Էրեբունին, Թէյշէքային, Դաքաշին, Հայկաբերդը, Թոփրախ-Գալէն, եւայլն, ինչպէս նաեւ բնակելի շէնքերը: Շատ հետաքրքրական է Կարմիր բլուրի մեզարոնի ընդհանուր տեսքը, եւ վերակազմուած նոյնինքն Կ. Լ. Յովհաննիսեանէն: Անոր ներքին տեսքը, նաեւ ուրիշ բազմասեկցիոն բնակելի տան մը ներքին տեսքը, պարզապէս հմայիչ է: Ուշադրութեան արժանի են Արին Բերդէ, Սալդէի տաճարին ընդհանուր տեսքը եւ ներքին որմնանկարները, միշտ Յովհաննիսեանի կողմէ վերակազմուած, որ 22 էջերով եւ 15 պատկերներով ընդհանուր, բայց յստակ եւ զոհարարցիլ մէկ պատկերը կու տայ Ուրարտական աշխարհին:

ԳԼՈՒԽ Բ.

«ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ»

Հեղ. Ա. Ա. Սահինեան

Այս գլուխով ուղղակի հայկական աշխարհ կը մտնենք: Շատ սեղմ էջերու մէջ, Սահինեան մաթիստրալ կերպով կու տայ հայկական քաղաքակրթութեան սկզբնական շրջանը, սկսած Երուանդունիներէն, որ է Հելլենական շրջանը: Տիրան Բ.ի օրով այդ կայր աւելի կը սերտանայ: Անոր արքունիքը ապաստան կը գտնեն նշանաւոր յոյն գրագէտ՝ Ամֆիկրատէսը, ինչպէս նաեւ փիլիսոփայ եւ պետական գործիչ Մեթրոտոր Ակեպիացին: Արտասալգ Բ.ը յունարէն լեզուով կը գրէ իր օղորդութիւնները: Այսուհանդերձ, կ'ըսէ Սահինեան, «Հելլենիստական մշակոյթը Հայաստանում մնաց, առանկապէս իբրեւ ստրկատիրական վերնախաւի եւ Բազաթային ընկալութեան մշակոյթ: Ժողովուրդը շարունակեց զարգացնել նախնիներից ժառանգած առանձուք-իւնները»:

Սահինեան համառոտակի կերպով կու տայ մէկ քանի նշանաւոր քաղաքներու նկարագրականը:

Արմաւիր, - Ըստ Խորենացիի հիմնադրուած Հայկի թոռ՝ Արամայիսի կողմէ:

Երուանդաշատ, - Կառուցուած այրարտեան Երուանդունիներու վերջին թագաւոր՝ Երուանդի օրով (Գ. դար Մ. թ. Ա.), իբրեւ նոր մայրաքաղաք կը յաջորդէ Արմաւիրի: Անոր տեւրակները Արաքս եւ Ախուրեան գետերու միացման կէտին ձօս են: Արտաշատ, - Նոր մայրաքաղաք մը եւս, հիմնուած Արտաշէս Ա.ի օրով, ըստ Սարգսոնի կառուցուած է «գերաւանջում, որը մնամ է քերակզու եւ նրա շուրջը, բացի պարանոցի մասից, գետի ափերէ է ձգուում պարիսպը, իսկ պարանոցը փակուում է խրամատով եւ պատուարով»:

Նոյնը կը վկայէ մեր պատուական Խորենացին: Ուրիշ վկայութիւններ կան Թաղիդոսէն, Պլուտարքոսէն, եւայլն:

Տիգրանակերտ, - Կը դանուի մեծ Հայքի Աղձնիք նահանգի մէջ: Հիմնուած է 77 թուին (Մ. թ. Ա.) հիմնադիրը՝ Տիգրան Բ.: Ունեցած է 100,000-ի հասնող բնակչութիւն:

Վազարշապատ, - Այսօրուան Էջմիածինը, հիմնուած Վազարշակ Ա-ի կողմէ՝ 117-140 թուականներուն: Իրբեւ աթոռանիստ քաղաք, մնացած է մինչեւ Գ. դար: Յիշատակուած բոլոր քաղաքներու պէս, անօր հիմնական մասը եղած է կեդրոնը գտնուած միջնաբերդը:

Գառնի, - Հայկական արքունիքի ամաբանոցներէն մէկը հանդիսացած է:

Գառնին, իր կառուցողական ոճով, հելլենիստական արուեստի ազդեցութիւնը չբռնի ամենացայտուն յիշատակարաններէն մին կը նկատուի:

Ա. Ա. Սահինեան շատ սեղմ տողերու մէջ կ'ամփոփէ Գառնիի շինութեան ոճը, շարիերը, հւայլն: Անշուշտ, աւելի լաւ պիտի ըլլար, եթէ մէկ քանի պատկեր աւելի տար, լաւագոյնս հասկնալի ըլլալու համար, բայց պէտք չէ մոռնանք, որ ամբողջ զբոսիչները միմիայն ակնարկ մըն է, հայ ճարտարագետութեան: Արդէն բազմաաբար, շատ մեծ տեղ առած է Գառնիի (9-10՝ էջ), ընդամենը 24 էջի վրայ:

Սահինեան տեղ-տեղ, Գառնիի աւերակներու ի տես բանաստեղծական թոխքներ կ'ունենայ: Ունի աւելորդ կրկնութիւններ: Եզրակացութիւն:

«Հայաստանում գոյութիւմ է ունեցել ժամանակի հասկացողութեամբ զարգացման բարձր աստիճանի վրայ գտնուող տեղական հարուստ ճարտարագետութիւն եւ այդ ճարտարագետութիւնը, չնայած անգիֆ (antique) արուեստի հետ ունեցած իր որոշակի շփմանը, ընթացել է զարգացման ինքնուրոյն ուղիով»:

Գ Լ Ո Ւ Յ Գ.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՎԱՂ ՖԷՈՏԱԼԻՁՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ» (Գ.-Ձ. ԴԱՐԵՐ)

Հեղինակ՝ Ա. Ա. Սահինեան

Այս դարաշրջանին անցնելէ առաջ, կ'ուզեմ երկու խօսք ըսել զրիտտոնէական կրօնի Հայաստանի մէջ պետական կրօն հռչակուելու թուականին մասին: Որովհետեւ այդ թուականը իբր հիմ կը ծառայէ հետագայ քննական-բաղդատական պատմական երեւոյթներուն, որոնք միմիայն Հայաստանի մէջ է, որ առաջին անգամ երևան եկած կ'ըլլան: Եւ հաճեալ այդ թուականը մեր պատմութեան ամենազինաւոր դարադարձը կը ներկայացնէ:

Որքան ալ զրիտտոնէութեան պետականացումը Հայաստանի մէջ ունեցաւ իր շատ մը բացասական հետեւանքները, (օրինակ, նախա-զրիտտոնէական շրջանի հայկական յիշատակարաններու եւ մատենագրութեան ոչնչացումը), սակայն, միւս կողմէ ալ, քաղաքական դեռնի վրայ, զրիտտոնէական խաւերը համախմբուելով ար-

զուեմբեք շուրջ, մեծապէս արգելք հանդիսացան, պարտիկ քաղաքա-
կանութեան, որ ամէն ջանք կ'ընէր նախարարները իրարմէ անջա-
տելով Հայաստանի միասնականութիւնը տկարացնելու:

Սահիճեան, 301-ը կ'ընդունի իր թուականագրութեան իբր
հիմ, մինչդեռ, Օրմանեան եւ ուրիշներ, ինչպէս եւ Գարապաշեան
302-303-ը, իբրաւ է, բուրն ալ Խորենացիի վրայ հիմնուելով է, որ
այդ թուականը իբր ճշգրիտ կ'ընդունին, սակայն, ըստ Ակադեմի-
կոս Մալխասեանցի, անոնք բացայայտ կերպով սխալ ճամբա կը
հետեւին: Մալխասեանց նոյնպէս հիմնուելով Խորենացիի Հայթա-
թած ժամանակագրական տուեալներու վրայ, Հայաստանի մէջ
քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուած պէտք է ըլլայ վերկ-
շական թուականի 279 տարին:

Հայոց պատմութեան ուրիշ մեծ հեղինակութիւն մը՝ Ն. Ս-
դոնց, Մալխասեանցէն բոլորովին տարբեր ուղիով, կը յանգի գրե-
թէ միեւնոյն թուականին: Չեմ հասկնար, թէ ինչո՞ւ տակաւին շա-
տեք այդքան յամուրէն 301-303 թուականներուն կառած կը մնան:

Մենք առժամաբար պիտի ընդունինք Մալխասեանցի եւ Ա-
զանցի տուած թուականներուն միջինը:

Ուրեմն այս դուրսը փոխանակ Գ-Ձ-ի, պէտք է Գ-Ձ-ի
վերածել: Սա շատ մեծ նշանակութիւն եւ կարեւորութիւն ունի,
երբ կը սկսինք բաղադատականը ընել, ուրիշ երկիրներու յեղաշրջ-
ման հետ:

Հայաստան միանգամ ընդմիշտ քրիստոնէութիւնը ընդունելով,
Սասանեան Պարսկաստանի զայրոյթը իբ վրայ կը հրահրէր. Հայ
ժողովուրդը, սակայն, ի գին նիւթական եւ Ֆիդիքական անհուն
զոհողութիւններու, պաշտպանեց իր ինքնուրոյնութիւնը: Սակայն,
բոլորովին Հայ մնալու համար, այսքանը չէր բաւեր, պէտք էր
թօթափել նաեւ յունական եւ ասորական ազդեցութիւնը, որ շատ
ուժեղ կերպով սկսած էր թափանցել, նոր կրօնի ուղիով: Ասոր ալ
յուժումը պտաւ Հայ ժողովուրդը, իր ինքնուրոյն գիրերու գիւտով
(406): Այլեւս Հայ ժողովուրդին ուրիշ բան չէր մնար ընելիք, ե-
թէ ոչ զարդանալ ինքնուրոյն կերպով, գրական, պատմական, գե-
տական, ինչպէս նաեւ ճարտարապետութեան ուղիով:

Մտաւորապէս մէկուկէս դար Հայաստան կ'ապրէ յարաբե-
րաբար խաղաղ կեանք, ինչ որ հնարաւորութիւն կու տայ Հայ ժո-
ղովուրդին ինքնուրոյնին հետ դարգացնել թարգմանական շատ հա-
րուստ գրականութիւն մը: Մանաւանդ, շինարարական ուղիով, ի
փոռս նոր կրօնին, կը կանգնին գեղեցիկ տաճարներ: Ժողովրդա-
կան փայտեայ հեծանիներով կառուցուած աւանդական հարթ ծած-
քերու զուգընթաց՝ լայն կերպով կը կերտուին աստիճանաբար նե-
ղացող կամ սեղմուող երդիքաւոր, այսպէս կոչուած, հազարաչէն
կամ սաղոմաճաղ դէպի երկինք սլացող ծածքերը: Սիւնազարդ շքեղ
սրահներով ժտուած եւ հազարաչէն ծածքով պայտաններ, եւ ջո-
րաչէն տաճարներ, բայց փոխան փայտէ ծածկոյթներու աւանդա-
կան փայտաչէնի տեղ, քարաչէն գմբէթներ յենած անշատ մոյթե-
րու վրայ:

Ի. դարուն, Գուինը կ'ըլլայ Հայաստանի այն գլխաւոր քո-
ղաքը, ուր կը սկսի կազմաւորուիլ Հայկական ճարտարապետու-

թիւնը: 640-ական թուականներուն, արարները զերազանց ուժերով կը յարձակին Հայաստանի վրայ, կը պաշարեն Դուինը եւ կը սպաննեն մօտաւորապէս 12,000 հոգի եւ 35,000 մարդ ալ զերի կը տանին: Ժամանակի ընթացքին, Դուինը կը վերածուի անմարդաբնակ ակերակներու կոյտի մը եւ անունն իսկ կը մոռցուի: 1893-ին, առաջին անգամ Ն. Մառ կը հետազօտէ Դուինի ակերակները, բայց ինկական, լուրջ աշխատանք կը սկսի միայն սովետական կառավարութեան կողմէ եւ պեղումները կը սկսին 1937-39 տարիներուն, Փլըրոֆ. Ս. Տէր-Աւետիսեանի գլխաւորութեամբ, իսկ 1946-ին, Փլըրոֆ. Կ. Ղաֆաստարեանի գլխաւորութեամբ:

Ղաֆաստարեան մասնաւոր կերպով կ'ուսումնասիրէ կաթողիկոսական պաշարը, որուն երեք սրահներուն հազարաչին ծածքը, դժագրութիւն-վերակազմութիւն Յարութիւնեանի - շատ յատկանշական է:

1958-ին, Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտին կողմէ ձեռնարկուած պեղումներով լոյս աշխարհ բերուած է, իր տեսակին մէջ միակը եղող Երեբունքի արւեստական լիճի պատնէշը (barrage) հաւանօրէն Ե.-Ձ. դարերէն, Անիի գունաւոր քարերով շինուած: Ետտ հետաքրքրական են զետնափոր դամբարանները, մանաւանդ Աղձնի դամբարանը, որ երկյարկանի եղած է:

Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու ատեն, Տրդատ Գ. եւ Գրիգոր Լուսաւորիչ, արքունի զօրքերու օգնութեամբ, կը կործանեն հեթանոսական կրօնի օճախները եւ անոնց տեղ կը կանգնեն նոր կրօնի անդրանիկ տաճարները: Աշտիշատի մէջ է, որ կը հիմնուի «էշայոց մեծ եւ առաջին մայր եկեղեցին»: Այս եկեղեցիները, սկիզբները, ընդհանրապէս, իբր կառոյց շատ մեծ տարբերութիւն չունին հեթանոսական պաղիլիքներէն: Ա. Ա. Սահինեան շատ զեղեցիկ կերպով ուղղանկիւն-երկայնական կ'որակէ զանոնք: Ժամանակի ընթացքին, ըստ նոր կրօնի պահանջներուն, զանազան յաւելումներ կ'ըլլան եւ հետզհետէ ինքնարբարար կը ստեղծուին նոր տիպի կառոյցներ:

Մանաւանդ 325-ին, Նիկիոյ տիեզերական առաջին ժողովէն ետքն է, որ հոն որոշուած եւ ընդունուած զանազան ձեւեր Հայաստանեայց Եկեղեցոյ Համար պարտադիր կ'ըլլան: Մանաւորապէս Ե. դարուն է, որ ճարտարապետական միտքը նոր որոնումներու կը սկսի: Հետեւելով այս տուեալներուն՝ կրնանք ըսել, թէ նախապատմական ժամանակներէ ի վեր գոյութիւն ունեցող հազարաչին տանիքով զեղջկական տունները՝ գմբէթը կիրարկած են նորաչին տաճարներու վրայ: Ուրիշ նորութիւն մը եւս, հնագոյն եկեղեցիներէն շատերը լուսամտու չունին կամ շատ ճղճիմ բացուած քներ միայն ունին, քրիստոնէական կրօնի ընդունումէն անմիջապէս ետք, առատ լոյսի պահանջը զգալի կերպով կ'աւելնայ, որով՝ այն նեղլիկ պատուհանները կը սկսին լայննալ: Սահինեան երկար եւ մանրամասն կերպով կը ներկայացնէ հայկական եկեղեցիներու բարաւորներու (architrave) դերը, դռներու կամ որեւէ բացուած քի վրայ, Կը խօսի նոյնպէս խճանկարներու եւ որմանկարներու մասին, որոնք, ըստ իրեն, շատ հին ժամանակներէն գոյու-

թիւն ունեցած են, բայց ինչ որ կ'երեւի, ժամանակի ընթացքին անոնց մէկ խոշոր մասը բոլորովին քայքայուած է:

Քրիստոնէական սկզբնական շրջանի միանաւ կառուցուածքները հետեւեալներն են. —

Ջաղաքախը, — որ կը գտնուի Արազած լեռան հիւսիսային ստորոտին, այժմեան Ապաթան գիւղին մէջ, Հայաստանի միանաւ տաճարներուն ամենամեծերէն է, 25 մեթրով 17.63:

Անոր կիսակործան պատերու ներքին մակերեսներուն վրայ որմնանկարչական հետքեր կ'ընկնին: Երնութեան բուն թուականը յայտնի չէ, բայց ըստ կառուցողական արուեստին, Սահինեան կ'ըսէ, թէ անիկա Դ.Յ. դարերուն կը պատկանի:

Միրուալուղ, — կը գտնուի Արթիկի շրջանին մէջ, գրեթէ անազարտ վիճակի մէջ: Չափերը 8.20×22.40, կը պատկանի քրիստոնէական ամենահին շրջանին, նոյնիսկ խորհողներ կան, ըստ որում անիկա նախկին հեթանոսական տաճար մը եղած է:

Թամախատ, — բաղդատմամբ Ջաղաքախի եւ Երնութեան շրջանի միջև, Թանահատի յատակագիծը աւելի բարդ է, ինչ որ կ'ենթադրէ, թէ անով կը սկսի պարզ պաղիլիքներու յեղաշրջումը՝ դէպի նոր կազմաւորում: Չափերը, բացի պայտածեւ ապստէն եւ հարաւային խուցէն, ինչպէս նաեւ արտաքին սիւնազարդ սրահէն եղած են 6.85×13.55 է: Մածքը եղած է փայտալէն:

Քաօտաղ, — կը գտնուի Նիջ գետուի Ապարան ամունի մէջ, կառուցման ճշգրիտ թուականը անյայտ կը մնայ: Ետտ հաւանաբար անիկա կը պատկանի աւանուան Դ. դարու տաղին տարեկներուն: Ետանաւ է եւ ծածկուած քարաշէն տանիքով: Այս ալ իր սկզբնական շրջանին շատ հաւանօրէն հեթանոսական պաղիլիք մը եղած ըլլայ, հաւանաբար մոռցուած:

Սրիբուֆ, — որիչ եռանաւ եկեղեցի մը եւս: Յատակագծային չափերը 11.50×26.60: Արդէն իսկ բացայայտ կերպով քրիստոնէական տաճարը կը սկսի նոր ձեւեր ստանալ, բարդանալ ըստ նորանոր պահանջներու: Սա ալ շատ հաւանօրէն նախկին հեթանոսական տաճար մը եղած է:

Սահինեան մանրամասնօրէն եւ հանգամանօրէն կը ներկայացնէ այս շատ կարեւոր յուշարձանը, որմէ, դժբախտաբար, շատ մեծ բան չէ մնացած, ինչ որ կ'արդիւն անոր մասին լիակատար դաղափար մը ունենալ: Օրինակ, կեղծոնական նաւը թաղակալ, թէ փայտալէն եղած ըլլալը կարելի չէ եղած հաստատել:

Երբերուցի ճարտարապետութիւնը նկատելիօրէն սերած է նախաքրիստոնէական ժամանակաշրջանի արուեստէն, որոշակի շփման մէջ է գտնուած քրիստոնէական կրօնը ընդունած հարեւան ժողովուրդներու (Սուրբա) ճարտարապետութեան հետ, եւ ինքը իր հերթին առատ նիւթ մատակարարած է յաջորդ ժամանակաշրջանի Հայաստանի ճարտարապետական կառուցողական արուեստին, կ'ըզակացնէ Սահինեան:

Տիկար, — Սահինեան այս շատ կարեւոր յուշարձանը չէ կըրցած տեղւոյն վրայ անձնապէս ուսումնասիրել եւ սակայն որպէսզի իր ակնարկներուն ընդհանուր դիժը անկատար ըլլալ, Քորաման-

Լանի «Տեկորի Տաճարը» աշխատատեղիներին կատարուած քաղաւածքներով ներկայացուցած է զայն :

Տեկորի տաճարը Հայկական դասական ճարտարապետութեան կազմաւորման շրջանի ամենահին կաթողիկէներէն մին է : Անիկա կը դանուի Անիէն ոչ հեռու այժմեան Տեկոր գիւղին ժողովրդի : Հիմնադրութեան թուականը անյայտ է : Վստահօրէն նախաքրիստոնէական շրջանի պազիւիք մըն է, զոր Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիի վերածած է : Գալով Ս. Կամոսրականի այն արձանագրութեան, որ գոյութիւն ունի տաճարի արեւմտեան շէնքերէ բարձրորդի վրայ, զանազան վերակառուցումներէն մինչեւ թուականը — Ե. դար — կըրնայ միայն ըլլալ :

Շնորհիւ իր զմբէթին, Տեկորի տաճարը, բացառիկ նշանակութիւն կը ստանայ, որ ըստ Թորամանեանի էջմիածնայ Մայր Տաճարի (Ե.) նմանութեամբ շինուած է :

Այս զմբէթը շատապէս պարզ յորինուածք ունի : Ակնելով թմբուկի հաստարակոցմ բազմանկիւն կողմերէն, դէպի կեղծոն նեղացող նոր նիւտերով ստացուած է ըրգաձեւ յորինուածք մը, ինչ որ ձեղք կը յիշեցնէ Հայկական ժողովրդական տուներու փայտաւղէն, աւանդական հաղարաւէն ծածքերը :

Տեկորի զմբէթը ուրիշ յատկանիշ մը եւս ունի : Անոր տանիքը մեզի ծանօթ է, իբրեւ առաջին Հովհաննէս տանիքը, որ հետապային գործածուած է ինչպէս, Մարմաշէնի եւ Ամբերդի վրայ, երեքն ալ ԺԱ. դարերուն :

Սահինեան, Տեկորի առջեւ, կը խօսի Հայկական ճարտարապետութեան մէջ գոյութիւն ունեցող միաւորի մասին, որ է հոռոմական եւ յունական շինութիւններու, ինչպէս նաեւ, շատ-շատ վերջը, Բիւնաւիմենքօ-ի ժամանակ գործածուած մօտաւոր, կամ միաւորը, կը ներկայացնէ անշատ կանգնած մոյթի հորիզոնական կտրուածքի շփոք, մինչդէռ, յունահռոմէական ճարտարապետութեան մէջ անիկա անշատ կանգնած մոյթի լայնական կտրուածքի կէսն է միայն : Տեկորի տաճարը ուրիշ յատկանիշ մը եւս ունի, որ հետապային շատ գործածական կը դառնայ, որ է՝ ուղղանկիւն շրջապատի մէջ պարփակուած իսլի թեւերուն կեղծոնական մասին վրայ բարձրացած զմբէթ, խաչաձեւ յատակագծի վրայ բարձրացած կեղծոնական զմբէթ :

(Շար. 1)

Ա. Օ.

ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿՆԵՐ

*Այցեալ տարի, մեր Մարտի Համարով՝ առանձինք Նրան-
սայի գրական մեծ մրցանակներով 1967-ին պարգևատրուած շէմ-
շերուն Համասու կենսագրականները եւ լուսանկարները, որոնց
Համազրութիւնը մեծապէս գիտատուեցաւ զգրական շրջանակնե-
րու հոգիէ:*

*Քաղաքացիով այդ Հանգամանքէն, որոշեցինք ամէն տա-
րի կատարել նոյն աշխատանքը:*

Ստորև 1968-ի շափնեկիրներուն տեղմ պատմութիւնը:

ՆՈՊԵՆԵԱՆ ՄՐՅԱՆԱԿ



**Le Japonais KAWABATA
Prix Nobel de Littérature 68**

Նույժեան գրական մրցանակը այս տարի տրուեցաւ նախնացի գրող Նասիւ-նարա Քավապաթային:

Նասիւնարա Քավապաթա ծնած է Օգաի, 1899-ին: Հափոնի մէջ շատ կարգացուած ու մեծ նախաշնորհ գտած գրող մը: Տասնըչորս տարեկանին *աքրացած՝ Քավապաթա ինքզինք գրականութեան կը նուիրէ շատ կանուխէն, հետո մնայով պատերազմէն եւ արդի Բալտակրթա-թեմէն: Քոսմ տարեկանին, վիպատան ժօօօմիրսիւ Բիշիի հետ կը հիմնէ գըրական կարեւոր հանդէս մը: Իր գործերը ամփոփուած են տասներկու հատորներու մէջ, որոնց գլխաւորները կը նըկատուին «Ժգիւի պարուհին», «Զիւնէ Էրկիր», «Լեբան թնդիւնը», «Ապիտակ թռչուններուն երամբ», «Քննիչը», եւ այլն:*

Ֆրանսայի մէջ այս գործերն միւայն երկուքը ծանօթ են՝ «Ապիտակ թռչուններուն երամբ», որ լոյս տեսաւ 1950-ին, եւ «Զիւնէ Էրկիր»-ը, որ լոյս ընծայուեցաւ առաջինէն ուղիղ տասնամեակ մը ետք:

Ներկայիս Միլվի Բընօ-Կաթիէն կաշխատի թարգմանել «Ժգիւի պարուհին» (1935) եւ «Լեբան թնդիւնը» (1954), որոնք Ալպէն Միշլէրի հրատարակչատան կողմէ լոյս տեսան ընծայուին 1969-ին:

Նասիւնարա Քավապաթա առաջին նախնացին է, որ կ'արժանանայ Նույժեան գրական մրցանակին:



«ՏԵՄԻՆԱՆԻ ՏԻԿԻՆՆԵՐԸ».- Զախեմ աջ՝ Տոմիկի օրի, Զօէ Օլտեմայուրի, Բամիլ Մարսո, Էլիզապէր Պարպիէ, Էտիք Թումաս, Ակնէս աջ լա Կարս, Ժէրմէն Պօմմե, Փամօի դէսուսին, Ժան Կալզի եւ Մատամ Սիմոն:

«ՏԵՄԻՆԱ» ՄՐՑԱՆԱԿ (1968):

«Ճեմինա» մրցանակին Հիմնադրութենէն (1904) է վեր, առաջին անգամ ըլլալով, դատակազմին Տիկինները առաջին իսկ ջուէարկութեան բացարձակ մեծամասնութիւն կազմեցին եւ պարզեաւորեցին Մարկրիթ Եուրքէնարի



Marguerite Yourcenar, Paris Février 1968 pour son livre « L'Oeuvre au Noir »

«Մ'աւօզ գործը» («L'Oeuvre au Noir»):

Մարկրիթ Եուրքէնար ծնած է 1903-ին, Լիլ քաղաքին մէջ, Ֆրանսացի հօրմէ եւ պելճիքացի մօրմէ: Իր ուսումը ստացած է Հօրենական տան մէջ, Յունաստանի եւ Իտալիոյ ճամբաներուն վրայ, ուր կ'ընկերանար մարդասէր իր հօրը:

Մարկրիթ Եուրքէնար իր գրական գործունէութիւնը սկսած է 1930-ին, «Ալիսիս» անուն վէպով, որուն յաջորդաբար կը հետեին «Նար Էարիսիսը», «Արիւսիան Յորուքիւններ», «Վերջին հարուածը» եւ ուրիշներ:

Երկրորդ անգամ «Ճեմինա» մրցանակը իրած այս հեղինակին գործը ունի դասական կառոյց մը, պատմութիւն եւ փիլիսոփայական խորք եւ արդիւնք է երկարատեւ ճիզի մը: Մարկրիթ Եուրքէնարի «Մտաւօզ գործը» իր ուժգնութեան եւ ինքնայատուկ արուեստին համար՝ շատ աւելի անդրադարձ ունեցաւ մամուլին մէջ, քան «Կոնքուր» եւ «Ընտան» մրցանակներով պարգևատրուած գործերը:



«ԿՈՆՔՈՒՐ»Ի ԱՆԻԱՄՆԵՐԸ.— Զախէն ուզ՝ Բէմն Գրնօ, Արման Սալախրու, Էրվէ Պագէն, Ֆիլիփ Էրիա, Լուի Արական, Բալամ Տօրօքլէս, Անտրէ Պիլլի, Ալեքսանդր Արնօ եւ ժամ ժիւնօ:

«ԿՈՆՔՈՒՐ» ՄՐՑԱՆԱԿԸ (1968)

1968-ին, «Կոնքուր» մրցանակը տրուեցաւ Պէրնար Քլավէլին:

Մնած է 29 Մայիս 1923-ին, Ճրանսայի ժիւրա շրջանին մէջ: 14 տարեկանին կը ձգէ դպրոցը եւ կը դառնայ հասարակական գործիչ: Ասան մը ետք՝ կ'որոշէ յանախել Արուեստից վարժարանը, պատերազմը սակայն կը խորտակէ իր այդ ծրագիրը: Այդ տարիներուն, կը խուսափի զինուորական պարտադիր ծառայութենէն եւ կ'աշխատի արհեստանոցներու եւ ագարակներու մէջ ու կը բնրէ իր մանակցութիւնը Փրանսայի ազատագրական շարժումներուն:

Պէրնար Քլավէլի առաջին վէպը՝ «Գիշերային գործաւորը» լոյս տեսած է 1950-ին: Երկու տարի ետք, «Աստուծոյ զայրոյթը» խորագրին տակ հրատարակած իր երկրորդ վէպը վերածուեցաւ շարժանկարի: Այնուհետեւ, միջին հաշուով, Պէրնար Քլավէլ հրատարակեց տարին մէկ վէպ: Մեծ յաջողութիւն գտաւ իր «Սպանացին» անուն գործը, որմէ ժան Փրա հեռատեսիլի համար կազմեց ուշադրաւ յայտագիր մը:

«Երկար համբերութիւնը» ընդհանուր խորագրին տակ՝ Պէրնար Քլավէլ 1962-ին սկսաւ գրել վէպերու շարք մը, որուն շարքորդ ու վերջին հատորն է «Կոնքուր» մրցանակով պատկուած «Ջրմբան պտուղները» («Les Fruits de l'Hiver»):



Bernard Clavel, lauréat du Prix Goncourt pour son roman « Les Fruits de l'Hiver ».

PRIX RENAUDOT

YAMBO OUOLOGUEM

LE DEVOIR DE VIOLENCE



"D'un exceptionnel intérêt littéraire... Violent, sensuel, dramatique, lourd des odeurs de la terre et de la chair de l'Afrique"
**Robert Kanters
LE FIGARO LITTÉRAIRE**

"... Livre extraordinaire... Une histoire condensée, légendaire, poétique et finalement réaliste de l'Afrique noire, vue par un Africain"
**Jean Freustié
NOUVEL OBBERVATEUR**

"Un livre éblouissant de sang, de violence, de haine, d'amour, de magie"
**Jean Bédiges
PARIS-MATCH**

"Voici peut-être le premier roman africain digne de ce nom"
**Mathieu Baley
LE MONDE**

SEUIL

«ԲԸՆՕՏՕ» ՄՐՑԱՆԱԿ

«Բընուոս» մրցանակը, որ 1928-ին հիմնուած է խումբ մը Թղթակից-հրատարակադիրներու կողմէ, այս տարի, 3-ի դէմ 7 ձայնով՝ շնորհուեցաւ ամբիկեցի Եամպօ Ուօլօկէմի, իր «Բրտութեան ուժգնութիւնը» («Le Devoir de Violence») անուն գործին համար:

Եամպօ Ուօլօկէմ ծնած է 22 Օգոստոս 1910-ին, Մալիի Պանսիակարտ գիւղաքաղաքին մէջ:

Երկրորդական ուսումը ստացած է Պամաբոյի Ղիսէին մէջ ու վկայուած անլէրէն լեզուի բարձրագոյն վկայականով ապա յաճախած է Փարիզի Հանրի Ե-րդի անուան ինստիտուտը եւ ընդունուած է միայն բացառիկներուն առջեւ դուռ բացող լուսոյ քաղաքի բարձրագոյն հաստատութիւնը՝ Ecole Normal Supérieure: Վկայուած գրականութեան եւ փիլիսոփայութեան գոյգ ճիւղերուն մէջ՝ Եամպօ Ուօլօկէմ 1964-66 թուականներուն իբրեւ դասախօս կը պաշտօնավարէ Շարանթոնի համալսարանին մէջ: Ներկայիս կ'աշխատի երեք ճակատներու վրայ - կը դրէ վէպ, ընկերաբանութեան տոմքարայի թէզ մը կը պատրաստէ եւ կը կազմէ դասադրքեր՝ ամբիկեցի դըպրոցականներու օգտին:

«Բրտութեան ուժգնութիւնը» իր առաջին վէպն է, որ նիւթ ունի իր ցեղակիցներուն պարագան, դարերու ընթացքին անոնց ապրած փորձութիւնները, սեփական տէրերուն եւ դազութարարներու մեքենայութիւններուն, հարստահարութիւններուն ու բրտութեանց հետեւանքով Արիւնտ ու եղերական տեսարաններու ընդմէջէն, երիտասարդ հեղինակը կը ջանայ մարմին տալ նստի իր ժողովուրդին բաղձանքներուն:

Պատմութիւնը, առասպելական պատումները, երեւակայական թոխչներն ու նոր իրազարժութիւնները միաձուլուած են Եամպօ Ուօլօկէմի վէպին մէջ եւ օգտագործուած են գրական տաղանդով:

ՎԵՆՔԵՐԱԼԻԷ՝ ՄՐՑԱՆԱԿ

1930-ին Հիմնուած է այս մրցանա-
կը եւ հանրային կարծիքին մէջ կը դրա-
ւէ յորրորդ տեղը: Կը տրուի ամէն տա-
րի Դեկտեմբերին, նախընտրաբար թղթ-
թակից զրոյի մը:


1968-ին, «Էնթարալիէ»ն արուեստա-
ֆրիսթին Րիփոյրի, իր «Վաղ առաւո-
տուն» («Le Petit Matin») վէպին հա-
մար:

Ազնուական ընտանիքէ մը սերող՝
Քրիսթին Րիփոյր ծնած է 1921-ին: Ու-
սումը ստացած է Գորտոյի Սաֆրէ Քեօր
վանքին մէջ: Իբրեւ պարի ու թատրոնի
մասնագէտ՝ նախապէս աշխատակցած է
«Լը Մոնտ»ի եւ այլ թերթերու, իսկ ներ-
կայիս կը վարէ «Մարի-Քլեր» ամսա-
թերթին զրական բաժնի խմբագրութիւ-
նը:

Քրիսթին Րիփոյր ցարգ հրատարա-
կած է հինգ վէպեր: Այժմ կ'աշխատի
«Անձկութեան ծաղիկը» անուն նոր վէպի
մը վրայ եւ աւարտելու վրայ է մանուկ-
ներուն համար պատրաստուած փիլիսո-
փայական խորթով հեջիաթներու շարք
մը, զոր խորագրած է «Անիքում իշխանը»:

«Վաղ առաւտուն» վէպին գործո-
ղութիւնը տեղի կ'ունենայ Գորտոյի մօտ,
ձիարուծարանի մը մէջ, ուր, հերոսու-
հին՝ Նինա, կը պատմէ զերմանական
դրաման ծանր ու հեղձուցիչ օրերուն իր
ապրած կեանքը: Նինա խենթի պէս կը
սիրէ իր զարմիկը եւ անոր չկարենալ
տիրելու տառապանքը ապրելէ ետք, ինք-
զինք կը յանձնէ զերման պաշտօնայի
մը, որուն դաժան դէմքն ու ազգայնա-
կան շեշտուած գիծերը հեղձեանէ կը
մեղմանան իրեն համար եւ կը յաջողին
խաղաղեցնել իր հոգին շարժելից պա-
րակր:

Ճրանագի քննադատներու կարծի-
քով՝ այս բառականին բարդ թեման,
Քրիսթին Րիփոյրի գրչին տակ վերած-
ուած է խոր գոյայնութեամբ եւ ամօթ-
խածութեամբ թաթառուն գրական ճիշ-
մարիտ գործի մը:





ՊԵՐՆԱՐ ՓԻՎՕ

ԲԱՑ ՆԱՄԱԿ՝

ՊՐՆ. ԼՈՒԻ ԱՐԱԿՈՒՆԻՆ

(կա՛րճ)

Յեր չկրցաւ կոնքուրի միւս անգամներուն պարտադրել հոգեկաւար մրցանակին համար իր հոգեմտաւորած Յրանաւա Նուրիսի թեկնածու-թիւնը, համայնազար բանաստեղծ Լուի Արակոն ջուզական ձեւով մը ձգեց-հեռացաւ համանուն սկազեմիան եւ անմիջապէս ներկայացուց իր հրատարականը: Մրցանակներու բաշխման ատեն՝ այս տարուան մեծագոյն դաշմանկէզութիւնը համարուեցաւ այս պարագան եւ առատ նիւթ հայ-թայիկեց ժամուէին:

Նմոյշի համար կու տանք թէլ մը շատ խիստ գրուած նամակը «Ճեկարօթի սրեւակապիր Պերնար Փիվուէ», որ «Ն ոջի խնայող գրողի մը համբուը կը վայելէ:

ՍԻՐՆԼԻ ՎԱՐՊԵՏ,

Գիտե՛ք որ Ակադեմի կոնֆուրին անը-կայացուցած ձեր հրատարականը կար-դալով հազիւ զուպեցի արցունքս: Ու ա-տիկա այն պատճառով, որ ձեզ Տրուանի սեղանին վրայ իբր ճարակ երեսակայեցի, բզկտուած՝ մարդակեր Հէրվէ Պագէի, յօշոտիչ Անտրէ Պիլիի, ծեր ցեղապետ Ռօյան Տօրժըլէսի եւ ժան ժոնոնյի կող-մէ, որ ախորժարեր համեմներ այ անը-ցուցած էր մարմնիդ վրայ, եւայլն: Այդ միջոցին, Ֆիլիպ Հէրիա, որ *Բէժի* մէջ էր, շնականօրէն ու բարձրաձայն իր վեր-ջին վէպին ընթերցումը կը կատարէր: Ի՞նչ մղձաւանջ: Փոռֆ Տիրոջ: Մնորիս խուսափելու ձեր հոշակաւոր կերպին ու ման պատմական ձեր նկատուքեան, յաջողեցա՛ք նողապրիլ հրէշներու այս խնձոյճէն եւ ձեր տունէն փախարար հան-րային դատաստանին յանձնեցիք մարդա-կերներու այդ խմբակը: Կոց՝ մարդա-կերութիւն: Յամենայնդէպս, ես անձնու-պէս մտահոգուեցայ ձեզմով:

Յետոյ, սակայն, կուռ ու կուշտ խնդացի: Որովհետեւ զնաեանեցի ձեր սեւ կատակը, որ մարդակերութեան մա-սին խօսելու առիթ տուաւ մեզի միջակ նաշարանի մը մէջ, երբ, Մարիի հրա-պարակին վրայ կը բազադրէին Պ. Եամ-պօ Ուօլիկէմը: Շնորհակալութիւն փո-թորիկին մէջ յայտնուած այս նրբու-թեան համար:

Բայց լրջանա՛մ: Ձեր հսկառակորդ-ները ձեզ ամբաստանեցին նեմգամտու-թեամբ: Իսկ դուք զանոնք կ'ամբաստա-նէք իբրեւ չարամիտ: Գնա՛ր եւ ատոր մէ-ջէն ելիք երմա: Իրողութիւնը այն է, որ անոնց հետ նոյն սեղանին շուրջ հազի-տարի մը նստած՝ զգացուեցաւ արդէն, թէ յարաբերութիւնները լաւ ընթացի մը մէջ չէին: Միաձայնութեամբ ընտրու-ած՝ դուք կը կարծէիք, որ իբնց «միա-ձայն» սկանչներուն պիտի խօսէիք ձեր ուզածին պէս, պիտի ֆուտարկէիք իբնց «միաձայն» ձեռքերով, եւ դեռ, հաւա-նարար, անոնք պիտի խմէին ձեր գաւա-թին մէջէն եւ քոյր առիթներուն սկա-

դեմի «Արակոմբուր»ը ձեր արեւմտահայերէն շափերը պիտի որդեգրէր: Բայց ասանկ վայրենիներ են, որ բարեկիրք վարմունքներու տեղեկ չեն, ապերախօսներ՝ որոնք շուտով մտքան ինչ որ ձեզի կը պարտէին, երբ դուք իրենց պատիւ ըրիք իրենց ըմտքեալը ըլլալու: Այս մարդերը, սիրելի վարպետ, արժանի չէին ձեր գերիշխանութեան: Արժանի չէին, որ դուք իրենց հետ բարձրաձայն խօսէիք: Ինչ կարելի է ըսել այն մտքոց, որոնք ոչինչ կը հասկնան տիպեքտիկայէն:

Բայց մտիկ ըրէք, ինչպէս պիտի ըներ էլզան: Ձեզ ներկայացուցած չէի՞ն իբրեւ անխոցելի բարեկարգիչը Ակադեմի Կոմիտէին, ժիւլ եւ Էտանի կողմէ վերջ մաքրագոյնու պաշտօնով առաջնած Ֆուֆիէ թեմովիլը, կայտօն երապարակի Կահըն Պէնտին: Եւ դուք այդքան երիտասարդ, այդքան գեղեցիկ եւ այդքան հաւժու, ահաւասիկ որ խոյս կու տաք այսպէս արագ, առաջին իսկ փոփոխութենէն: «Նախապայտ»-ին հեղինակը կը բարձրացնէ իր կրկնակ ձայնը եւ դուք ահաբեկ՝ կ'ընկրկիք... Եւ վերջապէս դուք կը վարուիք այնպէս, ինչպէս վարուեցաւ ձեր Մաք Օրլանը - կը մնաք ձեր տունը: Ա՛հ, ինչ լաւ կացութեան մէջ են հիմա այդ բոլոր լրագրողները, որոնք ձեզ կարմիր արեան գոյնեղով ներկայացուցած էին, մինչդեռ իրականութիւնը այն է՝ որ դուք շքեղ թաղերու վիպագիր մըն էք պարզապէս եւ կը խուսափիք խնդիրներ յարուցանել:

Միւս կողմէ, խօսիմք ձեր հակառակորդներուն մասին: Օ՛հ, այն՝ խօսիմք, այդ վարպետորդի ծերակներուն մասին: Նրբին վայելչութեամբ զինուած տաղանդաւոր այս պարծուաները, ձեր առաջ էջած Ֆրանսուա Նուրիսէին ընդդիմա՛նալու համար՝ գացած գտած են վալլէսի ժառանգորդ պրոլետար Պերմար Քլէվէլը, որ փողկապ չի կրեր եւ որ իր երկ-

րորդ բնակավայրը հաստատած է «Բուստիսէ Տիմանչ»-ի մէջ: Տարբիւս, Պիլլի, Մաք Օրլան, Արնօ, ժիոնօ, հինգ փոքր մաքիսիկներ, որոնք, մինչ դուն դուրս կու գայիր կուսակցութենէն, կը ծափահարէին դրամատիրական Տան Տէրը, անասնման ուրախութիւն պատհանելով քու յառաջդիմական ընկերներէն մէկուն, նախկին հացագործ, որ իր գիրքերուն մէջ յանախ գանգատած է տան տէրերէն: Ի՞նչ ապերախ աշխարհ:

Եւ սակայն, ձեր պաշտօնակիցները, ծիծաղելի ծերունիներու պէս, կը ծածկեն յամառ չարամտութիւն մը, ըսենք տեսար բարեմտութիւն մը, որուն մէջ մարած է ձեր երեզլն ու գեղեցիկ լեզուն: Առանց անուրջ տալու, ձեր դրժքախտութեան պատասխանատու կը նկատէք Անտրէ Պիլլին, մինչդեռ կրնամ կատարեալ անկեղծութեամբ ըսել, թէ ան երբեք պատասխանատուութիւն չունի խնդիրն մէջ: Փաստը այն է՝ որ Կոմիտէի մրցանակաբաշխութեան առաւօտուն, այս թերթին մէջ կը գրէր - «Մենք լաւ ընկերներու խումբ մըն ենք, եւ, ապօրինակ կերպով, իրարու հետ չենք գրժաքէր...»: Այսքան ազնուութիւն պիտի չէ սխալ մեկնութեան առաջնորդը ձեզ:

Եթէ, անշուշտ, - որքան խորամանկ են հին դպրոցի այս ակադեմականները - չարագուշակ մարգարէ մը ձեր դառնութիւնը զիտակարար չէ խորացուցած: Ձեմէ գիտեր...

Բայց, սիրելի վարպետ, մէկ բան գիտեմ, որ դուք, այս ձայնագրութենէն ետք, փոխվրէժ մը պարտական էք մեզի: Ատիկա կրնաք ընել, ինչպէս չէ, գրական մրցանակով մը, գոր, անշուշտ, պիտի շահիք միաձայնութեամբ: Ես ունիմ բարեկամներ Քաղաքապետութեան մէջ եւ կրնամ երեսակայել ձեզ, Փարիզ քաղաքի մեծ մրցանակը ստանալու պահուն:

Ձերդ
ՊԵՐՄԱՐ ՔԼԵՎՈ



Ա Պ Ք Ե Ր
(ԱՐՐԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆ)
(ԵՐԵՎԱՆ 1968)

Անյատկանա այս երեխան
Բանաստեղծ է՝ միշտ այժմ բաց,
Ուր հիացման է առէջ կացած,
Լիցանելու տեղի փոխան:

Ա. Ա.

«Ալեքս» հատորի անվերջադիր մեկ բանաստեղծությունն առնուած է վերի քառ-
եանը, որ լքել կը բնութագրէ Ալեքեանի անձը, կեցուածքը, բանաստեղծի իր էությունը:
Այսպէս եղած են հաւանաբար բոլոր կոչեցեալները, խոնարհօրէն հիացած են տխարճի
գեղեցկութիւններուն զիմաց, հիացնելու աննշք ձգելով յաւակնոտ արհեստաւորներուն:

Վերջին աստեղծեանին, բանաստեղծութեան անունով հրատարակ հանուած այն
սակաւորի հատորներէն է «Ալեքս»-ը, որ զբաղանաւթեամբ շահազրկու ժարգոյ խանդա-
վառ պատահութիւն մը կ'ընծայէ՝ ճշմարիտ բանաստեղծի մը ներկայութիւնը զգալու: Լոյ-
սով, հրատարակով, խորհուրդով չի հաշտեր, որոնք անմիջական կապ մը կը հաստատեն
ընթացողին հետ եւ ուրախութեան եւ տիրութեան անբացատրելի շնորհով մը կախար-
չօրէն կը յիացնեն ստոր հողին:

«Ալեքս»-ուն մէջ անհնուած, ունկնդրուած ու անձնաւորուած են խոսքը, միջոցը,
Քույրը եւ այլոց ընծայուած է անոնց քնարերգական յատկութիւնը՝ բոյբը, հրատարակը,
առաւել՝ ճի ողբակոծ, աստեղծութիւնը լաւութիւնը, ճշնագրի մէջ մեղմիկ մեղմիկ, եւ
ասկաւին ճատոյցի սալեր ու ստառած խաւարք, եւ քրտնաստեղծ հողի ճիւղ: Այս գունա-
կան շարժումները, վերափոխմանց գայլաւորութիւնը կազմած Ալեքեան իր շերտաւորները,
ուշադրութեան ընծայելով իւրաքանչիւրին բեղմնաւոր կողմը:

Այն միակ պահն է երեւոյթ, երբ հառաչով անկապին
կազմալուծուած աշխարհի յիշում տեղում են իրար:

Պատկեր, շարժում, յուշ, գոյութեան տեղ, բազմանք ու աստղաւորի վայել-
չութիւն:

Ինչքան կանչեր քափառիկ, շրջափառ տննչ ու հառաչ,
Ի գիւն բեզում գիպումսի ի՞նչ վասնումներ տպարդիւմ...
Ես իմ այժմբը աստա հեղեղումիս այս յառած,
Իմ օրերին՝ արգաւանդ նոյն հասնումներն եմ մարթում:

Տեսնելով, հասնելով աշխարհին մէջ մեզմէ շեղատուած հազար բան եկատած է
Ալեքեան, Եւրոբ, վառվառն, Քրթուռն բազում գեղեցկութիւններ: Մինչև անգամ շատ
երգուած, վերակատուցուած, փառաբանուած, օրօրուած Մեծազանչը, Զուարթնոցը, Կո-
միտանն ու նորափթիթ մանուկը իւրախատուկ ներբրանգներով ու թարմութեամբ անդեր-
ձըւած են անոր աչքերուն մէջ: Իւրախատուկ խորքով ու յուզումով սերուած է նոյնպէս
Մատուցիկին, Մշտիկին, Վանցիկին, Ակնցիկին բնական կամ երգած երկերը:

Եւ մի երկիր, որ երբեք յուշանալ չի կամենում,
Պարզուելով այժմից, հոսում է ողջ սի՛րում ի վար:

Արբանձակ Ալեքեանի հողին կ'ապրի նաեւ ուրիշ կորուստի մը վէրքը, այն՝ որ

յարդարատ լայնի մը ծնունդ տալով, մեր դաշտերուն մէջ նազիկ ու միջոց յարգեցնելով
կը հասնի իւրաքանչիւր հայու, թայց եւ այնպէս կը մնայ ծորէն տաղող վերջ:

Ի՞նչ փոյթ լայն սեւեռածին, չէ Գեղամայ
Լիկ մառն յար յաւանդում է մտնանում,
Ի՞նչ փոյթ, որ կայ այգում սրգի շինդ քմառ,
Օրք իշխանն է երախտաց մեռնում անգուր:

Բնութեան շքանդ հրաշալիքները, ինչպէս նաեւ ժարաց հողեկան կառուցը իր
Քաւալքին մէջ խորտակող ժամանակի մը մէջ կ'ապրինք, աւանդաբար ու ժառանգաբար
մեզի հասած գեղեցկութիւնները դիմադրող դա՛ր է մեր դարը, գիտութեան դար, նուիր-
բազորուած արժէքներն ու բարոյական հասկացողութիւնները ճեղքն ուլանք մղող իռա-
կան արշաւ ու բանաստեղծը դառնորէն ստուգած է, որ

Գիրքային են արշէն հիմա
Սերն ու քոյս սիրոյ երգերն, ինչպէս Մտօմն:
Կատարում է մի սոսկալի չիրսիմա
Հոգիներում, ուր սէրն հիւանդ է սքաւափով:

Պայուսանդներն կայ մարդը, գիտութեան նուաճումներուն ու անտեսական հետա-
նկարներուն յարգանք ընծայելէ առաջ ու ետք՝ ներքին կեանքով ապրող բնապաշտ, խոր-
հրդապաշտ, տնտեսական գեղեցկութիւններու վրայ տնտեսականորէն դողացող մար-
դը, կա՛մ՝ մարդերուն ամենէն ընտիրը, բանաստեղծը, որ կը հպնի պահել հասարակը-
նութիւնը, կը հնչու, կը մանչէ, երբ հողիներուն մէջ կատարուի ճի՛ սոսկալի չիրսիմա,
ու կը Քափէ իր յուսումը ի տես մեր նուազով լինին:

Թո՛ղ, այս հիմ, հի՛նք քերթուածով
Աղօթիւմ ես մէզ ու մութի մէջ անփարտո,
Որ շտանն խնդապատա՛ճօ քրածոյ,
Որ շտանն, չէ ինչպէ՛ս եմ զոգում վրայ:

Իբրեւ շուշ, ոգի ու հողի փոթորում՝ առանձին հմայք մը կը ներկայացնէ
ՍՅՐՐ որ ծովը փոթորկէ ընդհանուր խորագրին սակ Սեւանի հետ կատարուած պոյց-
նեցուն շարքը: Վերջին քառասուն էջերուն վրայ կը ծաւալի փոթորկայից, խորհրդա-
թաղ, զՍեւանադրոշմ, զՍեւանօրէմ սիրայի՞ն այս քաթինը եւ էջերն իւրաքան-
չիւրը կը ծաւալէ խոփիչ ուժ մը: Մեզի ծանօթ սեւանաները բանաստեղծութիւն-
ներուն վրայ բացառիկ յաւելում մը կատարուած է այրանդ: Սեւանի հետ կապուած ամէն
պոյց, պատմական, զիտական, բանաստեղծական ամէն աւելումներն ոգեկոչուած ու միա-
ժողովուած են բանաստեղծին գրչին սակ: Մարդ զիւրութեամբ ու հաճութեամբ կը լսէ
այնքաներուն բազմանիչ ձայնը, կը տարուի անոր պեղուած յատակին հարստութեամբ, ափ
կ'հնչէ, կը նայի կողմին ու բանաստեղծին հետ համամայնաբար ու զանաօրէն կ'աղաղակէ՝
Փա զանգն անգանգ մի անգամպ է հիմա:

Հարկ չկայ բառերուն պարփակած իմաստը մանրամասնելու: Այնքան հաւաքա-
կան յուզումներ խոսեցնելու զաղտնիքը ունի: Իր բանաստեղծութիւններուն ամէնէն ակնը-
բախ արժանիքներն մէկը խոսութիւն է արդէն: Տողերն ամէն մէկը, անկախ վերի
կամ վարի տողերուն հետ ունեցած յարաբերութենէն, իբրեւ լեզու, պատկեր, խոհ, յոյզ,
մթնոլորտ շինող տարր, բանաստեղծութիւն, ինքնարժէք միաւոր է: Ներկայացող կտորին
նկարագրերը պատմութիւն ըլլալ իրադարձիկ թէ սուղամով՝ Այնքանի վերաբերումը կը
մնայ նոյնը, ան կը լանայ յառաջ քան զամենայն կլուսեցնել իր առը եւ կը վարձատրուի
իր յաղտնիքինը, որովհետեւ յոգնեցուցիչ ըլլալու անպատահութիւնը յաղթանարած կը
ներկայանայ ընթերցողին:

Ուրիշ վանք մը եւս ունի Այնքան, որ կայ զարմեայ պատկերաւոր ժամողութիւն
կոչուած ուժը հաստատող Քանկարժէք եմոյլ մը:

Հին վանքի զանգն է հնչում հողմերից,
Հնգարձակելով միջոցը իր շուրթը:

Հին վանքին յուշարձանային թախծոր չէ, որ գրաւուրին կը հաղորդէ պատկերին, ուշադրաւ զանգին գործողութիւնն է, ճայնեղէն ուժով միջոցը գրաւելու անոր թարմութիւնը: Այս թարմութիւնը յանախազէս է այս բանաստեղծի մաս: Թարմ է նորինակ այն պարագային, երբ ծանօթ գեներներու ուռք կը զնէ: Օրինակ, տողերը այրբնական կարգով սկսելու եւ իրարու վրայ զուժարկով բանաստեղծութիւն յորինելու ձեւը կամ նմանաձայն բառերով տող կազմելու սեղ վաղուց ծանօթ է մեզի, բայց մարդ չի տաղակոնար, երբ Ալիքեանի էջերուն մէջ կը տեսնէ՝

Տուֆերի շշուկ շամնազալի մէջ
Թափուզ քերթերի քաղիչ անգագրում,
եւ կամ երբ զգայ, թէ
Կակաչների միաբերան կանչն է կարմիր:

Բոլոր իբրև բանաստեղծներուն պէս՝ Ալիքեան առանձին արժէք մը կ'ընծայէ արւեստի ասրբերուն: Իր տեսողական ու լսողական զգայնութիւններուն միջոցով ստեղծած գեղեցկութիւններու առջև՝ ան յաճախ կը ստիպէ որ հիացումն ու հարցումը հետեւին իրարու: Եւ արդարեւ, մէկու մը զրչին տակ արանձուր զերկնոսք էզամ է արդեօք, ուրիշ բանաստեղծ մը հովի գրոյցներ զվերծանած է քնաւ, լուսած ույրերը զկայտոսք պատկերներ զծած են այլոց հողքին:

Մեր հին ու արեւմտահայ մշակոյթին հիւթը երբծած բանաստեղծ է Ալիքեան եւ այդ անկաճանքը բարիքի մը վերածուած է իր մաս: Ուրիշ արժանիք մը այն՝ որ պատուաստուած է իր լեզուն զբարբաբան տայթներով ու արեւմտահայերէնի բառազանձով: Իր էջերը ընդունած են քաղապատանքն իր հողոսք, հոն զմտա ստուերները զողոմ են յուշիկս: Կը խրտի զհամանաւախ ներկասք, կը բացուի զայլքնուանգ ուղիւն, կը հայի զլուրիւնը, վիթի մեղուշ աշքերովք: զեւ կարելի է հոն զանել զաւանակ մայրաժուած, լիւտասակ՝ զհեղեղի մէջ խաւարայինք, զամանկ աշջիկներք, զբլակամք բոյր եւ հրկապակներ, զՈր ամենայն ի շարէ պաշտպանելու էին մեզք:

Փնտրուած ու բան շրտող եւ ինկ'յն մոռցուող բաներ շին սակայն Ալիքեանի քաները, բառարաններէն կամ ուրիշներու մասեաններէն շին զար, կը բխին իր խաճուածքէն եւ նովին բանիւ հարուստ են սարսուռով, շարժումով, տենդով: Անգամ մեծ բանաստեղծներուն սեփականութիւնը կարծուած թռակրք՝ շրջասփիւռ (Մեծարեկ), կարչնեղ (Վարսեմ), մահահանգոյն (Նարեկացի) եւ մասնաւոր լիւտ ստացած միւտերը՝ վարձակը, սօջականը, բարաւորեղը, տարփագիմն ու անգարագիծը Ալիքեանի զերթուածներուն մէջ ազատագրուած են մեծերուն նշումէն եւ ստացած սեփական կնիք մը:

Ու միայն բառերու պարագային չէ որ ինքզինք ըլլալու նախանձանդուութիւն ցոյց տուած է Ալիքեան: Իր բոլոր կտորները հաւասար ուժով շին ներկայանար հարկաւ: Օրինակ, «Տաղաւար սիրոյ» զլուրին քան զերթուածներէն հազիւ հինգը կը լիւրժայնեն ընթերցողին սիրտը, «Հովն է նորեմ», «Բարսեւեմութեմ», «Ու վիճակուց մեզք», «Եթէ գայ իմա», «Ան. ո՛ր, ո՛ր յճուցք» բառերով սկողները միայն: Այսուհանգերմ, իր սկարտութիւններով եւ ուտերով՝ Բնքը Ի՛նք է, իր սեփական աշխարհով ու ճայնով, լոյսով: Իր տաղերգան զՓասուտաներուն պէս է, ու փոսուածներուն համար՝

Ի՞նչ փոյք լմափն լոյս է ու լուսին՝
Նրանց կանթեզն է վառոււմ իմֆնամփոփ...
Ո՞վ ասաց խճարի փոսուամերին,
Թէ լոկ սեփական լապտեր ու լամպով
Ջանուած ուղիւն է անթար, ապանք՝վ:

Պ. Մ.

ԱՐՄԱՏ ԵՒ ԷՌԻԹԻԻՆ

(ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱՎՈՍԵԱՆ)



Արմատ եւ Էտրիւնը Ալիսիա Կիրակոսեանի բանաստեղծական Հատորի առումն է: Գրքի տեղնը եւ ժանտեսնը խորքը այնքան ծանօթ չեն հայ Հասարակութեան, որքան Ալիսիայի տեղնը, որ այս վերջին գրքի մը տարիներուն, որ ծանաղորդեցաւ հայ մամուլէ կ'ընդուն ժէջ' Համակրանքով ու զնահատութեամբ:

ՔՒԱՂԻՑ 1966 Հոկտեմբերին Քարգժանարար Հրատարակիչ Ալիսիայի մէկ բանաստեղծութիւնը, Բնիստն Աստուած խորագրով, եւ այդ տաճիկ տուաւ կարծիքները Հարաւային Ամերիկայի սուր մամուլին ու փնտրատներուն, որոնք մեծ զնահատութեամբ կը խոսէին երբ-սուտարգ հայ բանաստեղծուհիի մասին:

Այս առաջին գրական արձագանգն եւք, 1967-ի վերջերուն, Հոլլանտան Հրատարակչութիւնը լոյս կ'ընծայէր Ալիսիա Կիրակոսեանի Արմատ եւ Էտրիւն գրքը, հայացուած բանաստեղծ Վահագն Գալթեանի եւ իր աշխատակիցներուն կողմէ:

Ուրբաութեամբ կը Հաստատենք այն ներթափանցող զնահատութիւնները, որոնք արձագանգուած են Վահագն Գալթեանի յառաջարանին մէջ, եւ կը յուսանք որ այդ իրատու մը կը կատարուի յառաջիկային:

Յառաջագրանք գրքի մը առջ-

Քրանաստեղծուհու մեծագոյն ցանկաւորումն էր իր գործերը քարգումուած տեղնի հայեթն, որպէսզի, ինչպէս իմէն է գրուած:— Իմ տրեմայից հասակակիցներս զիս կարդան, զգացումներսս հետ քայլին, զիս հասկանան, քափանցեն հոգեկան խորութիւններուս, սրտն իմնի կտակուած են արիւմի այն ճամբայով, արկէ ծնագոյն տնցած են եւ նեղուար այս հիւրընկալ արհարան վրայ իմնի ծնունդ տուած:

Յառաջագրանք կ'աւելցնէ-

Քնու ահա կատարուած են Ալիսիայի ցանկաւորումը, հայ ընթերցողներն յաճանկով Քրանաստեղծութիւններն մի փոքր փնտր քարգումանութիւնը... կարծում ենք, սակայն, որ ժամանակի ընթացում Ալիսիա Կիրակոսեանի պոեզիան իր ամբողջ հարստութեամբ կը ներկայացուի հայ ընթերցողին:

Եւ ինչպէս, Ալիսիայի բանաստեղծութիւնները Հարաւային եւ Եսթոնիայում, կիրարուած են նոր շարժումով, ըստ սեփական կը թիւան են Հաստատուած Հաստատ, էլէ էլ: Եթէ արուեստն ու արտաքին ձեւը գրանցանքի շքեղանք են, Ալիսիայի բանաստեղծութեանց սպասանկայ Հաստատութիւնը խորքի, խորունկ առ-

Հայաստան հրատարակեց Ալիսիայի գիրքը: Ալիսիան այցելեց Հայաստան եւ վերադարձաւ իր ակումբներին:

Ալիսիայի բանաստեղծութիւնները խորունկ աղբուսներէ բխած շատրուաններ են, ժամանակ եւ փիլիսոփայութեան շարժումները, կարճ ստղծերու մէջ:

Գնում եմ եւ իմ հոգու հետ,
Որք երբեք չի երևում...

Եւ սակայն թափանցող գրական քննադատները այդ թաքնուած հոգին ահա եւ մեծապէս զննաստեղծութեան հիմնական ստեղծագործութիւնները:

Իմապատկերական խորունկ պահեր ունի բանաստեղծուհին, որոնք կը շարժագուշակ եւ կ'իմաստաւորեն բանաստեղծական այս փունջին շատ մը հատուկները:

Եւ ի՞նչու ես դուք բացատրելու եզրու
Գնդեցկաւորիւնը տարօրինակի...

.

Դասագրութիւնը
Ձի կարգը ծնել
Ոչ արեւ,
Ոչ սէր.
Ու այ կրկնայ:
Եւ դու մի փորձեր բացատրել ի գուր
Ինձեքուրիւնն տեսող
Ու հաւատամքը:
Միթէ երբեք բացատրուել իմ
Արեւը,
Սէրը.
Եւ կամ երեխան:
Ուրե՞մ եւ, արդեօք, կեանքում ունեցում
Աւելի վերին
Ամբաստանի
Մի գնդեցկաւորիւն,
Ուրե՞մ երբեք
Մի՛ ջամա պեղել
Անհամարանի,
Մի՛ ջամա սեղմել
Քա ձեռքին մէջ
Յշտարտութիւնը...

«Արմատ»-ին երբ կ'անցնէր շուրջերեսը,
Մենք կ'աղբերէր որոշ ըմբռումը Ալիսիայի, որ
սակայն կ'անցնէր սովորական հորթոսներէն ան-
զին, եւ ժողովային ու համամարդկային ազ-
բուսներու խորհրդածութեան կը մղէ մեզ:

Շատ երկար դատողութիւններ կարելի է
ընել այս հասուածին տեղիքով, բայց այս համա-
ստ ազնաբէր սահմանները նեղ են:

Հասուած մը այդ փունջին.

✽

Քա այնքի հետ
Եւ յանրժառօր
գրայց եմ արել,
Սակայն եզրի եմ
Ուրիշ մաշկի մէջ,
Ուրիշ երկրի մէջ,
Ուրիշ վայրում...

Բայց իմ գրայցը ինչ կես է եզրի,
Քա այնքի հետ:

Դու ես եւ, որ իր բացակայութեամբ
Դատարկ է քաղցում իմ էութիւնը:

Նա, ով արտունայ,
Որ ունայնութեամբ այս մթնայրտում
Մեծով չմնամ:

Դու նա եւ,
Ով ինձ ուրիշ մի դարում
Ասաց.

«Մոգսերը...
Սակայն այս դարում,
Ներքի,
չեմ կարող
Արդէն սպասել...»

Մենք կը սպասենք դեռ շատ ծաղկամանք
Ալիսիայի ստղանդէն, ու կը փոփոխենք որ հայ
ընթերցողները ծանոթանան այս միջազգային
արժէք ներկայացնող ստղանդին:

Գ. Ս.

ՀԱՅԿ ՂԱԶԱՐԵԱՆԻ

« ԱՐՄԻՄՏԱՀԱՅՅՈՒՄԻ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԱԳԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ 1800 - 1870 »

Այցեայ ասրեզերէն Երևանում լոյս ըն-
ծալուց մի ըստ ամենայնի ուշագրաւ պատմա-
գիտական աշխատութիւն, որին արժէ անզրո-
ղառնալ հրատարակային բեմերէց: Դա Հայկ
Ղազարեանի վարկամասայնի բացիալ-մոնումեն-
տաւն է: Բազմաթիւ կարգաւորումներով
կամ իւր ֆակտական կարգաւորումը 1800-1870 թթ-
ով վերնադրով բաւական աստուար զգրքն է, սկզ-
բունիկա Ալտա Յովհաննիսեանի ընդհանուր խըմ-
բարգրութեամբ: Այլևս Երևանի շին կարող
համարուել, եթէ ասելու լինենք, որ Խորհրդա-
յին Հայաստանում Արեւմտեան Հայաստանի վեր-
ջին զարեզի ամբողջական պատմութեան ուսում-
նասիրութեան բնագաւառում իրականում լուրջ
գոյնը սկսեցին տրուել վերջին 5-6 տարիներէ
կենթացում: Դրանից առաջ էլ, անշուշտ, այս
կամ այն շարքով ներկայացուել է երբեմնի Ե-
րևանուհայ՝ յատկապէս զբաղան-հասարակական
կեանքը: Նայելով մենագրութիւններն են Երևան-
ուհայ կամ այն ժամանակի պատմական իր-
դարձութեան, կեանքի բնագաւառի, եւայլն: Բայց
և այնպէս, սա հարմարեմք իրողութիւնն է,
արեւմտահայ պատմութիւնը իր ամբողջութեամբ
վերջացած զգրքն անտեսուել է՝ հասկանալի պատ-
ճանհարմով: Եւ անա Ղազարեանի աշխատութիւ-
նը իր տեսակի մէջ առաջինն է, որանց բազմա-
կողմանիորէն ներկայացում է արեւմտահայու-
թեան համարեալ մէկ զարեի ժամանակաշրջան
ընդհանրապէս պատմութիւնը:

Գրքի լոյս տեսնելն ինչին արդէն ցայտուն
երևույթ է: Բայց նորիցիսի ցայտուն երևույթ
է նաև նրա մասին հրատարակուած գրախոսա-
կաններէ լուրջ և առողջ ոգին: Եւ զա փոքր բան
չէ: Գիրք զրեւը հիմնականում անհատի զարմ է,
բայց գրուած զիրքը տակելը, տարածելը և մա-
նաւանդ գաղափարելը զերգանցապէս հանրային
իրողութիւնն է: Մեծ մասամբ գրախոսականնե-
րով է որ կարելի է որոշել առեւալ ժողովրդի
հանրային արամագրութիւնների մակարդակն ու
բարեխառնութիւնը: Այդ իմաստով էլ հետաքը-
րի են Ղազարեանի գրքի մասին հրատարակուած
անխտիւր բոլոր գրախոսականները: Այդ գրախո-
սականներում, որպէս կանոն, բացակայում են
երբեմնի կողմապարուած բանմաներն ու թուա-

թակարանութիւնները: Իւրաքանչիւր գրախո-
սագրին մասնում է ի՛ր տեսանկէնէնց, ասում
ի՛ր խոսքը: Բայց որ միւսին չի կրկնում: Այդ բազ-
մազանութեան մէջ, սակայն, նկատելի է մի
յատկանշական ընդհանրութիւն: Դա անզրո-
ղաւորէն բարեացակամ վերաբերմունքն է Ղա-
զարեանի գրքի նկատմամբ:

Մինչև հիմա մենք ասեմք ենք ունեցել կար-
գալու Ղազարեանի Մեյքեթիթեանի, Արամայիս
Մնացականեանի, Բակունց Անանիայեանի, զոյննա
Քարամանի գրախոսականները ևւ բոլորի մէջ
էլ նկատելու այդ նորայայտ ևւ արդիւնաւոր
համերաշխութիւնը: Աւելին: Հայաստանի կու-
սակական զեկալարութեան անտական ամառը-
բը իր կողմից յայտարարեց, որ գրախոսական-
ներով լզէտը է սահմանափակուել, այլ ոչեւ է
Ղազարեանի շարժեալար ուսումնասիրութեանն
անդրադառնալ ասելի լայնորէն, իսկապէս բազ-
մակողմանիորէն: Այս հանրային հետաքը-
րիւնը հազիւ թէ պատահական լինի ևւ երբեւ
իւր արամագրական հանգրուանին չհասնի:

Ո՞վ է Հայկ Ղազարեանը: Գոտտովանում
ենք, որ շատ բան չգիտենք նրա անմի մասին:
Մինչև հիմա նա մեզ համար հարբարար լուր-
քային ևւ սակաւածածեթ հեղինակներից մէկն
էր՝ անցեալ զարի երկրորդ կէտի արեւմտահայ
գրական-հասարակական կեանքի վերաբերեալ իր
սովորական ուսումնասիրութիւններով: Իսկ այժմ
միանգամից մեր առջև կանգնում է իր ուրոյն
գիմարով: Նոր լոյս տեսած զիրքը, որը, իրա-
զեկ գրախոսներից մէկի ասելով, «ծրիտաւարդ
գիտնականի երկար տարիների տմայան աշխա-
տանքի արդիւնքն է», հայաստանեան հանրային
ու մշակութային նուաճում լինելուց առաջ,
բնականաբար, նաև ենց հեղինակի անձնական
նուաճումն է: Այդ աշխատութեան համար Այ-
րիլի սկզբին Ղազարեանին ընդհանրապէս զՊատմա-
կան գիտութիւնների դոկտորի» գրախոսան
ման, իսկ, ինչպէս յայտնի է, բարբը չէ որ
այդպիսի իսկապէս արդար վատասիկ համար են
կոչոււմ կամ աստեան ասանում:

Ղազարեանի աշխատութիւնը գրուած է սկզբ-
յայտորէն աշխոյժ, կենդանի, հիւթալի լեզուով:

թէև վերջին բաժիններում մի որոշ անհասկա-
նալի ու անբացատրելի անփութութիւն եւ ան-
նհրաշնակութիւն է նկատուած: Ամէն տեղ երե-
ւում է հեղինակի գրականագիտական թեքումը,
պատկերաւոր բանաստեղծների հակումը: Թէև
սկզբից մինչև վերջ, առգիծի միջոց, ժամանակ
առ ժամանակ պտտւում է հեղինակի խլրտուն
հայտնութիւնը, իսկ շատ ցաւալի կը լինէր՝ եթէ
դա բացակայէր, աշխատանքային գրքի շարա-
դրանքը աչքի է ընկնում իր առարկայական լըր-
ութեամբ, հաւասարակշռութեամբ, գիտական
նշքրտութեամբ եւ շրջահայացութեամբ: Մի
խոսքով՝ գիրքը օժտուած է խորհրդային պայ-
մաններում առայժմ հաղուսագիտ ճամբարական
արժանիքներով:

Պատգամների աշխատութեան ընդարձակ առա-
ջարկում կայ մի պարբերութիւն, որը կարող
է շողողուն բնութիւն տեղ Եւրոպայի ամբողջ
գրքի համար: Նա, անգրադառնալով «ժամանա-
կակից քարտ» պատմագրութեան կեղծ կոմիսի-
ցիային», գրում է.

«Այսօր, առանց մտ իրքիւ, երամայական
պահանջ է դարձել գիտական ու գաղափարական
հիմնաւոր պայքար մեկ հակահակարդներ զէմ,
ցոյց տալ մըսնց կատարած ազատագրմանը,
ապացուցել մեր նշմարտացիութիւնը: Իսկ այդ
բանն անկող համար ստեղծից առաջ անհրաժեշտ
է շարադրել Արեւմտեան Հայաստանի, ընդհան-
րապէս արեւմտահայերի սրտածախի պատմա-
թիւնը, որը մինչև այժմ չի կատարուել ո՛չ
արեւմտեամբում, ո՛չ էլ օսվելովան պատ-
մագրութեան կողմից»:

Գրքի գրախոսներից Անանիանը այդ առ-
թիւ շեշտումով հեղինակի շեղումը ունեւոր իրա-
ւացի լինելը, աւելացնում է. թէ, սակայն,
«մեր նշմարտացիութիւնը մեզ համար ապացու-
ցելը դեռևս է՛ն է, եւ առաջարկում է.

«Որպէսզի աշխատութիւնը, որը լիակաւ պա-
տանկան է ստիպ առաջադրուած խնդրին, լայն
ընծայուի ռուսերէն, որպէսզի աւելաց լեզուի
միջոցով մեր նշմարտացիութիւնը հասնի բովան-
դակ պրագմատի մարդկութեանը»:

Առաջարկոյս, Պատգամների աշխատութիւնը
այն գրքերից է, որոնք արժանի են ոչ միայն
ուսանողներ, այլև եւրոպական կարեւոր լեզու-
ների թարգմանուելու: Եւ այդ գրքերը առարկայ
հայտնութեան համար, կարծում ենք, որեւէ հա-
փան գծադրութիւն չի ներկայացնում (մենք

այս դէպքում նկատուում ենք թէ՛ Հայաստանի
եւ թէ՛ Սփիւռքի ուսուցիչ՝ միասնաբար): Բայց
միտմտեանակ չի կարելի անտեսել այն անհեր-
քելի պարագան, որ այդպիսի գրքերը միշտ էլ
անհրաժեշտ է նախ հայերէն տպել, որքան հնա-
բաւոր է շատ, որովհետև հայերի շարքերում
եւս տակաւին գիշ չեն այնպիսիները, որոնք,
այլևայլ անդամներով բերումով, թողապա-
կան այրուրեն սովորելու, հանրային գաստի-
րակութեան մեծ կարիք ունեն, թէ՛ Կորհրդա-
լին Միութեան մէջ եւ թէ՛ Սփիւռքում:

Պատգամների աշխատութեան վերնագիրը պա-
տահանութեան արդիւնք չէ: Նա ներկայացը-
նում է ո՛չ թէ պարզապէս Արեւմտեան Հայաս-
տանի, այլ առհասարակ արեւմտահայութեան
պատմութիւնը որոշակի ժամանակաշրջանի մէջ:
Աշխատութիւնն ընդգրկում է թէ՛ բուն իմաստով
Արեւմտեան Հայաստանը եւ թէ՛ Հայկական կի-
լիկան, Թուրքիայի հայաբնակ նահանգներն ու
ծովափնեայ գաղթափայերը, մասնաւորապէս
Փոլսի ու Ջմիւռիան: Գրքում արտացոլում է
արեւմտահայերի ընկերային, տնտեսական ու
գաղափարական կացութիւնը: Առաջարկը չհաշուած,
գիրքը բազմապէս է երկու Հիմնական բաժնից:
Առաջին բաժնից կրում է «Արեւմտեան Հայաս-
տանի եւ Հայկական կիլիկիայի եռցիւղ-մտնա-
սկան ու քաղաքական դրութիւնը 1800-1830
բնակամանրին» վերնագիրը, որտեղ ներկայացը-
ւում է նախախնայութեան շրջանը: Բաժնի ա-
սանձին զրոյթներ է հաստատուել մէջ զննա-
թեան եւ անուամ երկրի վարչական բաժանում-
ների, հարային յարաբերութիւնների, գաղափ-
րների, արդիւնադրութեան, առեւտրի հետ
կապուած հարցեր: Երկրորդ բաժնի վերնագիրն
է՝ «Արեւմտեան Հայաստանը եւ գաղութային
օբյեկտները 1830-1870-ական բնակամանրին»: Այդ
բաժնում ներկայացում են նոյնպէս ժամանակի
ուցիւղ-տնտեսական դրութիւնը, Փոլսի եւ Ջմիւռ-
իայի հայ գաղութները կենտր. Ազգային Ստե-
մանագրութիւնը, 50-60-ական թուականների ա-
զատագրական շարժումները, հասարակական-գա-
ղափարական հասանքները:

Բնական է, որ այդպիսի մի Եւրոպայի աշ-
խատութեան մէջ այնքան բազմաթիւ ու բազմա-
տեսակ հարցեր զննութեան առարկան լինեն, որ
նրանց թիթեւակի թուարկումն իսկ անկարելի
զարեայ: Իսկ Հիմնական դրոյթները կէտ առ-
կես զննութեան առեւտր մասին խոսք տրվում

չի կարող լինել: Մինք հեռ գիրքը կարգադրեալ առաւելագոյն քննական մտեցում ենք ցուցարեւորել, մէջ նամար զանազան նշումներ արել, վիճելիս ու անվիճելիս իրարից զուտել եւ առանց մանրադիտակ գործածելու էլ կարող ենք ցոյց տալ այնչափ ճեղքեր, վերնուճեղք, ասարկուսելի կէտեր: Բայց արանք բուլտրովին երկրորդական նկատառումներ են: Հիմնականը զբոյժ ընդհանուր արժէքն է: Եւ պատահական չէ, որ Հայաստանի գրախօսները եւս, միմեանցից բուլտրովին անկախ ձեւով, ինքնաբերաբար ու թերեւս նաեւ բնագրաբար, հետեւել են միեւնոյն սկզբունքին: Իրանք շնչաբ զբոյժ են բացատրելս զբոյժի առաւելութիւնները վրայ և անկասելիօրէն զմտադուրիտան առնելով կամ զանանկից Վարաւոր դիւնելի տեղերը: Դա բուլտրովին էլ կայր սերտ, խանդավառ շտեմարիտի արդիւնք չէ: այլ լաւ գործի առջեւ գիտակցութիւն զուտ խոնարհելու արդիւ վերաբերմանը, հայկազ կերտումը չիմընելու արող միտում: Թերեւս, հետագայում, հնց Ղազարեանի կամ ուրիշների գրչի տակից նոյնարեւոյթ ուրիշ աշխատութիւններ ելնեն եւ ասուերի տակ թողնեն այսօրուայ աշխարհի փայլուն աշխատութիւնը: Ինչ էլ որ լինի, կամ չլինի, Ղազարեանի աշխատանքի գիրքը արդէն իսկ խորհրդահայ պատմագրութեան անկիւնաքարերից մէկն է եւ այդպիսին էլ պիտի ճանաչուի ապագայում:

Ղազարեանի աշխատութիւնը առաջին հերթին ուղի է ընկնում զարմանալի փաստաբանութեամբ: Ձեւարմանիկն այստեղ ո՛չ թէ այն է, որ այդ փաստերը լոտ են, այլ մէկ աշխատութեան մէջ աղբյուրի ճարտարութեամբ միմեանց հետ հիւստելը: Հեղինակը հեռու է, սակայն, փաստերը մեքենայօրէն կողք-կողքի շարելու կամ միմեանց վրայ կուտակելու սովորութիւնից: Նա յանախ, զանազան հակասական առեւտներ լինելու զէպտում, խտորէն մաղում է դրանք եւ թողնում ակնյայտօրէն հաւաստի: Զկայ նաեւ փաստերով շրջանելու արեւէ միտում: Ուստի զբոյժ շարադրանքը ընդհանրապէս փաստութիւն է ներշնչում:

Այդ փաստաբանութիւնը, անուշա, բազմաթիւ ու բազմաանակ սկզբնաղբիւրներ առատօրէն օգտագործելու հետեւանք է: Եւ յիշուի, Ղազարեանը իր մտքի տակ ակնյայտօրէն սենցել է Եպագրի եւ անսխալ նիւթերի հարուստ շտեմարան: Ի դէպ, խորհրդային պայմաններում,

լաւ յանախ է պատահում, որ որեւէ հեղինակ, մանաւանդ գիտական աստիճան ասանալու հետամուտ հեղինակ, իր որեւէ գրքին արժէք տալու համար՝ յայտարարում է, թէ զօգտագործել է արիւնիայիս ճարայայտ միւրերը: Մինչդեռ իրականում ոչ արդէն յայտնի նիւթերը, ոչ էլ մանաւանդ ճորտայտները արեւէ հական արժէք չեն ներկայացնում գիտութեան համար: Իսկ Ղազարեանը խկապէս որ չլինանալու թեան մէջ է գրել անթիւտանհամար ասկալանաւոր կամ Երազայտ նիւթեր: Նա օգտագործել է եւ Եպագրի հրատարակութիւններ: Այս առթիւ չենք կարող ստել, թէ նա նեղմտութիւն է ցուցարեւել, բայց չենք էլ կարող վիսել, թէ բուլտր հարաւորութիւններից օգտուել է: 1800-1870 թուականների արեւմտահայ կեանքի մասին միայն Ղազարեանի գրքում յիշատակւած հեղինակները չէ որ գրել են: Բայց նա, ըստ երեւոյթին, նախապատուութիւնը տուել է այսպէս ասած պահպանողական հեղինակներին: Ինչո՞ւ: Զգիտներ: Թերեւս դա հեղինակային գաղտնիք է: Հնարաւոր է, որ Ղազարեանը ցանկացել է իւրովի հասկացնել տալ, թէ եթէ պահպանողական հեղինակները արամաղրած նիւթերը ցոյց են տալիս աղբային-ապտարակական շարժումների արամաբանական անխուսափելիութիւնը, հասարակութեան անխի ուսիւնը փաստարկում կարող են հանդիսանալ հնց յեղափոխականօրէն արամաղրուած հեղինակները տուեալները: Հնարաւոր է նաեւ, որ հեղինակը չի ցանկացել միանգամից պարզել գիտական փաստարկութեան զինանոցը եւ զմեծ պատանդերը ապագային է թողել: Հնարաւոր են նաեւ ուրիշ բացատրութիւններ: Բայց միակ հաւաստի լուսարանութիւնը հեղինակը ինքը կարող է տալ: Անկախ զրանից, փաստը մտում է փաստ, որ՝ Ղազարեանը իր գրքում չի նշել նիւթին վերաբերող անհայտ այսօրվ գրականութիւնը:

Ղազարեանի աշխատութեան առաջին բաժնում մասնաւոր հետաքրքրութիւն է ներկայացնում զհայկական կիսանկախ իշխանութիւնները հաստեանը: Սովորաբար, Արեւմտեան Հայաստանի եւ Հայկական հիլիկիայի նկատմամբ թրջական զարուստ տիրապետութիւնը պատկերացւում է որպէս համապարտ, վերջական ու ամբողջական: Մտաւում է թրջական ամենագրութեան մի զարմանալի պատրանք: Ղազարեանի գրքի արամաղրած հարուստ փաստերից դըժ-

ւար չէ եզրակացնել, որ Քուրդիան իրականում եղել է բազմաթիւ կենսորոշման ուժերի թաւաբերման, աճին տեսակ երկրաբանականներէ, սարածերէ մզտումներէ երկիր: Քուրդիան՝ նշանակում էր շարժ, կողորոշում, դիմաւ բռնեցք, բայց ոչ քաղաքական համապարօն ներկայութիւն: Հայութեան համար պատուաւոր է եղել ոչ միայն թրքական, այլև յաւելեալ քրտական վայրենի իշխանութիւնը: Այնուամենայնիւ, նոյնիսկ այդ պայմաններում, հայկական որոշ ընթացիկներում բնակչութիւնը կարողացել է պահել իր ներքին, ինքնավար զոյազինակը, աճեցել կենսական իշխանութիւններ (Սասան, Սաւաթ, Իսան, Մոկա, Ճապաղուր, Պուա, Տաւիկ, Մանազկերտ, Ջէյթուն, Եւայն): Այս պարագան առաւել հետազոտականութեամբ ուսումնասիրելը կարող է նորանոր նշմարութիւններ յայտնաբերել:


Այնտարութեան երկրորդ բաժինը եւս արեւմտահայութեան մեծ մասամբ փաստական պատմութիւնն է: Այստեղ, իւրաքանչիւր շնթերցող, անկախ իր անմտական ու քաղաքական համոզումներից, հետաքրքրութեամբ կարող է հետեւել հեղինակի ամբողջ շարադրանքին, անկեղծաւ աշխատել էական իրողութիւններէ, հարստացնել իր իմացական աշխարհը, խորհրդածելու նիւթ մեքեքելու եւայն: Հեղինակը մեզ ցոյց է առնում մի ամբողջ հայաշխարհ՝ իր բոլոր անկեղծներով, մի ամբողջ ժողովուրդ՝ իր աստապագին կենցաղ ու համապարկում: Նա բերում է վկայութիւններ վկայութիւնների յետեւից, խոսեցընել առկա փաստաթղթերի ծալքերում քարացած վկաներին եւ հազիւ թէ որեւէ բարեխիղճ շնթերցող զրա համար շնորհակալ չլինէ հեղինակից, քանի որ նա այնքան շերտ սերտ ստեղծել է պատմական իրականութիւնը առարկայորէն ներկայացնող իր աշխատութիւնը՝ առ ի սեղեկութիւն եւ զործածութիւն գանազան համարումներ սենեցող բոլոր հայ եւ օտար մարդկանց: Որպէս հիմք, որպէս ելակէտ, որպէս ուղեցոյց:

Ղազարեանը, գրքի վերջին դիմում, կանգ է առնում 1850-80-ական թուականների արեւմտահայ հասարակական-քաղաքական հոսանքների տարբերակման եւ բնութագրման հարցի վրայ: Մա արդէն մի այնպիսի նիւթ է, որի մասին, ի հարկէ, չեն կարող միատեսակ ըմբռնումներ զոյութիւն ունենալ: Ղազարեանը խորհրդային

Հայաստանում միջին հիմա ընդունուած՝ արեւմտահայ երբեմնի երեք հոսանքի փոխարէն՝ տարբերակում է չորս հոսանք, այսինքն՝ կղերա-ամիրայական, քաղաքնի-ազատական, ազատ-յիմարկանոցական եւ ազգային - դեմոկրատական: Այսպիսի տարբերակումներն, անշուշտ, միշտ էլ պայմանական պէտք է համարել, քանզի գրանց, փաստերից անկախ, զուտ հեղինակային աշխարհայեացքի, ելակէտի, ժողովրդան արդեւոր են: Մենք ընաւ չենք պնդում, թէ Ղազարեանը որեւէ մեւով մեղանշում է նշմարութեան գծով, բայց դիտենք, որ գրքի այդ դրսին է հնց, որ կարող է սահման շատ վէճերի առիթ տալ, որովհետեւ մէկը թերեւս իր անանկեղծից շորտը ստաի հասցնի, իսկ մէկ ուրիշն էլ՝ ոչ մի բազկացուցիչ հոսանք չտեսնի, մանաւանդ երբ ականքները աւանդաբար վարժուած չեն զգոտահարգի, «հոսանք», «ուղղութիւն» արտայայտութիւնները իրենց իսկութեամբ ընկալելու:

Եւ այսպէս, Երեւանում ապուից մի ուշադրու պատմագիտական աշխատութիւն՝ Արեւմտահայաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական զարգացումը 1800-1870 թուականներին վերաբարով, որը պատկանում է երկաստարդ դեմոկրատական Հայկ Ղազարեանի գրչին: Մենք ցանկացանք շնթերցողի ուշադրութիւնը հրուելի այդ գրքի վրայ, անկ որոշ խորհրդածութիւններ եւ մեր մայրը գումարի նրանց մայրին, ովքեր անկեղծորէն հաւատում են, որ Ղազարեանը շաւղործ է կատարել, շնորհակալութեան արժանի գործ: Նման գործերի գոյութիւնն իսկ պերճախոս վկայութիւն է, որ չի կարելի մշտապէս փակել մի ամբողջ ստեղծագործ ժողովրդի բերան, չի կարելի կենդանի ժողովրդի որսից հիմնովին հանել կենսական ազատութեան եւ ուղեցոյց նշմարութեան սէրը, մարել իր արժանիքներին դիտակից հզարութեան զգացումը, խորտակել բարբարոսների կամքին չհպատակելու քնատուր ոգին: Ղազարեանի աշխատութիւնը, - որքան էլ ջանակը խուսափել պաթտուից՝ այսպիսի գէպերում, վերջ ի վերջոյ, ստիճ ինչ պաթտ է դառնում, - հաշտուողականութեան, գիտնաբարչութեան, աճն ինչ ծափաւորելու գրուելի սովորութեան մերժումն է, սիրոյ եւ խղճի գործ, կորովի եւ հոգեւոր խոյանցի արտայայտութիւն: Ուստի տեղին է յանձնարարել՝ «կարգացէք եւ տարածեցէք»:

Լ. Մ.



ԱՐՍԵՆ ԵՐԿԱԹԻ
50-ԱՄԵԱՅ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԼՈՒԹԵԱՆ
ՅՈՒՆԵՍԿՈՎՈՅ ԳԱՆՁՆԱԽՈՒՄԻ

DETROIT COMMITTEE FOR
THE ARSEN YERGAT LITERARY JUBILEE
19300 Ford Road
Dearborn, Michigan 48128

Armenian Educational Found'n.
Armenian Relief Society
Armenian Revolutionary Fed'n

Armenian Youth Cultural Assoc'n.
Armenian Youth Federation
St. Sarkis Apostolic Church



Շարք, 28 Գեկտեմբեր 1968
Տիբրայիթ

Խմբագրութիւն՝ «Մազին» Ամսագրի,

Տիբրայիթարեան կամուրջ մեծ խանդավառութեամբ ամենեւէ ի վեր ձեռնարկած է բաւան աշխատանքի՝ յառաջիկայ 28 Փետրուար 1968-ին, արժանավայել ձեւով տօնելու հանրաձայն թանաքով, վաստակաւոր զօրքիչ հայ զպրտութեան՝ Արսէն Երկաթի 50-ամեայ դրական զործանելութիւնը:

Արդէն իսկ կազմուած է մասյուն մարմին մը եւ յարակից յանձնարարներ այս յարգանքն սրբազան տուրքը փառաւորապէս արժեցնելու:

Որպէս հայապահպանման ազգակ եւ Ազգային Մշակոյթի ուսուցիչներ, որքն իմաստով եւ զանք ինչքի ձեզմէ որ մեր Թերթերու կարեւոր սինակներուն մէջ անդրազատաւ Արսէն Երկաթի կեանքի ու րեզուն զործանելութեան մասին: Մեր անդրազարմաւը մեծ կարեւորութիւն ունի ձեռնարկի յաջողութեան եւ այլ վայրերու մէջ եւս շարունակելու համար ծնունդ տան յարգանքի այս վեճ զորքը:

Տարիներու մեր աքնաջան աշխատանքն ու երազը եղած է հայութիւնը աւելի մտնելի Գիր-Գրականութեան, մեր հարուստ պատմութեան, մէկ խորով՝ Մշակոյթին:

Եւ ահա, այսօր, Տիբրայիթարեանութիւնը ոտքի կը կանգնի իր համեստ ուժերով մէկ մարդու պէս, երաշխաւորելու որ մեր մայրը արժանազատ է մեր հողիներուն մէջ: Մեզ ոչ միայն կը սիրենք հայ զրտկանութիւնը ու կը հետեւինք անոր՝ այլեւ պատրաստ ենք ամեն զնով պանծացնելու հայ զրտկան շրջանը:

Վստահ ենք՝ մեր համեստ կարողութիւններուն պիտի զան ընկերանայ մեր զրիները: յարգանքի այս արժանավայել տուրքը իրքեւ դաժնեպատի զտեղիլու մեր ալեհեր թանաքով Արսէն Երկաթի զիտուն:

Կանխայայտ շնորհակալութեամբ՝
Թարաթերական Յանձնարար
Պարտուղար՝ ՅՈՒՆԵՍԿՈՎ ՄԱՆՈՒՄԻ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

Թիի՛րն Ո՛ր Թե՛րին (լեզուական նշմարներ), Բ. Թաշեան, Պէյրուք, 1968

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ 8 ԵՐԻՏՅԱՍԱՐԴ ԱՐՁԱԿԱԳԻՐՆԵՐ, Խմբագրեց՝ Թ. Թորանեան, Պէյրուք, 1969

ԿԵԱՆՔԻ ԿԱՐՕՏՈՎ (պատմաածիներ), Արամ Մեփիսեան, Պէյրուք, 1969

ԱՆԱՐԱՑՐԻ ԴԻԻՑԱԶՆԱՄԱՐՏԸ (թատրերգութիւն), Խորէն Այվազեան, Պէյրուք, 1968

ՏԱՐԻՑԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

ԼԻՒԱՆԱՆ 22 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱԼՄԱՆ 8 ՏՈՒՐ
ՀԱՏԱՎԱՅԱՌ 2 Լ. ՈՍԿԻ .



Վարչապետի հարկ-

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban